



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝ 2025 Թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

Հաստատել և, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում հրապարակել **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ:**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

13 փետրվարի 2026 թվականի
ՍԴԱՌ-18

Հավելված 1

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի ՍԴԱՌ-18

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՄԲ



Հավելված 1

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի ՍԴԱՈ-18

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՄԲ

Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆԴՈՒՆԱԾ


ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025 թվականին Սահմանադրական դատարան է մուտքագրվել 182 դիմում: Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումների փաստացի պատկերը՝ ըստ դիմող սուբյեկտների, հետևյալն է.


1. պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդ - 3 դիմում,
2. Կառավարություն - 33 դիմում,
3. Մարդու իրավունքների պաշտպան - 1 դիմում,
4. Ֆիզիկական և իրավաբանական անձինք - 137 դիմում,
5. դատարաններ - 7 դիմում
6. Տեղական ինքնակառավարման մարմինները - 1 դիմում:

2025 թվականին Սահմանադրական դատարանը կայացրել է 316 որոշում, որից 45-ը՝ ըստ էության որոշում, 201-ը՝ աշխատակարգային որոշում, 70-ը՝ դատական կազմի որոշում:

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐ



2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ



I. ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ **ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

**Պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումների
հիման վրա ընդունված Սահմանադրական դատարանի որոշումները**

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի կողմից 2025 թվականին Սահմանադրական դատարան է ներկայացվել 3 դիմում, որից 1-ի քննությունը մերժվել է՝ «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 276-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով, 1-ով գործի վարույթը կարճվել է, այն է՝ «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի և 12.06.2024 թ. ընդունված՝ փաստաբանական ծառայություն մատուցողների հարկման ռեժիմի վերանայման մասով «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-285-Ն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը, իսկ 1-ով՝ «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի, 27-րդ հոդվածի 2.1-ին և 2.2-րդ մասերի, 52-րդ հոդվածի, 52.1-ին հոդվածի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունվել է քննության և փոխանցվել 2026 թվական:

2025 թվական է փոխանցվել նաև նախորդ տարիներին Սահմանադրական դատարան ներկայացված և գործի վարույթը կասեցված 1 դիմում, այն է՝ «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի կողմից ներկայացված դիմումների հիման վրա **2025 թվականի ընթացքում** Սահմանադրական դատարանում քննության առնված 1 գործով Սահմանադրական դատարանը կայացրել է ներքոգրյալ որոշումը.

1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1776** որոշմամբ 2025 թվականի ապրիլի 16-ին որոշել է.

«1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերը՝ նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակցության մեջ, համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա բռնագանձման ենթակա է այն գույքը, որը ձեռք է բերվել համապատասխան պաշտոնատար անձի՝ պաշտոնն ստանձնելու պահից հետո:

2. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերը՝ նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակցության մեջ, համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ բռնագանձման ենթակա է այն գույքը, որը կապ ունի համապատասխան հանցանքի հետ:

3. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Դիմողի կողմից վիճարկվող մնացած դրույթները դրանց վերաբերյալ ներկայացված հիմնավորում-

ների շրջանակում Սահմանադրությանը համապատասխանության վերացական ստուգման արդյունքներով համապատասխանում են Սահմանադրությանը»:

Խնդրո առարկա որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է.

I. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՃԻ ՇՐՋԱՆԱԿԸ

- «**26.** (...) անհատական դիմումներով նույն հարցերը Սահմանադրական դատարանի կողմից քննվելու դեպքում դրանց նկատմամբ հետագայում ընդունելիության և հնարավոր ըստ էության որոշումների կայացման բարձր շեմից խուսափելու նպատակով սույն սահմանադրական վեճի շրջանակում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ և 17-րդ մասերի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով հարցեր են դիտարկվելու միայն Դիմողի կողմից առաջադրված հիմնավորումների այն սահմաններում, որոնցում քննարկվել են սույն որոշմամբ: Հետևաբար՝ որևէ անհատական դիմումի շրջանակում Օրենքի նույն դրույթի վերաբերյալ այլ բովանդակության իրավական հարց Սահմանադրական դատարանի առջև բարձրացվելու պարագայում անհատական դիմում ներկայացրած անձանց նկատմամբ չի կիրառվելու «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ որոշումների ընդունման կարգը»:

II. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍՈՎ

- «**117.** (...) Սահմանադրական դատարանը շեշտում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը երբևէ չի հանդուրժել կամ թույլատրելի համարել պաշտոնատար անձի կողմից ոչ օրինական ճանապարհով գույքի ձեռքբերումը. այդպիսի գույքի ձեռքբերումը չի կարող ներառվել Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «սեփականություն» հասկացության սահմանադրական բովանդակության ծավալի մեջ»:

- «**136.** (...) Սահմանադրական դատարանը նախ ցանկանում է հստակեցնել, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դրույթները, ըստ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, վերաբերում են այն անձին, որն իր

զբաղեցրած պաշտոնի ուժով ուսումնասիրություն սկսելու պահին «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ սույն որոշման կայացման պահին գործող խմբագրության իմաստով հանդիսանում է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ կամ անձ, որն զբաղեցրել է այդպիսի պաշտոն կամ անձ, որն զբաղեցրել է այդպիսի պաշտոնին համարժեք պաշտոն: Անձը համարվում է համարժեք պաշտոն զբաղեցրած, եթե իր իրականացրած գործառույթներին նույնական կամ նմանատիպ գործառույթներ իրականացնող անձն ուսումնասիրություն սկսելու պահին «Հանրային ծառայության մասին» օրենքի գործող խմբագրության իմաստով հանդիսանում է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ»:

- «**137.** Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք թվարկված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածով, որով պաշտոնատար անձի, որի գույքին կարող են վերաբերել Օրենքով նախատեսված կարգավորումները, կարգավիճակային պարտադիր բաղադրիչը հստակեցված խմբին դասվող պաշտոն զբաղեցնելն է, այլ ոչ՝ առհասարակ հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելը կամ զբաղեցրած լինելը: Պաշտոնատար անձանց այս խմբին դասվում են առավելապես պետական պաշտոն և համայնքային մի շարք պաշտոններ, ինչպես նաև պետական ծառայության առանձին տեսակների բարձրագույն (ղեկավար) և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, այսինքն՝ հանրային ծառայության ղեկավար կազմը, որով և սահմանափակված է այն պաշտոնատար անձանց շրջանակը, որոնք կարող են Օրենքի ազդեցության տիրույթում հայտնվել 1-ին նպատակի շրջանակում»:

- «**148.** (...) Սահմանադրական դատարանը հարկ է համարում հստակեցնել, որ կոռուպցիայի դեմ պայքարի նպատակին անհամապատասխանությունն առաջանում է ոչ թե պաշտոնավարման մեկնարկից առաջ ձեռք բերված գույքի և միջոցների ուսումնասիրմամբ, այլ այդ գույքի բռնագանձման դեպքում, քանի որ Օրենքով նախատեսված ուսումնասիրության առաջնային նպատակը ճանաչողական է այն իմաստով, որ առանց համապատասխան գույքի ձեռքբերման հանգամանքների շուրջ պատշաճ տեղեկացվածության՝ իրավասու մարմինն ի վիճակի չի լինելու արդյունավետորեն կայացնել Օրենքի

13-րդ հոդվածի 1-2-րդ մասերով նախատեսված որոշումները, իսկ հետագայում՝ ձեռնարկել Օրենքի 18-20-րդ հոդվածներով նախատեսված գործողությունները: Հետևաբար՝ իրավասու մարմնի կողմից մինչև պաշտոնավարման մեկնարկն ընկած ժամանակահատվածի ուսումնասիրությունն ինքնին խնդրահարույց չէ, եթե դրա նպատակն անձի գույքային դրության ստուգումն է, օրինակ, պարզելու համար, թե արդյոք նա ունեցել է բավարար միջոցներ արդեն պաշտոնավարման մեկնարկից հետո իր օրինական եկամուտներով գույքի ձեռքբերման համար կամ որևէ այլ՝ Օրենքի նպատակին համահունչ հանգամանքներ պարզելու նպատակով: Սակայն, եթե ընտրված ժամկետը նախորդում է անձի պաշտոնավարման մեկնարկի պահին, այդ ժամանակահատվածում (այսինքն՝ ուսումնասիրության այն ժամանակահատվածը, որը նախորդում է պաշտոնավարման մեկնարկին) Օրենքի իմաստով օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքի հայտնաբերման դեպքում դրա նկատմամբ չի կարող ծագել Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածն այն պատճառաբանությամբ, որ Օրենքով հետապնդվող հանրային շահը հանրային ծառայության համակարգում կոռուպցիայի դեմ պայքարն է՝ դրա կանխարգելման միջոցով: Հետևաբար՝ որպես բռնագանձման ենթակա գույք պետք է դիտարկվի բացառապես Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով այն գույքը, որը ձեռք է բերվել Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի իմաստով պաշտոնի ստանձնման պահից հետո, քանի որ մինչ այդ ձեռք բերված գույքի բռնագանձումը դուրս է հանրային իշխանության համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակից:

- «**161.** (...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ հանցանքից տնտեսական օգուտ ստանալու հանգամանքի հիմնավորման համար քրեական դատավարությունում գույքի բռնագանձման նպատակով կիրառվող ապացուցողական շեմը կիրառելի չէ Օրենքով նախատեսված ընթացակարգերով գույքի բռնագանձման համար: Այսինքն՝ պատասխանողի գույքի՝ Օրենքի համաձայն բռնագանձման մասին եզրահանգման համար անհրաժեշտ չէ, որ այն հիմնված լինի հանցանքի հետ այնպիսի պատճառահետևանքային կապի վրա, որի առկայությունը պետք է հաստատված լինի «հիմնավոր

կասկածից անդին» ապացուցողական շեմի բավարարմամբ, որովհետև Օրենքով նախատեսված ընթացակարգի նպատակը չէ հանցավոր վարքագծի հաստատումը քրեական իրավունքի նպատակների համար, այլ՝ որոշ հավաստիությամբ ցույց տալը, որ բռնագանձման ենթակա գույքը կարող էր գեներացված լինել հանցավոր վարքագծի արդյունքում (...): Նման պայմաններում Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ Օրենքով նախատեսված կառուցակարգի գործադրմամբ բռնագանձվելիք գույքի՝ հանցանքի հետ կապն անձի դրսևորած վարքագծի պայմաններում որոշակի ողջամիտ հավաստիությամբ խնդրո առարկա գույքի հանցանքի արդյունքում ստացված լինելու հավանականությունն է: Այսինքն՝ (1) քաղաքացիական դատավարության ընթացքում իր գույքի ձեռքբերումն օրինական եկամուտներով հիմնավորելու՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բոլոր ընթացակարգային երաշխիքներն ապահովված լինելու և (2) գույքի նկատմամբ Օրենքով առաջադրվող նվազագույն արժեքային շեմի բավարարվածության պայմաններում, համապատասխան հանցանքից տնտեսական օգուտ ստանալու հնարավորությունն այն հանգամանքն է, որն ամրապնդում է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ անաչառ և տեղեկացված դիտորդի աչքում ավելի հավանական դարձնելով այն, որ գույքը, որի ձեռքբերման օրինականությունը չի հիմնավորվել օրինական եկամուտներով, ունի ապօրինի, քան՝ օրինական ծագում: Արդյունքում՝ պատասխանողի կողմից՝ իր գույքի ձեռքբերման օրինականությունը չհիմնավորելու բացասական հետևանքները կրելը, Օրենքով նախատեսված մյուս պայմանների բավարարված լինելու դեպքում, համաչափ կլինի Սահմանադրության 78-րդ հոդվածի իմաստով»:

III. ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐԳԵԼՔԻՆ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ

- «**185.** Այսպիսով, Սահմանադրական դատարանի գնահատմամբ Օրենքը ոչ թե միջամտում է անցյալում տեղի ունեցած, այլ դրա ընդունումից հետո էլ շարունակվող՝ օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքն անձին պատկանելու դրությանը: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ Օրենքը, միջամտելով

թեև նախկինում սկսված, սակայն դրա ընդունումից հետո շարունակվող և առկա դրությամբ, Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով հետադարձ գործողության հատկանիշ չունի»:

- **«188.** Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը պաշտոնատար անձանցից կամ նրանց հետ փոխկապակցված անձանցից ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առնչությամբ եզրակացնում է, որ Օրենքով ընդամենը կարգավորվում է օրինական ծագում չունեցող գույքը վերջիններիս պատկանելու ոլորտում գոյություն ունեցող իրավական պահանջների գույքային կողմը՝ նախատեսելով, որ ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձվում է հոգուտ Հայաստանի Հանրապետության»:

IV. ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍՈՎ

- **«206.** Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև Դիմողի այն պնդմանը, որ Օրենքով բացակայում է 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ որոշումը դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը: Օրենքի վերոհիշյալ 7-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «եթե ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ, և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված են, ապա իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված, որը կարող է ներառել բացառապես 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը»:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը կրկին շեշտում է, որ ցանկացած գույք բռնագանձելու պահանջի իրավաչափությունը յուրաքանչյուր գործով հանդիսանում է դատական քննության առարկա (տե՛ս սույն որոշման 202-րդ կետը), որպիսի պայմաններում ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկելու հնարավորության բացակայությունն ինքնին չի խախտում անձի՝ իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը»:

Վ. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍՈՎ

- «**232.** Սահմանադրական դատարանն Օրենքի՝ հետադարձ ուժի սահմանադրական արգելքին համապատասխանության հարցին նվիրված հատվածում արդեն իսկ արձանագրել է, որ սահմանված ապացուցման կանոններն ընդամենը Օրենքով նախատեսված բռնագանձման կառուցակարգի ընթացակարգային կողմի տարրեր են և սահմանում են այն կարգը, որոնցով դատարանը պետք է ղեկավարվի գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները հաստատելիս: Բացի դրանից, օրինական եկամուտներով չհիմնավորվող գույք ձեռք բերելու և որպես սեփականություն ունենալու հնարավորությունը երբևէ չի ճանաչվել Հայաստանի Հանրապետությունում. Օրենքի ընդունմամբ չէ, որ անձինք այլևս չունեն նման գույքի նկատմամբ սեփականության պաշտպանության իրավաչափ ակնկալիք (տե՛ս սույն որոշման 115-116-րդ և 187-189-րդ կետերը): Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը նշում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ընթացակարգային, այն է՝ ապացուցման կանոնների սահմանումն ինքնին նյութաիրավական բովանդակություն չունի»:

- «**239.** Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքով նախատեսված կանխավարկածի սահմանումն ինքնին խնդրահարույց չէ արդար դատաքննության իրավունքի ներքո՝ պատասխանողին այդ կանխավարկածը հերքելու համար քաղաքացիական դատավարության նկատմամբ կիրառելի՝ Սահմանադրությամբ նախատեսված արդար դատաքննության իրավունքից բխող երաշխիքներն ապահովված լինելու պայմանով»:

ՎԻ. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍՈՎ

- «**268.** Սահմանադրական դատարանը գտնում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում իրավաբանական օգնության իրավունքի իրացմանը վերաբերող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթները պետք է մեկնաբանվեն «Փաստաբանության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-2-րդ մասերի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-1119 որոշմամբ

սահմանված՝ իրավաբանական օգնության լիարժեքության սկզբունքի հիման վրա, ինչը, Սահմանադրական դատարանի գնահատմամբ, ապահովում է բավարար երաշխիքներ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքում անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի լիարժեք կենսագործման համար»:

- «**282.** (...) Դիմողի կողմից բարձրացված հարցն առ այն, որ Օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված չէ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ուսումնասիրության փուլում ուսումնասիրության նյութերին ծանոթանալիս և դիրքորոշում ներկայացնելիս շահագրգիռ անձի՝ հանրային պաշտպանի միջոցով (պետական միջոցների հաշվին) իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, կարող է լրիվ և բազմակողմանի քննության առնվել միայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Փաստաբանության մասին» օրենքի սահմանադրականությանը՝ բարձրացված հարցի սահմաններում անդրադարձ կատարվելու դեպքում, ինչը, ելնելով վերը ներկայացված դիրքորոշումներից, սույն դիմումի քննության շրջանակից դուրս է»:

VII. ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՄԱՍՈՎ

- «**312.** Անդրադառնալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին՝ Դիմողը գտնում է, որ ուսումնասիրություն սկսելու համար նախատեսված հիմքերից մեկը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածն ամբողջությամբ գնահատողական դատողություն է: Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ, և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված են, ապա իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված, որը կարող է ներառել բացառապես 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը: Անդրադառնալով ներկայացված դրույթին՝ Դիմողը գտնում է, որ դրանում նշված նախապայմանները ևս իրենց բնույթով գնահատողական են, իսկ Օրենքը չի նախատեսում որևէ օբյեկտիվ չափանիշ: Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ (1) սույն որոշմամբ արտահայտված

դիրքորոշումների ուժով՝ ուսումնասիրության ժամկետների որոշակիացման խնդիրն ուղղակիորեն կապված է այնպիսի օբյեկտիվ չափորոշիչների հետ, ինչպիսիք են պաշտոնատար անձի պաշտոնավարման մեկնարկի պահը (տե՛ս սույն որոշման 146-149-րդ կետերը) կամ այն հանցանքը, որի առնչությամբ գույքի բռնագանձման վարույթ է իրականացվում (տե՛ս սույն որոշման 160-161-րդ կետերը): Այս պայմաններում, համաձայնելով Դիմողի դիրքորոշման հետ՝ Սահմանադրական դատարանը նույնպես արձանագրում է, որ ուսումնասիրության ժամանակահատվածի ընտրությունն իրավասու մարմնի կողմից հայեցողաբար որոշվող հարց է, այդուամենայնիվ չունի այլ նպատակ, քան արդեն իսկ օբյեկտիվորեն կանխորոշված ժամանակահատվածում ձեռք բերված գույքի օրինակաչության ստուգումը: Բացի դրանից, (2) այս պայմաններում ինքնին գնահատողական բնույթի եզրույթներ պարունակելու պատճառով իրավակարգավորումը որոշակիության սահմանադրական պահանջի տեսանկյունից խնդրահարույց համարվել չի կարող, իսկ այդ իրավակարգավորումների որոշակիության ծավալը լրացնելու ու դրանց բովանդակության հավելյալ պարզաբանման առաքելությունը վերապահված է իրավակիրառին: Հետևաբար՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում, 7-րդ հոդվածի 3-րդ մասում ենթադրյալ գնահատողական եզրույթների առկայությունն ինքնին խնդրահարույց չէ, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դրանց բովանդակությունը պետք է և կարող է առավել հստակեցվել իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում»:

VIII. ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ

- «**348.** Սահմանադրական դատարանի գնահատմամբ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված կառուցակարգն ուղղված է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու վերաբերյալ կասկածի առաջացման պայմաններում դրա ծագման օրինակաչության հիմքերի ստուգման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ համապատասխան վերաբերելի տեղեկատվության ստացմանը՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության և հանցագործությունների կանխման կամ բացահայտման

սահմանադրաչափ նպատակներով (նախատեսված Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասով): Այս նպատակները համարժեք են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման միջազգային չափորոշիչներին»:

- «**356.** Ողջ վերոնշյալի հաշվառմամբ՝ հստակ է, որ ուսումնասիրություն սկսելու համապատասխան հիմքերի առկայության դեպքում վերոնշյալ սուբյեկտների վերաբերյալ իրավասու մարմնի կողմից, Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին համապատասխան, կարող են հավաքվել օրենքով սահմանված գաղտնիք պարունակող անձնական տվյալներ: Հետևաբար՝ Օրենքի դրույթների՝ Դիմողի կողմից վկայակոչված հիմնավորումների սահմաններում վերացական ստուգման արդյունքում Սահմանադրական դատարանը չի գտնում Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջներին անհամապատասխանության որևէ հիմք»:

IX. ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ

- «**394.** (...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու, ինչպես նաև դրան նախորդող՝ նախադատական փուլում ունեցած լիազորությունները Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով դասվում են «պետական շահերի պաշտպանության հայց» ներկայացնելու սահմանադրական լիազորության ներքո՝ հանդիսանալով դրա իրականացման համար անհրաժեշտ լիազորությունների համախումբ: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը Դիմողի կողմից առաջադրված հարցադրումների շրջանակում և Օրենքի համապատասխան դրույթների՝ Դատախազության լիազորություններին վերաբերող մասով սահմանադրականության վերացական ստուգման արդյունքով չի համարում դրանք սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց»:

- «**398.** (...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու և նման որոշման կայացմանը հանգեցրած ուսումնասիրություններ անցկացնելու լիազորությունները բխում են Սահմանադրության

176-րդ հոդվածի 3-րդ մասից, որպիսի եզրահանգման հիմքում ընկած վերը բերված հիմնավորումները հանգում են հետևյալին՝

- Նախ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու՝ Դատախազության լիազորությունն ինքնին նախատեսված է Օրենքի 20-րդ հոդվածով: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերի առկայությունը որպես «բացառիկ դեպք» որակելը և նման հայցի հարուցման կարգի սահմանումը գտնվում են օրենսդրի հայեցողության տիրույթում:

- Երկրորդ՝ ինչ վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման՝ «պետական շահի» առկայության չափորոշիչին համապատասխանության հարցին, ապա պետք է նկատի ունենալ, որ նախ սույն որոշման 104-118-րդ և 119-128-րդ կետերում նկարագրված նպատակները հանրային շահեր են, որոնք հետապնդվում են պետության կողմից և, ուրեմն՝ ձեռք են բերում պետական շահի որակ և, ապա՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով ներկայացված պահանջների բավարարման նյութական շահառուն Հայաստանի Հանրապետությունն է: Այս երկու հանգամանքների համակցությունը բավարար է, որպեսզի այս տեսակի վարույթներով ներկայացված հայցերը դիտարկվեն որպես Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով «պետական շահերի պաշտպանության» հայցեր:

- Երրորդ՝ ինչ վերաբերում է Դիմողի այն պնդմանը, որ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության շրջանակներում Դատախազությանը վերապահված լիազորությունները Սահմանադրությամբ նախատեսված չեն, ապա այդ լիազորությունները հանդիսանում են բացառապես ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հարցի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ լիազորությունների համախումբ և իրականացվում են այդ նպատակով: Ուսումնասիրության շրջանակներում Դատախազությանը վերապահված լիազորությունների իրականացմամբ հետապնդվող արդյունքն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու՝ Օրենքով նախատեսված հիմքերի առկայությանը իրավական գնահատական տալն է»:

- « **403.** (...) Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ մրցակցության սկզբունքի ապահովման իմաստով առաջնային է ոչ այնքան գույքի և դրա օրինականության վերաբերյալ ապացույցների ձեռքբերման վերաբերյալ դատավարության առանձին սուբյեկտների ունեցած լիազորությունների հարաբերակցությունը, որքան նման ապացույցների հասանելիության և գույքի ձեռքբերման վերաբերյալ հիմնավորումների ներկայացման հարցում հավասարությունը: Այս իմաստով Օրենքով նախատեսված գույքի բռնագանձման վարույթներում պատասխանողներն են այն անձինք, որոնց գույքը կամ գույքային շահերը հանդիսանում են վեճի առարկան, և հետևաբար՝ նրանք են, որ ունեն բնական առավելություն՝ այդ գույքի ձեռքբերման վերաբերյալ տվյալների և դրա օրինականության մասին հիմնավորումների ներկայացման առնչությամբ ավելի տեղեկացված դիրք: Վերջապես, նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «դատարանը կարող է կայացնել վճիռ՝ հիմք ընդունելով գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, եթե գործի քննության արդյունքում հայցվորն ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը, այդ թվում՝ մեկ միավոր գույքը, մի քանի միավոր գույքը կամ մեկ միավոր գույքի բաժինը, չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով»»:

- «**407.** (...) Դիմողի այն պնդման առթիվ, որ Օրենքը չի երաշխավորում Դատախազության անկախության և անաչառության բավարար աստիճան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում, Սահմանադրական դատարանը նկատում է, որ նշված պնդումը չի կարող ներկայացված հիմնավորումների շրջանակում վիճարկվող Օրենքի կամ դրա որևէ դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ դատողության հիմք ծառայել, քանի որ՝ (1) Դատախազությունն ինքնին չունի խնդրո առարկա գույքից օգտվելու իրավունքին միջամտող որևէ վերջնական որոշում կայացնելու իրավասություն, որը վերապահված է բացառապես դատարանին՝ մրցակցային դատավարության արդյունքում կայացված ակտով, (2) գլխավոր դատախազի վերադասությունը կամ դատախազության միասնական համակարգի բնույթը դատախազին ընդհանրապես, իսկ սույն սահմանադրական վեճին վերաբերելի դեպքերում՝ Օրենքի նպատակների համար չի

ազատում «Դատախազության մասին» օրենքով պահանջվող անաչառության և անկախության երաշխիքների և, միաժամանակ, պահանջների ազդեցությունից, և (3) Օրենքի նպատակը և կարգավորման առարկան Դատախազության գործունեությանն առաջադրվող պահանջների նյութական և ընթացակարգային իրավական կառուցակարգերի սահմանումը չէ, իսկ Դիմողի կողմից չի վիճարկվում նման կառուցակարգեր սահմանող իրավական ակտերի, մասնավորապես՝ «Դատախազության մասին» օրենքի՝ իբրև Դատախազության կազմավորումը և գործունեությունը կանոնակարգող ոլորտային միասնական օրենքի, ինչպես և քաղաքացիական, վարչական կամ քրեական դատավարության օրենսգրքերի՝ իբրև արդարադատության համապատասխան ոլորտները կարգավորող և դատախազական գործառույթների իրացման միասնական դատավարական ձև սահմանող ճյուղային օրենքների որևէ դրույթ, որի սահմանադրականության հարցը կարող էր բովանդակային քննության առարկա դառնալ միայն դրա վիճարկման դեպքում»:

Կառավարության դիմումների հիման վրա ընդունված՝ Սահմանադրական դատարանի որոշումները

Միջազգային պայմանագրերով ստանձնված պարտավորությունների սահմանադրականության հարցով 2025 թվականին Կառավարության կողմից Սահմանադրական դատարան է ներկայացվել 33 դիմում:

Վերոհիշյալ 33 դիմումներից յոթ (7) գործով դատաքննությունը կսկսվի 2026 թվականին:

Կառավարության կողմից Սահմանադրական դատարան ներկայացված միջազգային պայմանագրերով ստանձնված պարտավորությունների սահմանադրականության հարցով դիմումների հիման վրա Սահմանադրական դատարանը 2025 թվականին կայացրել է 27 որոշում: Նշված 27 գործերից մեկ (1) գործով դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականին:

2025 թվականին մուտքագրված 33 միջազգային պայմանագրերից 13-ը բազմակողմ են, 20-ը՝ երկկողմ, որոնցից 9-ը՝ վարկային:

Սահմանադրական դատարանի կողմից 2025 թվականին և՛ բանավոր, և՛ գրավոր ընթացակարգերով քննության առնված 27 միջազգային պայմանագրերից 2025 թվականի ընթացքում վավերացվել են 23-ը:

Քննության առնված միջազգային պայմանագրերով ընդունված որոշումներով Սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշումներ, կատարել է մի շարք արձանագրումներ, փաստարկումներ, մասնավորապես.

1. ««Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2025 թվականի հուլիսի 16-ին ստորագրված «Հայաստան - Դիմակայուն Սյունիք ծրագիր» ԿԶԵՀ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» բանավոր ընթացակարգով քննված գործով Սահմանադրական դատարանն իր՝ 2025 թվականի նոյեմբերի 17-ի ՍԴՈ-1804 որոշմամբ արձանագրել է.

«11. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ սույն գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում Պայմանագրի հայերեն պաշտոնական թարգմանության և դրա բնօրինակ տեքստերի միջև ի հայտ էին եկել տասնյակ անճշտություններ, թարգմանչական էական, բովանդակային անհամապատասխանություններ, մտքի սխալներ: Գործով զեկուցող դատավորը սույն գործով դիմողից՝ 10.10.2025 թ., ապա դիմողի ներկայացուցչից՝ 20.10.2025 թ. պահանջել է մեկամսյա ժամկետում Սահմանադրական դատարանին ներկայացնել Պայմանագրի հայերեն՝ ամբողջովին նոր թարգմանությամբ տեքստը: 2025 թվականի նոյեմբերի 3-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Պայմանագրի հայերեն պաշտոնական թարգմանության ճշգրտված տարբերակը, որի ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ անհամապատասխանություններն ամբողջությամբ վերացված չեն:

Սահմանադրական դատարանը գտնում է՝ թեև թարգմանչական անհամապատասխանություններն ու անճշտությունները բովանդակային առումով խնդիր չեն հարուցում

Պայմանագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության բացահայտման տեսանկյունից, այդուհանդերձ, կարող են որոշակի խնդիրներ առաջացնել Պայմանագրի մեկնաբանման և կիրառման ներպետական գործընթացներում»:

2. «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Կենսունակության բարելավման և հզորացման համար բնակարանային բարեփոխումներ» (THRIVE) ծրագրի վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» բանավոր ընթացակարգով քննված գործով Սահմանադրական դատարանն իր՝ 2025 թվականի դեկտեմբերի 5-ի ՍԴՈ-1805 որոշմամբ փաստել է.

«11. Վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական տեքստի և անգլերեն բնօրինակի միջև առկա են որոշ անհամապատասխանություններ և թերություններ, (մասնավորապես՝ Համաձայնագրի I հոդվածի 1.02 բաժնի «գ» կետում հղում է կատարվում Վարկային համաձայնագրի 4-րդ հավելվածի 2-րդ աղբյրին, սակայն պետք է լինի 2-րդ պարբերություն, II հոդվածի 2.01 բաժնի «գ» ենթաբաժնում հղում է կատարվում նույն բաժնի «բ» ենթաբաժնին՝ նշելով «ներքոհիշյալ «բ» ենթաբաժնում» բառակապակցությունը, մինչդեռ պետք է լինի «վերոհիշյալ «բ» ենթաբաժնում» բառակապակցությունը, Հավելված 4-ը նշված է որպես «Ժամանակացույց 4»), որոնք թեև Վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության բացահայտման համատեքստում բովանդակային առումով խնդիրներ չեն հարուցում, այդուհանդերձ, կարող են խնդրահարույց լինել Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման ընթացքում:

Սահմանադրական դատարանը նաև փաստում է, որ Վարկային համաձայնագրի վավերացման նպատակահարմարության հարցը Կառավարության և Ազգային ժողովի իրավասության տիրույթում է:

12. Սահմանադրական դատարանը կարևորում է վարկային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև այդ համատեքստում պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը»:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա ընդունված՝ Սահմանադրական դատարանի որոշումները

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2025 թվականին Սահմանադրական դատարան է ներկայացվել 1 դիմում, այն է՝ *«Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման հավելված 1-ի 51-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ»*, որի ընդունելիության հարցը փոխանցվել է 2026 թվական:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված դիմումների հիման վրա **2025 թվականի ընթացքում** Սահմանադրական դատարանում քննության առնված 2 գործով (Սահմանադրական դատարան են մուտքագրվել 2024 թվականին) Սահմանադրական դատարանը կայացրել է ներքոգրյալ որոշումները.

«Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի «Դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տրամադրվող տեղեկանքի ձևը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանք տրամադրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի N 1184-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 685-Ն որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի սեպտեմբերի 27-ին) Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1796** որոշմամբ 2025 թվականի սեպտեմբերի 16-ին որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի մայիսի 30-ի «Դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական

արարների և հիվանդությունների բացակայության մասին տրամադրվող տեղեկանքի ձևը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արարների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանք տրամադրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի N 1184-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 685-Ն որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերն այնքանով, որքանով դրանցով սահմանվում է երկու ականջի կայուն լրիվ խլությամբ կամ խուլիամրությամբ ու երկու աչքերի (բինոկուլյար) կուրությամբ տառապող անձանց համար դատավորի պաշտոնում նշանակվելու բացարձակ արգելք՝ ճանաչել Սահմանադրության 49 և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

ՍԴՈ-1796 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավորի պաշտոնին նշանակվելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկը Կառավարության որոշմամբ սահմանելն ինքնին սահմանադրաչափ է:

«49. Անդրադառնալով քննարկվող իրավակարգավորումների հետապնդած նպատակի սահմանադրաչափությանը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ առողջական վիճակով պայմանավորված՝ աշխատանքային (ծառայողական) սահմանափակումներն ինքնին սահմանադրականության խնդիր չեն հարուցում այնքանով, որքանով հետապնդում են տվյալ պաշտոնով (հաստիքով) նախատեսված գործառույթները պատշաճ և արդյունավետ կատարելու նպատակ: Վերջինս առավել ակնառու է հանրային ծառայության պարագայում, որն ուղղված է հանրային իշխանության մարմինների սահմանադրաիրավական գործառույթների իրացմանը: Այլ կերպ, *inter alia*, հանրային ծառայության արհեստավարժությունից և արդյունավետությունից է կախված, ընդհանրապես, Սահմանադրության 1-ին անփոփոխ հոդվածով սահմանված որակներին համապատասխանող պետության գործառման արդյունավետությունն ու կայունությունը:

50. Այլ հավասար պայմանների դեպքում հիվանդությունը կամ հիվանդագին վիճակը կարող է հանգեցնել ծառայողական պարտականությունների կատարման անհաղթահարելի դժվարությունների՝ վտանգելով տվյալ պետաիշխանական գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացումը:

51. Սույն համատեքստում Սահմանադրական դատարանը նկատում է, որ հանրային ծառայության անցնելու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի իրացմանն ուղղված այլ իրավական ակտերով սահմանված պահանջները պետք է լինեն ողջամիտ և չհանգեցնեն հանրային ծառայության անցնելու իրավունքի էության խախտման»:

Խնդրո առարկա որոշմամբ Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ դատավորի պաշտոնում նշանակման գործընթացում հատվում են հանրային բնույթի երկու շահեր՝ իրավաչափ, արհեստավարժ և արդյունավետ արդարադատության իրականացումն ու դատավորի պաշտոնին հավակնելու իրավունքի ներառականության անհրաժեշտությունն այն առումով, որ դատավորի պաշտոնի թեկնածուին առաջադրվող կրթական, աշխատանքային փորձի և բարեվարքության չափանիշներին համապատասխանող յուրաքանչյուր անձ հնարավորություն պետք է ունենա մասնակցելու և հաղթելու դատավորի թափուր պաշտոնի համար մրցույթում՝ հնարավորինս նվազեցնելով առողջական խնդիրների պատճառով մրցույթին չթույլատրելու իրավական հիմքերը: Սահմանադրական դատարանը կարևորել է նշյալ զուգամիտվող շահերը և գտել, որ սույն դիմումի շրջանակում իրականացվող վերացական վերահսկողության առարկա սահմանադրաիրավական վեճը ենթակա է լուծման մրցակցող շահերի հավասարակշռման հիման վրա: Այլ կերպ՝ մատչելի և արժանիքահեն հանրային ծառայությունը ենթադրում է որոշում կայացնող սուբյեկտների կողմից պաշտոնի հավակնորդի կրթական, մասնագիտական և բարեվարքության որակների առաջնահերթ արժևորումը՝ ողջամտության և համարժեքության շրջանակում նվազեցնելով առողջական պատճառների վկայակոչումը որպես հանրային ծառայության բացարձակ արգելքներ:

Սահմանադրական դատարանը գտել է, որ երկու ականջի կայուն լրիվ խլությամբ կամ խուլիամրությամբ ու երկու աչքերի (բինոկուլյար) կուրությամբ տառապող անձանց համար դատավորի պաշտոնում նշանակվելու բացարձակ արգելքի սահմանումը հետապնդվող սահմանադրաչափ նպատակին հասնելու համար անհրաժեշտ միջոց չէ: Հետևապես՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերով սահմանված՝ հանրային ծառայության անցնելու սահմանադրական

իրավունքին կատարվող միջամտությունը չի համապատասխանում Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արժևորել է Սահմանադրության 4-րդ հոդվածով սահմանված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքով պայմանավորված՝ իրավասու մարմինների գործառության ինքնուրույնությունը և այդ համատեքստում Սահմանադրական դատարանի վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո՝ սահմանադրաչափ է համարում վերոքննարկյալ հիվանդություններով (վիճակներով) տառապող հավակնորդների նկատմամբ անհատական մոտեցում սահմանելիս ողջամիտ հայեցողության դրսևորման իրավագործությունը:

2. «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի հունիսի 10-ին) Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1775** որոշմամբ 2025 թվականի ապրիլի 1-ին որոշել է.

«1. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը՝ մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի իրացման տարիքային սահմանափակում նախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր»:

ՍԴՈ-1775 որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է. «(...) օրենսդիրը մարդու վերարտադրողական առողջությունը բնորոշել է որպես երեք փոխկապակցված բաղադրիչների լիակատար բարեկեցության վիճակ, որը պայմանավորում է վերարտադրողական գործառույթի բնականոն իրացումն ու դրա հետ կապված բնականոն կենսաբանական գործընթացները: Ընդ որում՝ ինչպես պարզորոշվում է քննարկվող օրինադրույթի բովանդակությունից, օրենսդիրը վերարտադրողական առողջությունը պայմա-

նավորող գործոնների շարքում տարիքը չի նշել, ինչից հետևում է, որ Օրենքի կարգավորման առարկայի և նպատակի իմաստով վերարտադրողական առողջության լիարժեքությունը ենթակա է գնահատման մարդու ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցության տեսանկյունից, որտեղ տարիքը ոչ թե վերարտադրողական առողջության վիճակը կանխորոշող, այլ ընդամենը ուշադրության արժանի գործոն է՝ ի թիվս մարդու հոգեֆիզիոլոգիական և սոցիալական վիճակի վրա ազդող այլ գործոնների:

Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տարիքով պայմանավորված՝ վերարտադրողականության վրա ազդող հնարավոր ֆիզիոլոգիական փոփոխություններն իրենց բնույթով բացարձակ և անվերապահ չեն, հետևաբար՝ *a priori* բոլորին բնորոշ չեն և յուրաքանչյուր դեպքում ենթակա են մասնագիտական առանձին գնահատման:

Վերոնշյալի հետ մեկտեղ՝ հնարավոր ֆիզիոլոգիական պատճառներով պայմանավորված ռիսկերն արդյունավետորեն կառավարելու նպատակով սահմանված է համապատասխան օրենսդրական կառուցակարգ՝ Կառավարության 2013 թվականի մարտի 7-ի «Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանելու մասին» № 214-Ն որոշումը, որով նախատեսված են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հակացուցումները, դրանց ախտորոշման կարգը և համապատասխան վարչարարությունը: Սրանով ինստիտուցիոնալ հիմքեր են ստեղծվում, այդ թվում՝ տարիքով պայմանավորված՝ այն ֆիզիոլոգիական խնդիրների բացահայտման համար, որոնք անհամատեղելի են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հետ, ըստ այդմ՝ նման խնդիրների առկայության դեպքերում կանխելով «արհեստական» ճանապարհով վերարտադրողականությունը: Միաժամանակ, եթե մարդը չունի հակացուցումներ, ապա տարիքը, ինքնին, «արհեստական» ճանապարհով վերարտադրողականության համար սահմանադրաչափ սահմանափակում լինել չի կարող»:

Սահմանադրական դատարանը գտել է, որ մարդուն վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի տարիքային սահմանափակումը՝ որպես միջա-

մտություն մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքին, չի հետապնդում սահմանադրաչափ նպատակ, հետևաբար՝ չի համապատասխանում Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված՝ իրավասահմանափակման համաչափության սկզբունքին:

Անհատական (ֆիզիկական և իրավաբանական անձանց) դիմումների հիման վրա ընդունված՝ Սահմանադրական դատարանի որոշումները

2025 թվականին ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից Սահմանադրական դատարան են մուտքագրվել ընդհանուր առմամբ 137 դիմումներ, որոնցից 103-ը՝ ֆիզիկական անձանցից, իսկ 34-ը՝ իրավաբանական անձանցից:

2025 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված անհատական դիմումներից 15-ը չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24 և 25-րդ հոդվածներով դիմումին ներկայացվող պահանջներին և Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից վերադարձվել են դիմողներին:

Վերոնշյալ 15 դիմումներից 11-ը համապատասխանեցվել են «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24 և 25-րդ հոդվածներով դիմումին ներկայացվող պահանջներին և վերստին ներկայացվել են Սահմանադրական դատարան, 1-ը կրկին ներկայացվել է Սահմանադրական դատարան, սակայն համապատասխանեցված չի եղել դիմումին ներկայացվող պահանջներին, ինչի հետևանքով Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից վերադարձվել է դիմողին, 1-ը կրկին չի ներկայացվել դատարան և վերադարձվել է դիմողին, 2-ը Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից դիմողին վերադարձվելուց հետո՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, վերստին չեն ներկայացվել Սահմանադրական դատարան:

Միաժամանակ, 2024 թվականի դեկտեմբեր ամսին Սահմանադրական դատարան մուտքագրված 1 անհատական դիմում, որը չէր համապատասխանել «Սահմանադրական

դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24 և 25-րդ հոդվածներով դիմումին ներկայացվող պահանջներին և դեռևս 2024 թվականի դեկտեմբերին Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից վերադարձվել էր դիմողին, 2025 թվականին համապատասխանեցվել է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի վերոնշյալ հոդվածներով դիմումին ներկայացվող պահանջներին և վերստին ներկայացվել է Սահմանադրական դատարան:

Այսպիսով, Սահմանադրական դատարանի դատական կազմերը ստացել են 2025 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված 133 դիմումներ (ֆիզիկական և իրավաբանական անձանց), ինչպես նաև 2024 թվականի դեկտեմբերին Սահմանադրական դատարան մուտքագրված վերոնշյալ դիմումը:

2025 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված 133 անհատական դիմումների կապակցությամբ դատական կազմերի որոշումներով քննության են ընդունվել 6 անհատական դիմումներ, մերժվել՝ 61-ը:

Բացի դրանից, 2025 թվականին Սահմանադրական դատարանի դատական կազմի կողմից քննվել և որոշում է կայացվել ինչպես վերոնշյալ՝ 2024 թվականի դեկտեմբերին Սահմանադրական դատարան մուտքագրված, սակայն միայն 2025 թվականին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24 և 25-րդ հոդվածներով դիմումին ներկայացվող պահանջներին համապատասխանեցված և վերստին Սահմանադրական դատարան ներկայացված անհատական դիմումի, այնպես էլ 2024 թվականի դեկտեմբերին Սահմանադրական դատարան մուտքագրված ևս 1 անհատական դիմումի ընդունելիության հարցի կապակցությամբ, այսպես՝ 13.01.2025 թ. ՍԴԴԿՈ-1 և 21.01.2025 թ. ՍԴԴԿՈ-5 դատական կազմի որոշումներով նշված անհատական դիմումներով գործերի քննությունները մերժվել են:

Դատական կազմի կողմից քննության է առնվել նաև անհատական դիմումը վերադարձնելու դեմ ներկայացված 1 բողոք, որը մերժվել է դատական կազմի 10.10.2025 թ. ՍԴԴԿՈ-56 որոշմամբ:

2025 թվականի դեկտեմբերին Սահմանադրական դատարան մուտքագրված 6

անհատական դիմումի ընդունելիության հարցի քննությունը փոխանցվել է 2026 թվական:

2025 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված 60 անհատական դիմումների, ինչպես նաև 2024 թվականի դեկտեմբերին Սահմանադրական դատարան մուտքագրված 2 անհատական դիմումների ընդունելիության հարցը փոխադրվել է Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստ: Նշված 60 դիմումներից 10-ը Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով ընդունվել են քննության, 50-ը՝ մերժվել: Միաժամանակ, 21.01.2025 թ. ՍԴԱՈ-5 և 21.01.2025 թ. ՍԴԱՈ-10 աշխատակարգային որոշումներով մերժվել է 2024 թվականի դեկտեմբերին Սահմանադրական դատարան մուտքագրված վերոնշյալ անհատական դիմումներով գործերի քննությունը:

Այսինքն՝ 2025 թվականի ընթացքում Սահմանադրական դատարանի կողմից ընդհանուր առմամբ քննության են ընդունվել 16 անհատական դիմումներ:

Սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունված վերոնշյալ 16 անհատական դիմումների հիման վրա 4 գործերի վարույթներ Սահմանադրական դատարանի 10.06.2025 թ. ՍԴԱՈ-93, 08.07.2025 թ. ՍԴԱՈ-109, 09.12.2025 թ. ՍԴԱՈ-183, 09.12.2025թ. ՍԴԱՈ-195 աշխատակարգային որոշումներով կարճվել են, իսկ 3 գործերի վարույթներ Սահմանադրական դատարանի 22.04.2025 թ. ՍԴԱՈ-55, 01.07.2025 թ. ՍԴԱՈ-104 և 11.11.2025 թ. ՍԴԱՈ-152 աշխատակարգային որոշումներով կարճվել են մասամբ (գործերի մյուս՝ չկարճված մասերով վարույթների կապակցությամբ Սահմանադրական դատարանը կայացրել է 22.04.2025 թ. ՍԴՈ-1780, 01.07.2025 թ. ՍԴՈ-1789 և 11.11.2025 թ. ՍԴՈ-1802 որոշումները):

Անհատական դիմումների հիման վրա քննության ընդունված 1 գործի վարույթը կասեցվել է՝ մինչև կասեցման հիմքերը վերանալը (16.12.2025 թ. ՍԴԱՈ-197 աշխատանքային որոշում), 2 գործերի դատաքննությունը նշանակվել է 2026 թվականին (19.12.2025 թ. ՍԴԱՈ-198 և 19.12.2025 թ. ՍԴԱՈ-200 աշխատակարգային որոշումներ), իսկ 1 գործի քննության ժամկետը 2025 թվականին երկարաձգվել, դատաքննությունը հետաձգվել և նշանակվել է 2026 թվականին (17.11.2025 թ. ՍԴԱՈ-163 աշխատակարգային

որոշում):

Միաժամանակ, 2020 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված 1, 2021 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված 1, 2023 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված 1, ինչպես նաև 2024 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված 2 անհատական դիմումների հիման վրա գործերի վարույթների կապակցությամբ Սահմանադրական դատարանը 2025 թվականին կայացրել է համապատասխան որոշումներ, դրանք են՝ Սահմանադրական դատարանի 11.02.2025 թ. ՍԴՈ-1769, 18.03.2025 թ. ՍԴՈ-1773, 20.05.2025 թ. ՍԴՈ-1783, 01.07.2025 թ. ՍԴՈ-1790 և 23.09.2025 թ. ՍԴՈ-1797 որոշումները:

Սահմանադրական դատարանի 05.02.2025 թ. ՍԴԱՈ-18 և 12.05.2025 թ. ՍԴԱՈ-74 աշխատակարգային որոշումներով կարճվել են 2024 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված 2 անհատական դիմումների հիման վրա գործերի վարույթներ, իսկ ևս 2 գործերի վարույթներ Սահմանադրական դատարանի 20.05.2025 թ. ՍԴԱՈ-75 և 01.07.2025 թ. ՍԴԱՈ-105 աշխատակարգային որոշումներով կարճվել են մասամբ (գործերի մյուս՝ չկարճված մասերով վարույթների կապակցությամբ Սահմանադրական դատարանը կայացրել է 20.05.2025 թ. ՍԴՈ-1783 և 01.07.2025 թ. ՍԴՈ-1790 որոշումները):

Բացի դրանից, 2023 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված 4 անհատական դիմումների հիման վրա 3 գործերի վարույթներ Սահմանադրական դատարանի 29.04.2025 թ. ՍԴԱՈ-61, 27.05.2025 թ. ՍԴԱՈ-80 և 21.11.2025 թ. ՍԴԱՈ-171 աշխատակարգային որոշումներով կարճվել են, իսկ 1 գործի վարույթ Սահմանադրական դատարանի 18.03.2025 թ. ՍԴԱՈ-39 աշխատակարգային որոշմամբ կարճվել է մասամբ (գործի մյուս՝ չկարճված մասով վարույթի կապակցությամբ Սահմանադրական դատարանը կայացրել է 18.03.2025 թ. ՍԴՈ-1773 որոշումը): Սահմանադրական դատարանի 11.02.2025 թ. ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ մասամբ կարճվել է նաև 2020 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված 1 անհատական դիմումի հիման վրա գործի վարույթ (գործի մյուս՝ չկարճված մասով վարույթի կապակցությամբ Սահմանադրական դատարանը կայացրել է 11.02.2025 թ. ՍԴՈ-1769 որոշումը):

2025 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված անհատական դիմումների հիման վրա 2025 թվականի ընթացքում Սահմանադրական դատարանում քննության առնված **8** գործերով Սահմանադրական դատարանն ընդունել է հետևյալ որոշումները.

1. «Արթուր Ստեփանյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1780** որոշմամբ 2025 թվականի ապրիլի 22-ին որոշել է.

«1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունը՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս նրա լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումների ընդունման համար այնպիսի կարգավորում նախատեսելու մասով, որի պայմաններում որոշումը կարող է ընդունվել Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի, այսինքն՝ հինգ կողմ ձայներով, ճանաչել Սահմանադրության 49-րդ հոդվածին՝ 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ, 164-րդ հոդվածի 1-ին մասին, 174-րդ հոդվածի 1-3-րդ մասերին, 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և 2-րդ մասին հակասող:

2. Հաշվի առնելով իրավական անվրանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետին, 19-րդ մասին և 69-րդ հոդվածի 13-րդ մասին համապատասխան՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ Սահմանադրական դատարանի սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով՝ դրանում նշված օրենսդրական կարգավորման մասով, Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթի իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2025 թվականի հուլիսի 1-ը՝ հնարավորություն ընձեռելով Ազգային ժողովին այն համապատասխանեցնելու սույն որոշմանը:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

ՍԴՈ-1780 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «(...) այն դեպքում, երբ դատավորի նկատմամբ կիրառվում է «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժը՝ ի հաշիվ վերջինիս իրավասահմանափակիչ ներուժի խիստ ինտենսիվ բնույթի, սահմանափակվում է նրա՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքը: Այլ կերպ՝ կարգապահական տույժերի տեսակներից «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» տույժի կիրառման հետևանքային ազդեցության շրջանակի մեջ ներառվում է նաև հանրային ծառայության անցնելու իրավունքի սահմանափակումը. հետևաբար՝ անհրաժեշտ է, որ նշված կարգապահական տույժի կիրառումը յուրաքանչյուր դեպքում ուղեկցվի ինչպես նյութաիրավական, այնպես էլ ընթացակարգային այնպիսի երաշխիքներով, որոնց առկայությունը կբացառի վերոնշյալ սահմանադրական իրավունքի անհամաչափ սահմանափակման հնարավորությունը:

(...) Նշվածը, ի թիվս այլնի, վերաբերում է նաև Խորհրդի կողմից «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի տեսակի ընտրությամբ և կիրառմամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումներ ընդունելու այնպիսի արդյունավետ ընթացակարգի առկայությանը, որի պայմաններում, մի կողմից, դատավորի լիազորությունների դադարեցումը չի հանգեցնի հանրային ծառայության անցնելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման, մյուս կողմից՝ համապատասխան որոշումը կմարմնավորի Խորհրդի՝ որպես կոլեգիալ մարմնի կարգապահական վարույթի արդյունքում ձևավորած դիրքորոշումը»:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը փաստել է, որ «(...) Օրենսգրքի 94-րդ հոդվածի 5-րդ մասով և 6-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված կարգավորումների գործողության պայմաններում Խորհրդի՝ համապատասխանաբար՝ դատարանակազմական լիազորություններ իրականացնելիս որոշումների ընդունման

համար պահանջվում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ, իսկ Խորհրդի՝ որպես դատարան հանդես գալով լիազորություններն իրականացնելիս որոշումների ընդունման համար՝ նիստին մասնակցող Խորհրդի անդամների ծայների մեծամասնությունը (որպես դատարան հանդես գալու դեպքում Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին (Օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մաս)), **եթե որոշմանը կողմ է քվեարկել Խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը:**

(...) Հաշվի առնելով քննարկման առարկա իրավահարաբերությունների կարևորությունն ու խնդրո առարկա շահերի խոցելիությունը, ինչպես նաև դրանց նկատմամբ հանրային արձագանքի զգայունությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթները պետք է իրականացվեն դատական վարույթներին առաջադրվող սահմանադրաիրավական և դատավարական սկզբունքների խստիվ պահպանմամբ, այդ թվում՝ համապատասխան որոշումների ընդունման ընթացակարգի առնչությամբ, իսկ այդ որոշումների ընդունման ընթացակարգերն ամրագրող իրավակարգավորումները չպետք է լինեն խնդրահարույց՝ անձի, առավել ևս՝ դատավորի կարգավիճակ ունեցող անձի, անհատական իրավունք(ներ)ին միջամտության առումով: Նշվածն առանձնակի կարևորություն է ձեռք բերում կարգապահական վարույթի արդյունքներով «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական փուլի կիրառմամբ, ինչը ենթադրում է ամենաինտենսիվ միջամտություն անձի անհատական իրավունք(ներ)ին, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման ընդունման պայմաններում»:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտել է, որ «(...) Հաշվի առնելով Խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու իր սահմանադրական բացառիկ լիազորության իրականացման շրջանակում «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական փուլի (վերջինիս ընտրությունն ու կիրառումը Խորհրդի, ըստ էության,

օրենսդրական մենաշնորհն է) կիրառմամբ դատավորի լիազորությունները դադարեցնելու հետևանքային ազդեցությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը պետք է նախատեսի այնպիսի կարգավորում, որը, մի կողմից՝ կբացառի Խորհրդի նշված լիազորության իրականացման շրջանակում Օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կարգապահական տույժերի տեսակներից մեկի, առավել ևս՝ «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի կիրառմամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման ընդունման հնարավորությունը՝ բացառապես հինգ դատավորի կամ բացառապես հինգ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների կողմ ձայներով, մյուս կողմից՝ կերաշխավորի վերոնշյալ որոշման ընդունումը Խորհրդի անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ, այսինքն՝ առնվազն վեց կողմ ձայներով, քանզի Խորհուրդը, Սահմանադրության 174-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ կազմված է տասն անդամից: Մինչդեռ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված կարգավորման գործողության ուժով դատավորը կարող է կարգապահական պատասխանատվության ենթարկվել, արդյունքում՝ նրա լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով կարող են դադարեցվել Խորհրդի համապատասխան որոշմանը Խորհրդի հինգ անդամի կողմ քվեարկելու դեպքում: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Խորհրդի՝ տասն անդամից կազմված լինելու վերաբերյալ սահմանադրական դրույթի գործողության պայմաններում Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունում գործածված «խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը» ձևակերպումը չի տեղավորվում «մեծամասնություն» եզրույթի ներքո: Տվյալ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունը վերաբերում է **Խորհրդի՝ որպես դատարան հանդես գալիս** լիազորությունների իրականացմամբ որոշումների ընդունմանը, ինչն ավելի է ընդգծում վերոնշյալ օրենսդրական կարգավորման՝ սահմանադրականության առումով խնդրահարույց լինելը՝ առավել ևս այն պայմաններում, երբ Խորհրդի՝ Օրենսգրքի 94-րդ հոդվածի

5-րդ մասին համապատասխան՝ դատարանակազմական լիազորություններ իրականացնելիս որոշումների ընդունման համար պահանջվում է *Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը*»:

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ «(...) Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված այն կարգավորումը, որին համապատասխան՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Խորհրդի որոշման ընդունման համար սահմանված է ձայների այնպիսի շեմ, ինչպիսին է Խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը, Խորհրդի կողմից դատավորի նկատմամբ «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի կիրառմամբ համապատասխան որոշման՝ Խորհրդի անդամների հինգ կողմ ձայներով ընդունման պայմաններում, հանգեցնում է Խորհրդի որոշման ժողովրդավարական լեգիտիմության բարձր գործակից չապահովելու առումով անձի՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման, հետևաբար՝ համահունչ չէ Սահմանադրության 49-րդ հոդվածին՝ 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ, ինչպես նաև 164-րդ հոդվածի 1-ին մասին, 174-րդ հոդվածի 1-3-րդ մասերին, 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և 2-րդ մասին»:

2. «Արմեն Ավագյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1782** որոշմամբ 2025 թվականի մայիսի 20-ին որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով կայացված եզրափակիչ դատավարական

ակտերը հիմք են նոր երևան եկած հանգամանքի ուժով դատական ակտերը վերանայելու համար:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

ՍԴՈ-1782 որոշմամբ Սահմանադրական դատարանը գտել է, որ «(...) **օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չի կարող դիտարկվել որպես սահմանադրահեն արդարադատության վերջնարդյունք, եթե ողջամիտ կասկածից վեր է, որ ի հայտ է եկել այնպիսի բացառիկ հանգամանք, որը հավաստում է դրա օրինականության, հիմնավորվածության և արդարության պահանջներին համահունչ կայացված չլինելը:** Միևնույն ժամանակ, **անթույլատրելի է սույն կառուցակարգի շղարշով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկումը:** Հետևաբար՝ **և՛ օրենսդիրը՝ համապատասխան իրավակարգավորումներ սահմանելիս, և՛ իրավակիրառը՝ դրանք կյանքի կոչելիս, պետք է առաջնորդվեն հիշատակյալ սահմանադրաիրավական հրամայականներով:**»:

Սահմանադրական դատարանը փաստել է, որ «(...) **գործնականում չեն բացառվում իրավիճակներ, երբ քրեական վարույթի շրջանակներում փաստվեն անձի կողմից ոչ իրավաչափ վարքագծով պայմանավորված այնպիսի հանգամանքներ, որոնք գոյություն են ունեցել գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն (ընդ որում՝ հիշատակված**

պահանջները բավարարելու հարցը յուրաքանչյուր գործով ենթակա է ստուգման և գնահատման իրավասու դատարանի կողմից):

(...) Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե, օրինակ, ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն հանգեցրած՝ իրականությանը չհամապատասխանող գրավոր կամ իրեղեն ապացույցների առկայությունը հավաստվել է նախաքննության մարմնի՝ քրեական վարույթը կարճելու որոշմամբ, ապա այն մեկնաբանությունը, թե նման փաստի հաստատումն **ինքնին բացառում է Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի փաստակազմի համարեքստում դրա գնահատումը, խնդրահարույց է: Ուստի՝ յուրաքանչյուր այդպիսի դեպքում՝** նման որոշման (այդ թվում՝ նախաքննական մարմնի որոշման) առկայության և համապատասխան բողոքի պայմաններում **դատարանների բացառիկ իրավասությունն է գնահատման առարկա դարձնել այդ հանգամանքները՝ Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի փաստակազմի տարրերի համարեքստում՝** ինքնուրույնաբար գնահատելով նաև այն հարցերը, թե՝

1) արդյո՞ք նման որոշմամբ (այդ թվում՝ նախաքննության մարմնի որոշմամբ) փաստվող հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին (բացառելու համար վերանայման այս կառուցակարգի՝ դատական սխալների շտկման վերաքննության և վճռաբեկության կարգով իրականացվող կառուցակարգերի հետ միախառնումը), և

2) արդյո՞ք այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

(...) **Վերոգրյալը հիմք է տալիս Սահմանադրական դատարանին եզրահանգելու, որ մի կողմից՝ քրեադատավարական ընթացակարգերի բացակայությունը, մյուս կողմից՝ Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը, ինքնին բացառում են ենթադրաբար ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն հանգեցրած՝ իրականությանը չհամապատասխանող գրավոր կամ իրեղեն ապացույցների առկայությունը մինչդատական**

վարույթում քննիչի, իրավասու դատախազի համապատասխան որոշմամբ (համապատասխանաբար քրեական վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և այլն) հավաստված լինելու պայմաններում նշված հանգամանքները դիտարկել Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված փաստակազմի լույսի ներքո՝ անձին (քաղաքացիական դատավարության/սնանկության վարույթի համապատասխան մասնակցին) դնելով դատավարական անելանելիության վիճակում»:

Սույն որոշմամբ Սահմանադրական դատարանը նաև հարկ է համարել նկատի ունենալ այն հանգամանքը, որ «(...) **վիճարկվող դրույթն անձի՝ դատական պաշտպանության իրավունքի իրականացման միակ կառուցակարգային հնարավորությունն է, որի արգելափակման պարագայում անձը, ըստ էության, զրկվում է իր հայցած դատական պաշտպանության հնարավորությունից, ինչն անհամապետելի է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի հետ, որի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ է ոչ միայն համապատասխան կազմակերպատիրակական միջոցների ձևական-իրավական առկայությունը, այլ նաև իրավակիրառ հարթությունում դրանց սահմանադրաիրավական առաքելությանը համահունչ ընկալումը, մեկնաբանումն ու կիրառումը:**

(...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական կառուցակարգերին չպետք է տրվի այնպիսի ձևապաշտական մեկնաբանություն, որը կխաթարի արդարադատության իրականացումը. իրավակիրառ մարմնի կողմից նորմի պարզաճ իմաստավորման պարագայում է հնարավոր ապահովել նորմով հետապնդվող սահմանադրական նպատակների անխափան իրացումն ու արդյունավետ դատական պաշտպանության իրական հասանելիությունը»:

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է. «(...) **թեև գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելու հանգամանքն Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսվել է որպես դատական ակտի վերանայման առանձին հիմք, այդուհանդերձ, դա չի բացառում դատական ակտն Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով վերանայելու հնարավորությունը, եթե բողոք**

բերած անձը նշված հիմքով վարույթ հարուցելու պայմաններում ապացուցում է, որ գրավոր կամ իրեղեն ապացույցների՝ իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը գոյություն է ունեցել գործի լուծման պահին, հայտնի չի եղել և չէր կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին և գործի լուծման համար ունի էական նշանակություն, ընդ որում՝ նշված հանգամանքը կարող է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնող անձի կողմից հիմնավորվել նաև նախաքննության մարմնի՝ քրեական վարույթը (քրեական գործի վարույթը) կարճելու մասին որոշմամբ:

(...) դատավճռից բացի, քրեական վարույթի ընթացքում կայացվող այլ եզրափակիչ դատավարական ակտերով հաստատվող փաստերին նոր երևան եկած հանգամանքի կարգավիճակ տալը թույլ է տալիս վերսկսել քաղաքացիական վարույթը և դրա շրջանակներում կայացնել հիմնավորված և պարճառաբանված դատական ակտեր: Ի տարբերություն դատավճռի, սակայն, որով հաստատված փաստական հանգամանքները նախադարձի են քաղաքացիական գործ քննող դատարանի համար և չեն ենթարկվում հետագա ապացուցման, դատավճռից բացի, քրեական վարույթի ընթացքում կայացվող այլ եզրափակիչ ակտերով հաստատվող փաստերը քննվում են քաղաքացիական գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ միասին: Սահմանադրական դատարանի այս դիրքորոշումն ընդամենը չի զրկում դատարանին այդ հնարավորությունից՝ շահագրգիռ կողմի համար ապահովելով ոչ միայն քրեական վարույթի ընթացքում կայացվող այլ եզրափակիչ ակտերով հաստատվող փաստերը, այլ նաև հենց նման ակտերի կայացման փաստը որպես ապացույց դիտարկելը՝ գործով հիմնավորված և պարճառաբանված ակտ կայացնելու համար:

(...) Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ բոլոր դեպքերում վերոնշյալ պայմանների պահպանումը ենթակա է դատարանի կողմից ստուգման և գնահատման՝ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու մասին դիմումը քննելիս՝ հաշվի առնելով նաև վերանայման համար հիմք հանդի-

սացած հանգամանքի նշանակությունը, համապատասխան գործի փաստական հանգամանքները: Այլ կերպ ասած՝ խնդրո առարկա հանգամանքների գոյության բացահայտումը, դրանց՝ օրենսդրական պահանջները բավարարելու հարցի գնահատումն արդեն իրավասու դատարանի իրավասության փիրույթում են:

(...) Սահմանադրական դատարանը կարևոր է համարում շեշտել, որ նախաքննության մարմնի խնդրո առարկա որոշումը չի կարող նույնացվել անձի մեղավորությունը հաստատող դատական ակտի՝ դատավճռի հետ: Այլ կերպ՝ այն չի կարող կրել մեղադրական դատավճռի կայացմամբ ծագող հետևանքներին բնորոշ հատկանիշներ:

(...) Վերոնշյալ հանգամանքները գնահատելիս դատարանը պետք է օգտագործի այնպիսի ձևակերպումներ, որոնք իրենց բովանդակությամբ որևէ կերպ կասկածի տակ չեն դնի, չեն վրանգի և չեն խաթարի Սահմանադրության 66-րդ հոդվածով երաշխավորված անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական բովանդակությունը:

(...) Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ մինչդատական վարույթում քննիչի, իրավասու դատախազի համապատասխան որոշումը (համապատասխանաբար՝ քրեական վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և այլն), որում ամրագրված են քաղաքացիական/սնանկության գործի լուծման համար էական նշանակություն ունեցող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայացման հիմքում ընկած իրականությանը չհամապատասխանող գրավոր կամ իրեղեն ապացույցների առկայությունը վկայող հանգամանքները, որոնք գոյություն են ունեցել փյալ գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին, Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով պետք է դիտարկվեն որպես նոր երևան եկած հանգամանք, եթե որպես այդպիսին ստուգվել և գնահատվել են իրավասու դատարանի

Կողմից»:

3. «Անդրանիկ Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի և 397-րդ հոդվածի 1-ին մասի և դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1789** որոշմամբ 2025 թվականի հուլիսի 1-ին որոշել է.

«1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը և 397-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ ձեռքբերման վաղեմության իրավահարաբերությունների դեպքում դատավարական իրավահաջորդության փաստով չեն կարող փոխանցվել փոխանցման պահին գոյություն չունեցող նյութական իրավունքները և պահանջները:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը և 397-րդ հոդվածի 1-ին մասը Դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:»:

ՍԴՈ-1789 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ «(...) գույք ձեռք բերելու՝ օրենքով թույլատրվող հիմքերից է նաև ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչումը և գրանցումը, և ձեռքբերման վաղեմությունը հնարավորություն է ընձեռում անշարժ գույքի սեփականատեր չհանդիսացող անձին ժամանակի ընթացքում գույքի նկատմամբ ձևավորված փաստացի տիրապետությունը վերամարմնավորել սեփականության իրավունքի՝ գույքը տիրապետող անձի կողմից՝ գույքի նկատմամբ տիրապետմանն ուղղված համապատասխան վարքագծի դեպքում:

Այնուամենայնիվ, այս ինստիտուտի կիրառումը պետք է իրականացվի քաղաքացիա-իրավական հարաբերությունների համապատասխան մասնակիցների շահերի ողջամիտ հավասարակշռվածության ապահովման պայմաններում, որպեսզի երաշխավորվի նաև գույքի նկատմամբ գրանցված սեփականության իրավունք ունեցող անձանց իրավական պաշտպանությունը:

(...) Այսինքն՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման իրավական հնարավորությունը սերտորեն փոխկապակցված է գույքի սեփականատիրոջ (այդ թվում նաև՝ թե՛ ձեռք բերողի տիրապետման տիրույթում գտնվող գույքի նկատմամբ սեփականատիրոջ սեփականության իրավունքի գրանցված լինելու պարագայում, և թե՛ այդ տիրապետման ժամանակահատվածում սեփականատիրոջ իրավունքի գրանցման պարագայում)՝ գույքի նկատմամբ դրսևորած վարքագծի և դրա նկատմամբ ունեցած վերաբերմունքի հետ, ինչպես նաև գույքը տիրապետող անձի՝ գույքի նկատմամբ տիրապետմանն ուղղված վարքագծի հետ»:

Վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը նաև հարկ է համարել արձանագրել, որ «(...) օրենսդիրն ինքնին չի բացառում տիրապետման իրավահաջորդության հնարավորությունը՝ Օրենսգրքի 187-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանելով, որ տիրապետման վաղեմությունը վկայակոչող անձը կարող է իր տիրապետման ժամկետին միացնել այն ժամանակը, որի ընթացքում այդ գույքին տիրապետել է այն անձը, որի իրավահաջորդն է ինքը: Այնուամենայնիվ, սույն կարգավորումն ինքնին վկայում է, որ իրավահաջորդությունն այս իրավահարաբերություններում կարող է տեղ ունենալ բացառապես այն դեպքերում, երբ իրավահաջորդը տիրապետման իրավահարաբերություններում ունի որոշակի մասնակցություն այն առումով, որ շարունակում է իրավանախորդի տիրապետումը, ընդ որում՝ օրենսդրությամբ սահմանված վավերապայմանների պահպանմամբ:

(...) Մասնավորապես՝ Օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավորումից բխում է, որ իբրև սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակ՝ օրենսդիրը սահմանում է անշարժ գույքի սեփականատեր չհանդիսացող քաղաքացու կամ

իրավաբանական անձի իրավական հնարավորությունը որոշակի ժամանակահատվածում և վավերապայմանների պահպանմամբ գույքը որպես սեփականը տիրապետելու պայմաններում այդ գույքի նկատմամբ ձեռք բերել սեփականության իրավունք, իսկ ձեռքբերման վաղեմության շրջանակներում տիրապետումը պետք է լինի՝ (1) բարեխիղճ, (2) բացահայտ, (3) անընդմեջ, և (4) որպես սեփական գույք տիրապետվող, այսինքն՝ գույքի փաստացի տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով, և նա գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այդ թվում՝ երրորդ անձանց հետ հարաբերություններում:

(...) Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվորի մոտ դատարան դիմելու պահին որևէ նյութական իրավունք առկա չի եղել: Ինչ վերաբերում է Օրենսգրքի 187-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորմանը, ապա ենթադրվում է, որ այն կիրառելի է ընդհանուր (համապարփակ) իրավահաջորդության պայմաններում, քանի որ մասնակի իրավահաջորդության կարգով սեփականության իրավունքի փոխանցման որևէ կարգ սահմանված չէ: Ուստի՝ նյութական իրավահաջորդության փաստը հաստատող ապացույցի բացակայության պայմաններում դատավարական իրավահաջորդությունը չէր կարող լինել թույլատրելի»:

Սահմանադրական դատարանը նաև փաստել է, որ «(...) **պահանջի զիջման իրավահաջորդության համար անհրաժեշտ է, որ առնվազն պարտադիրորեն պատկանի պարտավորության հիման վրա գոյացող իրավունքը:** Սա նշանակում է, որ միայն այն դեպքում, երբ պարտավորեն ունի համապատասխան իրավունքը (ինչպես՝ պարտավորության կատարումը պահանջելու իրավունքը), նա կարող է այդ իրավունքը փոխանցել կամ զիջել մեկ այլ անձի՝ իրավունք ունենալով, որ այդ իրավահաջորդը նույնպես կարողանա պահանջել պարտապանից՝ վերջինիս՝ արդեն ունեցած պարտավորության կատարում: Հետևաբար՝ իրավահաջորդությունն իրականացվում է պարտադիրորեն նյութական իրավունքը պատկանելու փաստի ուժով: Այսինքն՝ նյութական առումով պահանջի զիջման իրավահաջորդության համար անհրաժեշտ է առնվազն պարտադիրորեն պարտավորության հիման վրա պատկանող իրավունքի

առկայություն:

(...) պահանջի զիջման գործարքը (ցեսիան) ուղղված է պարտավորությունը պարտականո՞ղ՝ արդեն իսկ առկա իրավունքը պաշտպանելուն, այլ ոչ թե այդ իրավունքը ձեռք բերելուն: Այլ կերպ՝ նշված գործարքով զիջվում է ոչ թե իրավունքը, այլ այն պահանջելու դատավարական հնարավորությունը»:

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է. «(...) Վերոգրյալի հիման վրա և հաշվի առնելով այն փաստը, որ **պահանջի զիջման գործարքը (ցեսիան) կնքելու պահին բացակայել է այդ գործարքի կնքման, այն է՝ մասնակի իրավահաջորդության՝ օրենքով սահմանված պարտադիր պայմանը՝ պահանջի կամ իրավունքի առկայությունը, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողի սեփականազրկումը տեղի է ունեցել վիճարկվող դրույթներին տրված՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ «օրենքով սահմանված դեպքերի» պայմանին հակասող մեկնաբանության արդյունքում:**

(...) Սահմանադրական դատարանն այսպիսով, արձանագրում է, որ վիճարկվող հիմնական իրավադրույթների, մասնավորապես՝ Օրենսգրքի 187-րդ հոդվածի կիրառման տեսանկյունից փաստացի տիրապետման իրավահաջորդություն հնարավոր չէ, քանի որ այն ոչ թե իրավունք է, այլ փաստ, իրավիճակ, որը որոշակի պայմանների համակցությամբ ձևավորում է իրավունքի ճանաչմանը հավակնելու հնարավորություն: Այսինքն՝ նշված հոդվածի տեսանկյունից առկա չէ պարտավորական կամ այլ իրավունք, որը կարող է զիջվել կամ փոխանցվել մասնակի իրավահաջորդության այլ եղանակով, ինչի արդյունքում ներկայացված ցեսիայի պայմանագիրը ձևական առումով կարող էր գնահատվել միայն դատավարական իմաստով իրավահաջորդության հիմք, սակայն նյութական-իրավական առումով իրավահաջորդություն առկա չէ»:

4. «Դավիթ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 157-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով

Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1791** որոշմամբ 2025 թվականի հուլիսի 29-ին որոշել է.

«1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 157-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ դատավորին կարգապահական պարասխանավության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումը Սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի հիմքով ըստ էության վերանայելը (որոշումը վերացնելը և նոր որոշում կայացնելը) Բարձրագույն դատական խորհրդի պարտադիր լիազորությունն է:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 157-րդ հոդվածի 1-ին մասը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

ՍԴՈ-1791 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ «Սահմանադրական դատարանի որոշումները՝ որպես սահմանադրական արդարադատության վերջնարդյունք, հանրային իշխանության մարմինների կողմից պետք է ընկալվեն և դիտարկվեն որպես իրավական պետության կենսական առանցք, դրա հիմնասյուներից մեկը՝ միաված նաև մարդու հիմնական իրավունքների և ազատությունների գերակայության երաշխավորմանը. հակառակ մոտեցումը ենթադրում է, որ հանրային կյանքում առկա է սահմանադրական արդարադատության էության վերախմաստավորման և վերագնահատման անհրաժեշտություն»:

Սահմանադրական դատարանը փաստել է, որ «(...) սահմանադրական արդարադատության իրականացումը՝ ընդհանրապես, այդ թվում՝ Սահմանադրության 168-րդ հոդվա-

ծում նախանշված իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելը՝ մասնավորապես, Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է, հետևաբար՝ **սահմանադրական արդարադատության արդյունքներով ընդունված համապատասխան ակտերը հանրային կարևորության առումով ևս բացառիկ բնույթ ունեն**, քանզի ուղղված են ոչ միայն կոնկրետ գործով անձի հիմնական իրավունքի/ ազատության, այլ նաև ողջ հանրության շահերի պաշտպանությանն ու իրավունքի գերակայության և սահմանադրական իրավակարգի ապահովմանը: Այդ հրամայականն անառարկելիորեն պայմանավորում է նաև Սահմանադրական դատարանի որոշումների կատարման կառուցակարգերի գործունե համակարգի ներդրումն ու կենսագործումը. ընդ որում՝ Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը բացառապես ձևական-իրավական առումով դիտարկելն անթույլատրելի է: Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումներն անվերապահորեն պետք է կատարվեն՝ ի ապահովումն Հայաստանի Հանրապետությունում՝ որպես իրավական պետությունում, մարդու իրավունքների գերակայության»:

Սահմանադրական դատարանը քննարկվող համատեքստում նաև արձանագրել է. «(...) կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում անհատական դիմումի հիման վրա գործով Սահմանադրական դատարանի որոշմամբ նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, այդ դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, **դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտն անվերապահորեն նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման:**

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ որևէ իրավակարգավորում կամ իրավակիրառ պրակտիկայում վերջինիս տրված որևէ մեկնաբանություն չի կարող շրջանցել նշյալ սահմանադրաիրավական պահանջը՝ խոչընդոտ հանդիսանալով Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտի վերանայման

համար: Ընդ որում՝ անթույլատրելի է ցանկացած տեսակի մեկնաբանողական գործիքակազմի կիրառմամբ Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտի վերանայման վարույթը որպես իրավասու դատարանի հայեցողություն դիտարկելը՝ ի միտն ունենալով գաղափարն առ այն, որ գոյության իրավունքից զուրկ է այն դատական ակտը, որի հիմքում ընկած է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված դրույթը կամ համապատասխան դրույթին տրված մեկնաբանությունը, որը տարբերվում է Սահմանադրական դատարանի կողմից դրան տրված մեկնաբանությունից: Հակառակ մոտեցումը ձևախեղում է սահմանադրական արդարադատության բուն էությունը՝ հանգեցնելով անձի՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերով երաշխավորված հիմնական իրավունքների խախտմանը և խարխլելով սահմանադրական արդարադատության ինստիտուտի նկատմամբ վստահությունը»:

Սահմանադրական դատարանը գտել է, որ «(...) Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման առկայությունը՝ որպես նոր հանգամանք, հիմք է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին **որոշման վերանայման վարույթ հարուցելու համար:** Որպես այդ գործընթացին տրամաբանորեն հաջորդող կարգավորում՝ Օրենսգրքի 157-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված է, որ Խորհրդի որոշումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու հիմքերի առկայության դեպքում Խորհուրդը վերացնում է իր որոշումը և կայացնում է նոր որոշում:

Տվյալ դեպքում Խորհուրդը պարտավոր է վերացնել իր համապատասխան որոշումը և կայացնել նոր որոշում՝ հաշվի առնելով, որ Խորհրդի որոշումները պետք է համահունչ լինեն Սահմանադրությանը և դրանում ամփոփված սահմանադրական արժեքանությանը. հակառակ պարագայում՝ Խորհրդի համապատասխան որոշման հիմքում կշարունակի մնալ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված կամ Սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված իրավական նորմը, ինչն անհամատեղելի է ինչպես սահմանադրական արդարադատության էության, այնպես էլ անձի՝ Սահմանադրության 61 և

63-րդ հոդվածների 1-ին մասերով երաշխավորված հիմնական իրավունքներից ածանցվող նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման իրավունքի հետ»:

Վերոշարադրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը եզրահանգել է. «(...) հաշվի առնելով սահմանադրական արդարադատության հիմքում ընկած սահմանադրահեն գաղափարներն ու արժեքանությունը, Սահմանադրական դատարանի որոշումների սահմանադրաիրավական բովանդակությունն ու իրավական ազդեցությունը նաև անձի սահմանադրական իրավունքների երաշխավորման համալսարանում՝ Սահմանադրական դատարանը շեշտադրում է, որ անթույլատրելի է Սահմանադրական դատարանի որոշումները հանրային իշխանության որևէ մարմնի կողմից «հայեցողության» պատրվակով անտեսելը կամ դրանք ընտրողաբար կատարելը:

Ավելին, վերոնշյալի համալսարանում հաշվի առնելով նաև Խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննարկելիս Խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու հանգամանքը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու պարագայում Օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած «իրավունք ունի» ձևակերպումը նախանշում է Խորհրդի հայեցողությունը՝ գնահատելու և որոշելու օրենքով սահմանված բավարար հիմքերի առկայությունը՝ վերանայման վարույթ հարուցելու համար, սակայն **հիշատակված հիմքերի առկայությունը հավաստվելու դեպքում Խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումը նոր հանգամանքի հիմքով ըստ էության վերանայելու պարագայում (ենթադրում է Խորհրդի՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված կամ Սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված իրավական նորմը բովանդակող որոշման վերացում և նոր որոշման կայացում) Օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասում գործածված «իրավունք ունի» ձևակերպումը միարժեքորեն նշանակում է**

Խորհրդին վերապահված պարտադիր կատարման ենթակա լիազորություն: Այդ առումով, Սահմանադրական դատարանը նշում է, որ Խորհրդին վերապահված իրավունքի իրականացումը չի կարող մեկնաբանվել այնպես, որ հանգեցնի անձանց սահմանադրական իրավունքների և ազատությունների էության խաթարմանը կամ դրանց իրացման անհարկի սահմանափակմանը: Այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումը հիմք է նոր հանգամանքով դատական ակտի վերանայման համար, Խորհուրդն օրենքով իրեն վերապահված պարտադիր լիազորությունը չի կարող մեկնաբանել որպես հայեցողական լիազորություն՝ սեփական հայեցողությամբ պայմանավորելով դրա իրականացումը: Նման մեկնաբանությունը խաթարում է սահմանադրական կարգի հիմքերը, վրանգում է իրավունքի գերակայության, սահմանադրական վերահսկողության ինստիտուցիոնալ արդյունավետության ապահովումը՝ կասկածի տակ դնելով Սահմանադրական դատարանի որոշումների պարտադիր ուժի հիմնարար բնույթը՝ վերջնարդյունքում հանգեցնելով անձի՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերով երաշխավորված հիմնական իրավունքների խախտմանը:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանավորության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումը Սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի հիմքով ըստ էության վերանայելը (որոշումը վերացնելը և նոր որոշում կայացնելը) Խորհրդի պարտադիր լիազորությունն է»:

5. «Հարություն Ներսիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1792** որոշմամբ 2025 թվականի հուլիսի 30-ին որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանն այն

մեկնաբանությամբ, որ կալանքի ժամկետը երկարաձգելիս վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով պատշաճ ջանասիրության (due diligence) ապահովման պարտականությունը տարածվում է նաև դատական վարույթում գործը քննող դատարանի վրա:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը Դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

ՍԴՈ-1792 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ «(...) կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը, թեև օրենսդրորեն առանձնացվել է բուն հիմքերի առկայությունից, **վարույթն իրականացնող մարմնի վրա առնվազն պարտականություն է դնում ստուգելու, թե արդյո՞ք պահպանված են կալանքի հիմքերի՝ իբրև ապագային միաված կանխատեսական բնույթ ունեցող դատողությունների (մտահոգությունների) հիմքում ընկած փաստացի առկա հանգամանքները (օրինակ՝ վկաների հարցաքննված չլինելու հանգամանքը), և եթե՝ այո, ապա դրանց շարունակական առկայությունը վերագրելի է մեղադրյալի՞, թե՞ վարույթի հանրային մասնակիցների վարքագծին:**

(...) Այլ կերպ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագծի հավանականությունը որպես կալանքի հիմք պահպանվելու հանգամանքը գնահատելուց առաջ դատարանը թե՛ դատական վերահսկողություն և թե՛ արդարադատություն իրականացնելու փուլերում պարտավոր է ապահովել մեղադրյալի հնարավոր ոչ պատշաճ դատավարական վարքագծի՝ իբրև սուբյեկտիվ

մտավախության (վկաների վրա ներգործելու մասին կանխարեսական դատողության) հիմքում ընկած օբյեկտիվ հիմքերի նախադրյալների չեզոքացման (վկաների հարցաքննությունը կազմակերպելու) ուղղությամբ վարույթի հանրային մասնակիցների ձեռնարկած քայլերը:

(...) Սահմանադրական դատարանը, վերահաստատելով **Դիմողի կողմից վկայակոչված՝ 05.03.2024 թ. ՍԴԱՌ-40 աշխատակարգային որոշմամբ արտահայտված դիրքորոշումը**, արձանագրում է, որ դատարանների կողմից՝ մեղադրյալի նկատմամբ կիրառված կալանքի ժամկետի երկարաձգման հարցը դատական վարույթում քննության առնելը և լուծելը մեղադրյալի կալանքի ժամկետը լրանալուց 1 կամ 2 ամիս առաջ՝ քրեադատավարական օրենքի վերոհիշյալ վերաբերելի դրույթների՝ Սահմանադրությունից չբխող մեկնաբանում է, քանի որ, ըստ էության, **կալանքի երկարաձգման հարցի նման «վաղաժամկետ» քննությունը որևէ այլ նպատակ, քան կալանքի ժամկետը նոր կետից սկսած երկարաձգելը, չի հետապնդում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ եթե դատարանը գտներ, որ անձը ենթակա է կալանքից ազատման, ապա դա կարող էր անել քրեադատավարական, այն է՝ Օրենսգրքի՝ «Անձի ազատությունը և անձնական անձեռնմխելիությունը» վերտառությամբ 18-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված այն կարգավորման ուժով, որի համաձայն՝ «Դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը իրենց իրավասության սահմաններում պարտավոր են անհապաղ ազատ արձակել ազատությունից ապօրինի կամ անհիմն զրկված յուրաքանչյուր անձի»:**

(...) Սահմանադրական դատարանն այսպիսով, ի թիվս այլնի, արձանագրում է, որ նման մեկնաբանությամբ խախտվում են Օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, մասնավորապես՝ դատավարական հարկադրանքի, այդ թվում՝ խափանման միջոցների, այդ թվում՝ **կալանքի՝ օրենքով նախատեսված հիմքերով և կարգով կիրառվելու և վարույթի ընթացքում անձին ազատությունից զրկելու՝ պարտի նպատակ հետապնդելը բացառելու սկզբունքները**, ինչն ուղղակիորեն հանգեցնում է թե՛ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասով, թե՛ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին

մասով ամրագրված այն պահանջի խախտմանը, որ՝ «Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով»»:

Արդյունքում՝ վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը եզրահանգել է. «(...) պարզաճ ջանասիրությունը նաև ողջամիտ ժամկետի ապահովման պահանջի մաս է, և չի կարող վերջինս ուղղված լինել դատարանին, իսկ ջանասիրության պահանջը՝ ոչ: **Այլ կերպ՝ Օրենսգրքի 118-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «Կալանքի ժամկետը երկարաձգելիս դատարանի առջև անհրաժեշտ է հիմնավորել նաև վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից գործադրված պարզաճ ջանասիրությունը (due diligence), ինչպես նաև տվյալ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու անհրաժեշտությունը» դրույթները պարունակում են վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից գործադրված պարզաճ ջանասիրություն (due diligence) դրսևորելու պահանջն այն բոլոր դեպքերում, երբ քննարկվում է կալանքի ժամկետը երկարաձգելու հարցը, այսինքն՝ ոչ միայն այն դեպքերում, երբ ներկայացված է կալանքը երկարաձգելու միջնորդություն, այլ նաև այն դեպքերում, երբ դատարանն ինքն է օրենքի ուժով պարտավոր անդրադառնալ շարունակական կալանքի իրավաչափության հարցին:**

(...) Սահմանադրական դատարանն այսպիսով գտնում է, որ անկախ քրեական դատավարության փուլից կամ այլ կերպ՝ անկախ կալանքի երկարաձգման հարցը դատարանի կողմից օրենքի պահանջով ինքնուրույն կամ իրեն ներկայացրած միջնորդության շրջանակներում քննելուց՝ պարզաճ ջանասիրություն ապահովելը բխում է իրավունքի գերակայության սկզբունքից, Սահմանադրության 27, 63 և 66-րդ հոդվածներից, ինչպես նաև Օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 118-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պահանջներից, որոնց առավելագույն իրացվածությունը տվյալ դեպքում նշանակում է, որ անձի անձնական ազատության հիմնական իրավունքի երաշխիքները, այդ թվում՝ գործի հանգամանք-

ները պարզելու ուղղությամբ պետական մարմինների պատշաճ ջանասիրության ապահովումը, չեն կարող կախված լինել այն հանգամանքից, որ մի դեպքում՝ շարունակական կալանքի իրավաչափությունը դատարանի կողմից ստուգվում է քննիչի միջնորդությունը քննության առնելու, իսկ մյուս դեպքում՝ նույն հարցը օրենքի ուժով քննության առարկա դարձնելու ընթացակարգի շրջանակներում:

(...) Վերոնշյալի հակառակը վրանգավոր է հարկապես այն տեսանկյունից, որ պետական իրավասու անձանց կողմից դրսևորված անգործության՝ որևէ դատավարական գործողություն չկատարելու՝ դատական նիստ չանցկացնելու և վկաների հարցաքննություն չկազմակերպելու հետևանքն ինքն է դրվում (ինչպես սույն գործով) կալանքը երկարացնելու հիմքում այն պատճառաբանությամբ, որ նախկինում նշանակված կալանքի իրավաչափության պայմանները չեն փոփոխվել:

(...)

(...) Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ պատշաճ ջանասիրության ապահովման պարտականությունը չի կարող կիրառվել որպես ինքնուրույն առանձին պահանջ, այլ գործում է իբրև կալանքի հիմքերի առկայությունն արձանագրող որոշումների կամայականության դեմ երաշխիք: Այլ կերպ՝ եթե դատարանը պարտավոր է պատճառաբանել կալանքի հիմքերի առկայությունը, ապա այդ պարտականությունից բխող՝ մեղադրյալի՝ կալանքի հիմքերի բացակայությամբ ազատ արձակվելու իրավունքը պատրանքային է դառնում, մասնավորապես՝ այն դեպքերում, երբ հարցաքննության ենթակա վկայի վրա մեղադրյալի հնարավոր ազդեցության հավանականության վերացման՝ պետությունից կախված իրական միջոցը (հարցաքննության կազմակերպումը) գործադրելուց շարունակաբար հրաժարվելու օրինականությունը որևէ դատական ստուգման կամ ապահովման չի ենթարկվում և, ըստ էության, սահմանափակվում է բացառապես քրեական գործի քննության ողջամիտ ժամկետներով»:

6. «Հայկ Մելքոնյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝

ՍԴՈ-1798 որոշմամբ 2025 թվականի սեպտեմբերի 30-ին որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ տնային կալանքի կիրառման կարգի, ժամկետների և բողոքարկման վրա տարածվում են կալանքի վերաբերյալ համապատասխան դրույթները, այդ թվում՝ Օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ կալանքից ազատված անձին կրկին կալանավորելու երաշխիքները:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

ՍԴՈ-1798 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «(...) օրենսդիրը, ի ապահովումն անձի անձնական ազատության սահմանադրական իրավունքի, հաշվի առնելով կալանքի և տնային կալանքի սահմանադրորեն երաշխավորված նշյալ իրավունքին միջամտության ինտենսիվությունը, սահմանել է, որ իրավասու անձը մեղադրյալին ազատում է կալանքից (տնային կալանքից), եթե լրացել է դատարանի կողմից սահմանված կալանքի (տնային կալանքի) ժամկետը, և չի ստացվել այն երկարաձգելու մասին դատարանի որոշումը: Հետևաբար՝ մեղադրյալը ձեռք է բերում կալանքից ազատված անձի կարգավիճակ, որի նկատմամբ գործում է ազատության կանխավարկածը:

Բացի դրանից, օրենսդիրը լրացուցիչ պայմաններ է նախատեսել կալանքից (տնային կալանքից) ազատված կամ այն անձի նկատմամբ նույն մեղադրանքով կալանավորումը (տնային կալանքը) որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունը

դատարան կրկին ներկայացնելու համար, որի վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է: Մասնավորապես՝ անձին կալանավորելու (տնային կալանք կիրառելու) միջնորդությունը կրկին կարող է ներկայացվել միայն բացառիկ դեպքում, երբ ի հայտ են եկել **նոր էական հանգամանքներ**, որոնք վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէին մեղադրյալին կալանքից (տնային կալանքից) ազատելիս կամ կալանավորումը (տնային կալանքը) որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը մերժելիս, և որոնք հիմնավորում են կալանավորումը (տնային կալանքը) որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությունը»:

Տվյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը նաև գտել է. «(...) «Նոր էական հանգամանքներ» ներկայացնելու օրենսդրական պահանջը վերաբերում է այն դեպքերին, երբ անձն ազատվում է կալանքից (տնային կալանքից) (անկախ հիմքից և իրավիճակից), որից հետո ներկայացվում է միջնորդություն (կամ դատարանը սեփական նախաձեռնությամբ է քննարկում այդ հարցը) նրան կրկին կալանավորելու (տնային կալանք կիրառելու) համար, իսկ եթե արդեն միջնորդությունը ներկայացված է եղել, ապա խոսքը ոչ թե կրկին կալանավորելու (տնային կալանք կիրառելու) մասին է, այլ արդեն իսկ եղած կալանքի (տնային կալանքի) ժամկետի երկարաձգման, որի համար օրենսդիրը չի սահմանել «նոր էական հանգամանքներ» ներկայացնելու պահանջ: Ի տարբերություն առաջին անգամ կալանավորվող անձանց՝ կալանքից ազատված անձանց կրկին կալանավորելու համար օրենսդիրը սահմանել է ավելի խիստ պահանջներ, այն է՝ կալանքից ազատված անձը չի կարող կրկին կալանավորվել նույն մեղադրանքով, եթե չեն հայտնաբերվել նոր էական հանգամանքներ, որոնք վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէին մեղադրյալին կալանքից ազատելու պահին (Օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մաս):

(...)

(...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 120-րդ հոդվածի իմաստով տնային կալանքից ազատված անձը չի կարող կրկին կալանավորվել նույն մեղադրանքով, եթե չեն հայտնաբերվել նոր էական հանգամանքներ, որոնք վարույթն

իրականացնող մարմնին հայտնի չէին մեղադրյալին տնային կալանքից ազատելու պահին: Ընդ որում՝ տնային կալանքի կիրառման անհրաժեշտությունը հիմնավորող նոր էական հանգամանքներ ներկայացնելու օրենսդրական պահանջը ելնում է իրավաչափ այն գաղափարից, որ անձնական ազատության իրավունքի երաշխավորման համատեքստում՝ դատարանի կողմից չի կարող տնային կալանք կիրառվել այն դեպքում, երբ նույն պայմանների և հիմքերի առկայության վերաբերյալ նույն հիմնավորումները 1) արդեն իսկ մեկ անգամ բավարար չեն գնահատվել նույն մեղադրանքով, նույն անձի քննարկվող իրավունքը սահմանափակելու համար, կամ 2) արդեն իսկ հանդիսացել են հիմք՝ անձի քննարկվող իրավունքի սահմանափակման համար»:

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է. «(...) Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքի սահմանադրական բովանդակության հետ անհամապատասխան է իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող դրույթին տրված այն մեկնաբանությունը, որ Օրենսգրքի 121-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն տնային կալանք այլընտրանքային խափանման միջոցի նկատմամբ:

(...)

(...) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասին սույն գործով իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության կիրառումը հանգեցրել է Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասով, 63-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված հիմնական իրավունքների խախտման»:

7. «Էմմա Թունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1801** որոշմամբ 2025 թվականի նոյեմբերի 6-ին որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն

մեկնաբանությամբ, որի համաձայն՝ դատական ակտը նոր հանգամանքով ենթակա է վերանայման, եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի խախտված ճանաչվելու դեպքում՝ հաշվի առնելով նաև այդ համարժեքստում ներպետական դատական ատյանների կողմից Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ արտահայտված վերաբերելի իրավական դիրքորոշումներից շեղվելու հանգամանքը՝ անկախ տվյալ գործին անձի մասնակից լինելու հանգամանքից:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

ՍԴՈ-1801 որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է, որ «(...) **օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերջնականության (res judicata) սկզբունքից շեղումը հնարավոր է բացառիկ դեպքերում՝ օրենքով հստակ ուրվագծված հիմքերով և կարգով՝ արդարադատության այնպիսի «աղաղակող սխալի» շրջման նպատակով,**

որի բացահայտման պայմաններում օրինական ուժի մեջ մտած դատական ակտն անհամարելելի է Սահմանադրի որդեգրած արժեքանությանը: Վերջինիս «զոհաբերումն» իրավական ֆորմալիզմին (ձևապաշտությանը) Սահմանադրի համար անհանդուրժելի է»:

Տվյալ որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «(...) Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավահարաբերություններում Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության մարմինների կողմից սեփականատերերի իրավունքների պաշտպանության թերացումների խնդիրն ունի համակարգային բնույթ:

(...)

(...) Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) օտարված սեփականության դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում ստանալու իրավունքի՝ շարունակական և մեծաթիվ խախտումների պայմաններում ՄԻԵԴ-ի՝ կոնվենցիոն համապատասխան իրավունքի խախտում արձանագրող յուրաքանչյուր վճռի/որոշման առկայությունն ինքնին պետության մեջ հանրային և մասնավոր շահերի միջև հավասարակշռության խախտման յուրօրինակ ցուցիչ է, ինչը, մի կողմից՝ պետք է սթափեցնող ազդակ լինի հանրային իշխանության մարմինների համար, մյուս կողմից՝ ներպետական դատարաններում ազդարարի համապատասխան գործի քննության նոր շրջափուլի մեկնարկը՝ սահմանադրական և կոնվենցիոն արժեքանությանը համահունչ:

(...)

(...) Սահմանադրի համար անթույլատրելի է դատավարական այնպիսի ընթացակարգ սահմանելը կամ դրան իրավակիրառ պրակտիկայում այնպիսի մեկնաբանություն հաղորդելը, որը հնարավորություն է տալիս նահանջել հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) օտարված սեփականության դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում ստանալու բացարձակ իրավունքի սահմանադրահեն գաղափարից»:

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է. «(...) անկախ անձի՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով կողմ հանդիսանալու հանգամանքից, ՄԻԵԴ-ի ակտով կոնվենցիոն համապատասխան իրավունքի խախտման փաստը հիմնավորվելու դեպքում՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի խախտում ճանաչելով, հաշվի առնելով նաև նշված համարեքստում ներպետական դատական արյանների կողմից կոնվենցիոն արժեքանությունից, ՄԻԵԴ-ի վերաբերելի իրավական դիրքորոշումներից շեղվելու հանգամանքը, ներպետական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով պետք է ենթակա լինի վերանայման:

(...)

(...) վերահաստատելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի սեպտեմբերի 23-ի ՄԴՈ-1797 որոշման 96-րդ կետի ներքո արտացոլված դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ՄԻԵԿ-ի 41-րդ հոդվածով նախատեսված արդարացի բավարարման շրջանակներում ՄԻԵԴ-ի կողմից անձի համապատասխան իրավունքի խախտումն արձանագրելիս տրամադրվող փոխհատուցումը, հաշվի առնելով ՄԻԵԴ-ի՝ ազգային դատարանների նկատմամբ սուբսիդիար (լրացնող) բնույթը և Կոնվենցիայի 41-րդ հոդվածի բուն տեքստը, մասնակի փոխհատուցում է՝ ուղղված Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող փոխհատուցման մասը լրացնելուն ու ամբողջության մեջ վերցված՝ Կոնվենցիայի խախտման «զոհին» արդարացի փոխհատուցում ապահովելուն և պետությանը չի ազատում Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց համարժեք փոխհատուցում տրամադրելու՝ մինչև խախտումն արձանագրելը, առավել ևս՝ դրանից հետո ունեցած պոզիտիվ պարտականությունից:

(...)

(...) Վճռաբեկ դատարանի կողմից վերանայման վարույթի շրջանակում ՄԻԵԴ-ի

ակտի հիման վրա համապատասխան դատական ակտը բեկանելուց և գործը նոր քննության ուղարկելուց հետո հետագա դատավարության վերջնարդյունքում ՄԻԵԴ-ի ակտով արձանագրված իրավունքի խախտումը չվերացվելու (տվյալ դեպքում՝ փոխհատուցում չտրամադրելու) պարագայում դատական ակտի վերանայման ինստիտուտը դառնում է ձևական, պատրանքային, ինչի արդյունքում ձևախեղվում է մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետության համակարգի բովանդակությունը:

(...) Սույն գործով Վճռաբեկ դատարան ներկայացված՝ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելն այն պարճառաբանությամբ, որ նույն գործով Վճռաբեկ դատարանը նախկինում արդեն իսկ բեկանել է համապատասխան դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության, համահունչ չէ անձի՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերով ամրագրված իրավունքների սահմանադրաիրավական բովանդակությանը, քանզի հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման վերաբերյալ քաղաքացիական գործով նոր հանգամանքը (տվյալ դեպքում՝ այլ անձի գործով ՄԻԵԴ-ի ակտը, որով արձանագրված է համապատասխան իրավունքի նույնաբովանդակ խախտումը) ենթադրում է նյութապես նոր իրավական իրադրություն, որի պայմաններում հնարավոր է վերացնել համանման գործերով նախորդիվ խախտումները, կանխել դրանց շարունակականությունը՝ նպատակ ունենալով իրապես ապահովելու անձի խախտված իրավունքների լիարժեք պաշտպանությունը:

(...) Դատական ակտի վերանայման ինստիտուտը, նախատեսված լինելով որպես դատական վերահսկողության արտակարգ ձև (արտակարգ իրավական միջոց), կոչված լինելով ապահովելու «աղաղակող» դատական սխալների վերացումը և իրավունքի լիարժեք ու արդյունավետ պաշտպանությունն այն դեպքերում, երբ դատական շրջապտույտի վերջնարդյունքում իրողությունը հանգում է նրան, որ անձի՝ ՄԻԵԴ-ի ակտով կոնվենցիոն համապատասխան իրավունքի խախտումն արձանագրված լինելու պայմաններում խախտված իրավունքը շարունակում է մնալ չվերականգնված, դադարում է ծառայել իր սահմանադրաիրավական նպատակներին, ձևախեղվում է՝ վերածվելով զուր

դատավարական ձևականության: Արդյունքում՝ արդարադատության էությունը խաթարված լինելու պայմաններում վերանայման վարույթի շրջանակում ձևական իրավական արձագանքը՝ դատական ակտի բեկանման գործողությունը, չի հանգեցնում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) օտարված սեփականության դիմաց անձի՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ «նախնական և համարժեք փոխհատուցման» պահանջի իրավունքի փաստացի բավարարման:

(...) Վերոնշյալի համարեքստում, դատարանների դրսևորած վարքագիծը չպետք է միտված լինի իրավունքի վերականգնման պատրանք ստեղծելուն՝ դատավարական ընթացակարգերի կիրառման ձևականությամբ: Արդյունքում՝ վերանայման ինստիտուտը գործնականում չպետք է կորցնի իր գործառնական նշանակությունը, իսկ անձը, սպառնելով ներպետական և միջազգային իրավական պաշտպանության միջոցները, չպետք է զրկված լինի արդյունավետ դատական պաշտպանություն ստանալու հնարավորությունից՝ փաստացի զրկվելով Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով երաշխավորված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) օտարված սեփականության դիմաց «նախնական և համարժեք փոխհատուցում» ստանալու բացարձակ իրավունքից, ինչն անհամարելելի է սահմանադրական և կոնվենցիոն արժեքանության հետ:

(...) Ընթացակարգային որևէ խոչընդոտ չի կարող գերակայել արդարադատության շահին և սահմանափակել անձի՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) օտարված սեփականության դիմաց «նախնական և համարժեք փոխհատուցում» ստանալու բացարձակ իրավունքի բացարձակ պաշտպանության հնարավորությունը:

(...) Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ դատական ակտը նոր հանգամանքով ենթակա է վերանայման, եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած**

միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի խախտված ճանաչվելու դեպքում՝ հաշվի առնելով նաև այդ համարեքստում ներպետական դատական արյանների կողմից Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ արտահայտված վերաբերելի իրավական դիրքորոշումներից շեղվելու հանգամանքը՝ անկախ փվյալ գործին անձի մասնակից լինելու հանգամանքից»:

8. «Ալեքսանդր Սահակյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1802** որոշմամբ 2025 թվականի նոյեմբերի 11-ին որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության քաղա-

բացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

ՍԴՈ-1802 որոշմամբ Սահմանադրական դատարանը գտել է, որ «(...) **արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի կենսագործմամբ է, որ երաշխավորվում է այլ սահմանադրական իրավունքների ու ազատությունների լիարժեք պաշտպանությունը՝ ապահովելով դրանց կենսունակությունը՝ թույլ չտալով, որ դրանք վերածվեն ձևական արժեքների:**

(...) Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության սահմանադրաիրավական որակը երաշխավորող բաղադրիչը, ի թիվս այլնի, նաև դատական ակտի բողոքարկման իրավունքն է, որը **մի կողմից՝** ապահովում է դատական սխալների բացահայտման և շտկման գործիքակազմի կիրառմամբ անձի իրավունքների լիարժեք դատական պաշտպանությունը՝ իբրև խախտված իրավունքների վերականգնման գործնական միջոց, **մյուս կողմից՝** երաշխավորում է դատական իշխանության ներսում ինքնավերահսկման մեխանիզմի գործունակությունը:

(...) Բացի դրանից, բողոքարկման իրավունքը պայմանավորում է դատական համակարգի հիերարխիկ կառուցվածքի տրամաբանական արդարացումը՝ նպաստելով դատական սխալների շտկմանը, դատական պրակտիկայի միասնականությանը՝ վերջնարդյունքում նպաստելով արդարադատության համակարգի հանդեպ հանրային վստահության աճին»:

Վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով հայցի ապահովման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը, արձանագրել է, որ «(...) սույն ինստիտուտը դատարանի կողմից կիրառվող ժամանակավոր բնույթ ունեցող դատավարական միջամտություն է՝ ուղղված կայացվելիք դատական ակտի անխաթար կատարման նախադրյալների ստեղծմանը և գործին մասնակցող համապա-

դասիսան անձանց իրավունքների հնարավոր խախտման կանխարգելմանը: Այն, ըստ էության, արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի գործնական դրսևորումներից մեկն է, որն ապահովում է **կողմերի շահերի միջև ողջամիտ հավասարակշռությունը**, ինչից ուղղակիորեն բխում է, որ հայցի ապահովման միջոցները պետք է կիրառվեն այնպես, որ **մի կողմից՝** երաշխավորեն ներկայացված հայցապահանջների իրագործվելիությունը՝ համապատասխան դատական ակտ կայացվելու պարագայում, **մյուս կողմից՝** չվերածվեն պարտիչ կամ ճնշող մեխանիզմի՝ խարխլելով այն անձի դատավարական կարգավիճակի դիրքերը, որի նկատմամբ կիրառվել են:

(...) Այս առումով օրենսդիրը, ընդանեկան վեճերով գործերի առանձնահատկությունները հաշվի առնելով և երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով, նախատեսել է հատուկ կարգավորում, այն է՝ Օրենսգրքի 203-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ հայցի ապահովման կարգով կարող է գործին մասնակցող կամ այլ անձանց արգելել կամ պարտավորեցնել կատարելու որոշակի գործողություններ, թեկուզև հայցի ապահովման կիրառված միջոցն առերևույթ հանգեցնում է ներկայացված պահանջի փաստացի կատարման»:

Սահմանադրական դատարանը նաև փաստել է հետևյալը. «(...) հայցի ապահովման միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու միջնորդությունը մերժելու մասին որոշման բողոքարկումն ուղղակիորեն (բառացի) չի ներառվել Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման առարկայում՝ չարտացոլվելով վերաքննության կարգով բողոքարկման ենթակա որոշումների շարքում:

(...) Այս առումով Սահմանադրական դատարանը գտնում է՝ նկատի ունենալով, որ ինչպես արդեն իսկ շեշտադրվել է հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու դատավարական գործողությունը բովանդակում է և՛ հայցի ապահովումը վերացնելու, և՛ հայցի ապահովում կիրառելու դատավարական գործողությունները՝ օրենսդիրը, որպես այդպիսին, խնդրո առարկա որոշումներն Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման տիրույթում բառացիորեն

հիշատակելու անհրաժեշտություն չի ունեցել, մինչդեռ իրավակիրառ պրակտիկայում Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին դատարանների կողմից տրված տառացի մեկնաբանությունը ստեղծել է իրավիճակ, որի պայմաններում հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու մասին միջնորդությունը մերժելու մասին որոշման վերաքննության կարգով բողոքարկումը բացառվում է՝ հաշվի առնելով Օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված կարգավորումը, այն է՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վերաքննության կարգով:

(...) Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկայում խնդրո առարկա դրույթին տրված մեկնաբանության արդյունքում անձը զրկվել է օրենսդրի կողմից արդեն իսկ բողոքարկման ենթակա դատական ակտը փաստացի բողոքարկելու իրավունքից, ինչը հանգեցրել է վերջինիս՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման»:

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է. «(...) Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով:

(...)

(...) իրավակիրառ պրակտիկան պետք է մշտապես խարսխվի այն ողջամիտ տրամաբանության վրա, որ նորմերի սահմանադրահեն մեկնաբանությունը կարող է իրականացվել այն պայմաններում, երբ այն սահմանափակված չէ նորմատիվ տեքստի բառացի իմաստով, այլ ընդգրկում է դրա արժեհամակարգային շերտը՝ երաշխավորելով իրավանորմերի իմաստի բացահայտումը՝ դրա օրենսդրական նպատակին և սահմանադրական արժեքանությանը համահունչ»:

2024 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված 2 անհատական դիմումների հիման վրա 2025 թվականին Սահմանադրական դատարանը տվյալ գործերով ընդունել է հետևյալ որոշումները.

1. «Նունե Աթոյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1783** որոշմամբ 2025 թվականի մայիսի 20-ին որոշել է.

«1. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ վճռաբեկ բողոքի բոլոր այն թերությունները, որոնք առկա են եղել վճռաբեկ բողոքն առաջին անգամ ներկայացնելիս և ի սկզբանե հանդիսացել են վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմք, սակայն վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ դրանց անդրադարձ չի կատարվել, նշյալ դրույթի իմաստով նոր խախտումներ չեն:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

ՍԴՈ-1783 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը. «(...) դատարանի մատչելիության իրավունքը կոչված է ապահովելու յուրաքանչյուրի՝ իր իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումները վերացնելուն ուղղված համապատասխան դատական ընթացակարգեր նախաձեռնելու ռեալ (իրական) իրավական հնարավորություն: Դատարանի մատչելիության իրավունքը պետք է երաշխավորվի դա-

դական բոլոր ապրանքներում. այս գաղափարը պետք է ուղենշային լինի նաև իրավակիրառ պրակտիկայի զարգացման շրջանակներում»:

Վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը վերահաստատել է, որ «(...) **վճարել բողոք ներկայացրած անձն իրավունք ունի ակնկալելու Վճարել դատարանի՝ օրենսդրական կանոնների մեկնաբանման արդյունքում առաջադրած բողոքի ընդունելիության կանխարեւելի գործնական չափանիշներ ու պահանջներ (...):**

(...)

(...) հաշվի առնելով Վճարել դատարանի սահմանադրաիրավական առաքելությունը՝ Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ վերջինիս է վերապահված նաև ստորադաս դատարանների համար ուղղորդող և կանխորոշիչ նշանակություն ունեցող մեկնաբանություններ տալու սահմանադրաիրավական գործառույթը, որի՝ Սահմանադրությանը համահունչ կենսագործումը **մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման գրավականն է»:**

Սահմանադրական դատարանը տվյալ որոշմամբ նաև փաստել է, որ «(...) պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականությունն **արդեն իսկ հանդիսանում է դատական պաշտպանության իրավունքի իրացման բավական զգալի նախապայման**, իսկ պետական տուրքի գծով արտոնություններն ունեն հավասարակշռող ազդեցություն և ինքնին միաված են երաշխավորելու անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացումը, ուստի՝ դատարանի կողմից **առաջին անգամ** պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին միջնորդության մերժումը չի կարող **անմիջապես զրկել** անձին իր իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական երաշխիքից: Հակառակ իրավիճակը դուրս է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին միջնորդություն ներկայացնելու իրավական հնարավորության ողջ տրամաբանությունից:

Բացի դրանից, վիճարկվող դրույթի նման մեկնաբանությունը, այսինքն՝ երբ դատարանների կողմից նոր խախտում է դիտարկվում և, ըստ այդմ՝ կիրառվում է վիճարկվող դրույթով նախատեսված՝ բողոքն առանց քննության թողնելու, այլ ոչ թե բողոքը կրկին

վերադարձնելու դատավարական գործիքը բոլոր այն դեպքերի համար, երբ սկզբնական բողոքը վերադարձնելու վերաբերյալ դատարանի որոշման մեջ անդրադարձ չի լինում սկզբնական բողոքում առկա վերադարձման բոլոր հիմքերին, ձևավորվում է անհավասար մոտեցում դատավարական միևնույն կարգավիճակ ունեցող սուբյեկտների նկատմամբ: Մասնավորապես՝ մի սուբյեկտի պարագայում (երբ սկզբնական բողոքը վերադարձնելու վերաբերյալ դատարանի որոշման մեջ անդրադարձ է կատարվում սկզբնական բողոքում առկա վերադարձման բոլոր հիմքերին) պետությունից ազատելու վերաբերյալ միջնորդությունը մերժվելուց հետո բողոքը վերադարձվում է բողոքաբերին՝ այն շտկելու և կրկին դատարան ներկայացնելու հնարավորությամբ, իսկ մյուսի դեպքում (երբ սկզբնական բողոքը վերադարձնելու վերաբերյալ դատարանի որոշման մեջ անդրադարձ չի լինում սկզբնական բողոքում առկա վերադարձման բոլոր հիմքերին)՝ նույն միջնորդությունը, ըստ էության, առաջին անգամ քննվում և մերժվում է՝ առանց բողոքը վերադարձնելու և ըստ այդմ՝ բողոքաբերին այդ թերությունը շտկելու և այն կրկին դատարան ներկայացնելու հնարավորություն ընձեռնելու: Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ նշված տարբերակված մոտեցումը զուրկ է որևէ իրավաչափ հիմքից, և նախորդիվ նկարագրված իրավիճակներից վերջինում հայտնված սուբյեկտն առհասարակ անհամաչափորեն զրկվում է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից:

Վճռաբեկ դատարանին վճռաբեկ բողոքը վերադարձնելու իրավասություն վերապահելն իրավական գործուն մեխանիզմ է՝ ուղղված ներկայացված բողոքում առկա թերությունները, մասնավորապես՝ պետական տուրքի առնչությամբ մատնանշելուն, իսկ հաջորդիվ՝ բողոքաբերի կողմից դրանք **շտկելուն/վերացնելուն**՝ դրանով իսկ ապահովելով անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից ածանցվող՝ սահմանված կարգով և ժամկետում վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունքը՝ երաշխավորելով վճռաբեկ արդյանի մատչելիության իրավական հնարավորությունը»:

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է. «(...) **բոլոր այն թերությունները, որոնք առկա են եղել վճռաբեկ բողոքը ներկայացնելու (առաջին անգամ**

դատարան մուտք անելու) պահի դրությամբ, սակայն Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի ընդունելիության հարցը որոշելիս դրանց անդրադարձ չի կատարել, Օրենսգրքի վիճարկվող դրույթի իմաստով որպես նոր խախտում մեկնաբանվել չեն կարող:

Անդրադառնալով սույն գործին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթը թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործով Դիմողի նկատմամբ կայացված դատական ակտերի շրջանակներում կիրառվել է վերոգրյալից տարբերվող մեկնաբանությամբ. **սույն պարագայում պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին Դիմողի միջնորդությունը մերժելը և այդ հիմքով վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը՝ առանց տվյալ ենթադրյալ թերությունը շտկելու հնարավորության ընձեռման, զրկել է անձին վճռաբեկության կարգով բողոք ներկայացնելու իրավունքից՝ հանգեցնելով վերջինիս արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտման:**

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ բոլոր այն թերությունները, որոնք առկա են եղել վճռաբեկ բողոքը ներկայացնելու (առաջին անգամ դատարան մուտք անելու) պահի դրությամբ, սակայն Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի վերադարձման հարցը որոշելիս դրանց անդրադարձ չի կատարել, նշյալ դրույթի իմաստով որպես նոր խախտում մեկնաբանվել չեն կարող, հետևաբար՝ դրանց նկատմամբ պետք է կիրառվի ոչ թե վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու, այլ այն կրկին վերադարձնելու դատավարական գործիքը»:

2. ««ՀԱՅԼԵՎԵԼ» ՍՊԸ դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Պետական սեփականություն հանդիսացող և պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող գույքի օտարման (վաճառքի), օտարման (վաճառքի) մրցույթի և աճուրդի կազմակերպման ու անցկացման կարգերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության

կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 882-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 587-Ն որոշման թիվ 3 հավելվածով սահմանված՝ «Պետական կառավարման համակարգի մարմինների տիրապետմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված), պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին, հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող և պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող գույքի օտարման (վաճառքի) մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգի 29-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1790** որոշմամբ 2025 թվականի հուլիսի 1-ին որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Պետական սեփականություն հանդիսացող և պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող գույքի օտարման (վաճառքի), օտարման (վաճառքի) մրցույթի և աճուրդի կազմակերպման ու անցկացման կարգերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 882-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 587-Ն որոշման թիվ 3 հավելվածով սահմանված՝ «Պետական կառավարման համակարգի մարմինների տիրապետմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված), պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին, հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող և պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող գույքի օտարման (վաճառքի) մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգի 29-րդ կետն այնքանով, որքանով բացառում է պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման (վաճառքի) մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած անձի կողմից գնային առաջարկի մասով թույլ տրված ձևական անհամապատասխանությունը (վրիպակը) շրկելու հնարավորությունը, ճանաչել Սահմա-

նադրության 59 և 75-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

ՍԴՈ-1790 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ «(...) մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ փարբերակվել են մրցույթի անցկացման երկու խումբ պայմաններ: Առաջին խումբ պայմանները վերաբերում են մրցույթի միջոցով կնքվող պայմանագրի առարկայի վերաբերյալ առաջարկին (բովանդակային պայմաններ, այդ թվում նաև՝ գնային առաջարկ կամ գործարար (ներդրումային) ծրագիր), իսկ երկրորդ խումբ պայմանները՝ մրցույթի մասնակցության հայտի ձևին և կից փաստաթղթերին (ձևական պայմաններ): Ընդ որում՝ Կարգի 29-րդ կետից հետևում է, որ հիշյալ պայմանները միմյանցից փարբերվում են ոչ միայն իրենց բնույթով, այլև անհամապատասխանությունների արձանագրման դեպքում առաջացրած հետևանքներով: Մասնավորապես՝ եթե անհամապատասխանություններն արձանագրվում են ձևական պայմանների առնչությամբ, ապա հայտատուին տրվում է այն շտկելու հնարավորություն, մինչդեռ բովանդակային անհամապատասխանություններն ընդհանրապես արգելակում են հայտատուի հետագա մասնակցությունը մրցույթին:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ մրցույթի մասնակցության հայտում գնային առաջարկի մասով անհամապատասխանությունը շտկելու՝ Կարգի 29-րդ կետով նախատեսված արգելքը միտված է մյուս հայտատուների համար մրցույթի անցկացման ընթացքում հավասարության և կանխատեսելիության, իսկ վերջնարդյունքում՝ տնտեսական ազատ մրցակցության ապահովմանը: Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ գնային առաջարկին վերաբերող պայմաններն իրենց բնույթով էական են, քանի որ դրանցով է պայմանավորված մրցույթի հետագա ընթացքը:

Մասնավորապես՝ գնային առաջարկի միջոցով է բոլոր հայտարարությունների շարքից որոշակիացվում մրցույթի հաղթողը: Հետևաբար՝ հայտերի բացման փուլից հետո հայտարարություններից մեկի կողմից գնային առաջարկի մասով փոփոխություններ կատարելը կխաթարի մյուս հայտարարությունների համար մրցութային հարաբերության կանխադեսելիությունը և որոշակիությունը, իսկ արդյունքում նաև վերջիններիս տնտեսական գործունեությամբ զբաղվելու և սեփականության իրավունքները: Այսպիսով՝ հայտերի բացման փուլից հետո գնային առաջարկի մասով փոփոխություն կատարելու արգելքը միտված է հավասար մրցակցության ապահովմանը և մյուս հայտարարությունների իրավունքների պաշտպանությանը:

Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը փաստում է, որ պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման (վաճառքի) մրցույթին մասնակցելու համար որոշակի պայմաններ սահմանելը և ներկայացված հայտերում անհամապատասխանության արձանագրման դեպքում դրանք անբավարար գնահատելն ու մերժելն ինքնին խնդրահարույց չեն, եթե սահմանված են գործուն կառուցակարգեր ձևական անհամապատասխանությունները շրկելու համար: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհամապատասխանությունները շրկելու կառուցակարգ նախատեսելը բխում է մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած անձանց տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացումն ապահովելու հրամայականից: Մինչդեռ վիճարկվող դրույթի բովանդակությունից հետևում է, որ թեև Որոշմամբ նախատեսվել է մրցույթի հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շրկելու կառուցակարգ, այդուհանդերձ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն լիովին չի ապահովում անձանց կողմից իրենց իրավունքների արդյունավետ իրականացումը: Մասնավորապես՝ կարող են հանդիպել նաև այնպիսի բովանդակային պայմանների խախտումներ, որոնք իրենց էությամբ ձևական են: Նման խախտման օրինակ է պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման (վաճառքի) մրցույթի մասնակցության հայտ ներկայացրած անձի կողմից գնային առաջարկի մասով թույլ տրված ձևական անհամապատասխանությունը: Մինչդեռ վիճարկվող դրույթով բացառվում է պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման (վաճառքի) մրցույթի

մասնակցության հայտ ներկայացրած անձի կողմից գնային առաջարկի մասով թույլ տրված ձևական անհամապատասխանությունը շտկելու հնարավորությունը, որն էլ հիմք է մրցույթին մասնակցելու համար ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու համար: Իսկ նշված հնարավորության բացառումն ինքնին հանգեցնում է տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի խախտման»:

Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման (վաճառքի) մրցույթին մասնակցելու համար ամրագրված կարգավորումները պետք է ուղղված լինեն յուրաքանչյուր հայտատուի՝ Սահմանադրությամբ երաշխավորված՝ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի ապահովմանը: Ուստի՝ յուրաքանչյուր դեպքում ներկայացված հայտում մրցութային հանձնաժողովի կողմից անհամապատասխանություններ հայտնաբերվելիս վերջինս պետք է ձեռնարկի ակտիվ գործողություններ հայտում առկա անհամապատասխանության բնույթը պարզելու և դրա արդյունքում վրա հասնող հետևանքն արձանագրելու համար: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե հայտի և դրան կից ներկայացված փաստաթղթերի համակողմանի հետազոտման արդյունքում պարզ է դառնում, որ գնային առաջարկի մասով թույլ տրված անհամապատասխանությունը ձևական բնույթ է կրում, այսինքն՝ եթե առկա են այնպիսի փաստեր, որոնք ակնհայտորեն վկայում են, որ հայտատուի կամքը ոչ թե ուղղված է եղել հայտում նշված չափով գին առաջարկելուն, այլ առաջարկված գինն ընդամենը հայտատուի կողմից թույլ տրված վրիպակի արդյունք է, ապա նշված դեպքում ևս վերջինիս պետք է ընձեռվի թույլ տրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն:

Միաժամանակ Կարգի 29-րդ կետին իրավակիրառ պրակտիկայում տրվել է այնպիսի մեկնաբանություն, որ գնային առաջարկով կամ գործարար (ներդրումային) ծրագրով առաջարկվող հաշվելի ցուցանիշները վերջնական են, դրանց վերաբերյալ որևէ տեսակի անհամապատասխանությունները շտկման ենթակա չեն, և ինքնին փաստի հայտարարումն առ այն, որ գույքի վաճառքի գնի սյունակում առաջարկվել է Որոշմամբ սահմանված նվազագույն գնից պակաս չափով գումար, հանգեցնում է Կարգի 29-րդ

կետրի իմպերատրիվ պահանջի կիրառմանը, այն է՝ եթե անհամապատասխանությունները վերաբերում են գնային առաջարկին, ապա նշված թերությունը վերացնելու հնարավորություն հայտը ներկայացնող կողմին չի տրամադրվում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթով սահմանված կարգավորման պայմաններում կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ մրցույթին մասնակցելու նախավճարը վճարած, լավագույն գործարար (ներդրումային) ծրագիր ներկայացրած և գնային առաջարկի նվազագույն շեմ սահմանված լինելու պայմաններում գնային առաջարկի մասով ձևական անհամապատասխանություն թույլ տրված հայտատուները զրկվեն մրցույթին մասնակցելու և հաղթող ճանաչվելու հնարավորությունից, անկախ այն հանգամանքից՝ առկա անհամապատասխանությունը վրիպակի արդյունք է, թե հայտատուի կամքն ուղղված է հայտում նշված չափով գին առաջարկելուն:

Ելնելով վերոնշյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթով նախատեսված կարգավորումը չի ապահովում Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված արդյունավետ կառուցակարգ հայտատուների տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացման համար և սահմանափակում է նշված իրավունքի լիարժեք իրացումը»:

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է. «(...) Կարգի 29-րդ կետով սահմանված կարգավորումը հանգեցնում է մրցույթի մասնակցության հայտ ներկայացրած անձի՝ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի սահմանափակման: Ընդ որում՝ թեև այդպիսի սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ մրցույթի մյուս հայտատուների իրավունքների պաշտպանությունը և հանրային շահի սպասարկումը, բայց և այնպես սահմանափակման համար ընտրված միջոցն անհարկի ծանր հետևանքներ է առաջացնում վրիպակ թույլ տրված հայտատուի համար՝ բացառելով վերջինիս հետագա մասնակցությունը մրցույթին:

Վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կարգի 29-րդ կետն այնքանով, որքանով բացառում է պետական սեփականություն հանդիսացող գույքի

օտարման (վաճառքի) մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած անձի կողմից գնային առաջարկի մասով թույլ տրված ձևական անհամապատասխանությունը (վրիպակը) շարկելու հնարավորությունը, հակասում է Սահմանադրության 59 և 75-րդ հոդվածներին»:

2023 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված 1 անհատական դիմումի հիման վրա 2025 թվականին Սահմանադրական դատարանը տվյալ գործով ընդունել է հետևյալ որոշումը.

«**«ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊԸ** դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1773** որոշմամբ 2025 թվականի մարտի 18-ին որոշել է.

«1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն պարտապանը և հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտավորերը (պարտավերերը):

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

ՍԴՈ-1773 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ «(...) սնանկության ինստիտուտի շրջանակներում նախաձեռնված վարույթով պետությունը, տնտեսական

հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովման նկատառումներից ելնելով, մասնավոր իրավահարաբերություններին ոչ բնորոշ գործիքակազմի կիրառմամբ միջամտում է տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության ոլորտին: Նախորդիվ նշված շահով պայմանավորված՝ սնանկության վարույթի շրջանակներում տեղի է ունենում տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, սեփականության իրավունքների և դրանց հետ կապված ընթացակարգային, մասնավորապես՝ դատական պաշտպանության իրավունքի ծավալի, ձևի ու բովանդակության էական փոխակերպում, ընդ որում՝ թե՛ պարտապանների և թե՛ պարտատիրոջ համար: Այս առումով վճռորոշ դերակատարում է վերապահվում սնանկության գործով կառավարիչներին (ժամանակավոր կառավարիչներին) և պետությանը՝ ի դեմս սնանկության գործեր քննող դատարանների»:

Սահմանադրական դատարանը տվյալ որոշմամբ արձանագրել է. «(...) հարկադրված սնանկության դիմումով պարտապանին սնանկ ճանաչելու կամ խնդրո առարկա դիմումը մերժելու վերաբերյալ վճռի հասցեատերերը՝ պարտապանն ու հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատերն (պարտատերերն) են, իսկ սնանկ ճանաչված պարտապանի մյուս ենթադրյալ պարտատերերը սնանկության վարույթին ներգրավվում են **պարտապանին սնանկ ճանաչելուն հաջորդող համապատասխան փուլում՝ վերջիններիս կողմից ներկայացված պահանջները դատարանի համապատասխան որոշմամբ հաստատվելուց հետո**, հետևաբար՝ սնանկության վարույթի հիշատակված առանձնահատկությամբ պայմանավորված՝ տվյալ անձինք, խնդրո առարկա փուլում չունենալով գործին մասնակցող անձի կարգավիճակ, այնուամենայնիվ, չեն զրկվում սնանկության վարույթի այդ փուլին հաջորդող համապատասխան այլ փուլերում ներգրավվելու և **իրենց պահանջները ներկայացնելու և հաստատվելու կամ չհաստատվելու, ինչպես նաև իրենց իրավունքներին և օրինական շահերին առնչվող և այդ փուլերում կայացվող դատական ակտերը բողոքարկելու իրավունքից**:

Ավելին, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սնանկության վարույթի շրջանակներում հավաքագրված միջոցների հաշվին բավարարում ստանալու

առումով հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտավորությունները որևէ առավելություն չունի մյուս պարտավորությունների համեմատությամբ զույր այն փաստի ուժով, որ սնանկության վարույթը հարուցվել և սնանկ ճանաչելու մասին վճիռը կայացվել է իր դիմումի հիման վրա (այս առումով կարևորվում են պարտավորությունների կողմից ներկայացված պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը):

Սահմանադրական դատարանը փաստում է, որ թե՛ հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտավորությունները, թե՛ մյուս պարտավորությունները (հավանական) սնանկության գործով պահանջների ներկայացման և հաստատման փուլում Օրենքի 46-րդ հոդվածի ուժով պարտավոր են դատարանի ներկայացված պահանջի շրջանակներում հստակ նշել այն պարտավորությունները, որից բխում է պահանջը, ինչպես նաև դրա կատարման ժամկետը, պահանջի չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը՝ համապատասխան հաշվարկներով, ինչպես նաև պահանջը հիմնավորող հանգամանքները: Այս առումով Օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասը լուրջ հարկադրված սնանկության դիմում ներկայացրած պարտավորությունները հնարավորություն է ընձեռում միջնորդելու դատարանին՝ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո դիմումը դիտարկել նաև որպես պահանջ, եթե դիմումը համապատասխանում է նաև Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին:

Ասվածն ամենևին չի ենթադրում, որ պահանջների քննության շրջանակներում դատարանը չի անդրադառնալու ի շարս այլ պահանջների, նաև խնդրո առարկա պարտավորություն կողմից ներկայացված պահանջի օրինականությանը, չափին, առաջնահերթությանը, ապահովվածությանը»:

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է. «(...) նոր հանգամանքի հիմքով Դիմողին սնանկ ճանաչելու վերաբերյալ **օրինական ուժի մեջ մտած դատական ակտի նոր հանգամանքի հիմքով վերանայումը** քննարկման առարկա կոնկրետ գործով չէր կարող հետապնդել հարկադրված սնանկության դիմում ներկայացրած պարտավորությունների չափի, առաջնահերթության, ապահովվածության չափի, առաջնահերթության իրավունքների պաշտպանություն

ապահովելու, ենթադրյալ խախտված սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքները վերականգնելու իրավաչափ նպատակ, ուստի՝ տվյալ դեպքում վերջնական դատական ակտի խնդրո առարկա հիմքով վերանայման վարույթի հնարավորությունն այս առումով ևս դուրս էր *res judicata* սկզբունքից բացառություն հանդիսացող բացառիկ դեպքերի ողջ տրամաբանությունից:

(...) Վերոնշյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ համապատասխան օրենսդրական կարգավորումների այնպիսի մեկնաբանումը, որի պայմաններում պարտապանին սնանկ ճանաչելու մասին ուժի մեջ մտած դատարանի վճռի դեմ (ներառյալ նոր հանգամանքի հիմքով) վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունի նաև հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտավորող չհանդիսացող պարտավորող, չի ապահովում Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված և 75-րդ հոդվածով սահմանված պահանջների արդյունավետ կենսագործումը, մասնավորապես՝ **խաթարում է սնանկության գործի կայունությունն ու որոշակիությունը, պարտապանի համար՝ սնանկ ճանաչելու վերաբերյալ դատական ակտի հետևանքների կանխարեւելիությունը՝** հանգեցնելով վերջինիս ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ազատության և սեփականության իրավունքի խախտման: Միևնույն ժամանակ, սնանկության վարույթի շրջանակներում առկա է հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտավորող չհանդիսացող պարտավորողների իրավունքների պաշտպանության հնարավորություն, այդ թվում՝ դիմող պարտավորող՝ պարտապանի նկատմամբ ունեցած պահանջի օրինականությունը վիճարկելու առումով»:

2021 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված 1 անհատական դիմումի հիման վրա 2025 թվականին Սահմանադրական դատարանը տվյալ գործով ընդունել է հետևյալ որոշումը.

«Մարինե Կարյանի և Անժելա Ասրիբաբայանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գոր-

ծով Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1797** որոշմամբ 2025 թվականի սեպտեմբերի 23-ին որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասին, 61-րդ հոդվածին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

ՍԴՈ-1797 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը.
«(...) Սահմանադրական դատարանը սահմանադրաիրավական արժեքների հետ անհանդուրժելի է համարում Եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքի խախտման փաստը հիմնավորող ուժի մեջ մտած ակտերի առկայության պայմաններում այն դատական ակտի գոյության իրավունքը, որը ծնել է իրավունքի նշված խախտումը:

(...)

(...) Ընդ որում՝ Սահմանադրական դատարանն անթույլատրելի է համարում ոչ միայն համապատասխան օրենսդրական կարգավորումների անկատարությունը, այլև իրավակիրառ պրակտիկայում Եվրոպական դատարանի համապատասխան ակտերի կատարումից խուսանավելուն միտված մեկնաբանությունները, որոնք կարող են որևէ կերպ արդարացնել մարդու իրավունքի խախտումը սաղմնավորած դատական ակտի գոյությունը:

(...) **Կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտն անվերապահորեն նոր հանգամանքի հիմքով ենթակա է բեկանման: Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ որևէ օրենսդրական կարգավորում կամ դրան՝**

իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանություն, չի կարող շրջանցել այս սահմանադրաիրավական հրամայականը՝ արգելակելով Եվրոպական դատարանի համապատասխան ակտի հիման վրա դատական ակտի բեկանման գործընթացը՝ առաջնորդվելով իրավունքահեն այն պահանջով, որ իրավաբանական ուժից զուրկ է այն դատական ակտը, որը խախտում է անձի կոնվենցիոն իրավունքը: Հակառակ մոտեցումը նենգափոխում է արդարադատության բուն էությունը՝ ոտնահարելով անձի՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված սահմանադրական իրավունքները՝ այդպիսով անձի մոտ ծնելով հուսահատություն, անվստահություն թե՛ ներպետական, թե՛ միջազգային արդարադատության մարմինների նկատմամբ, ինչն անհամապետելի է և՛ սահմանադրաիրավական, և՛ կոնվենցիոն արժեքանական գաղափարների հետ»:

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է. «(...) Եվրոպական դատարանի՝ կոնվենցիոն իրավունքի խախտման փաստը հաստատող համապատասխան ակտի առկայությունը՝ որպես նոր հանգամանք, հիմք է կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու համար, որին տրամաբանորեն պետք է հաջորդի դատական ակտի վերանայման բուն վարույթը, որի շրջանակներում դատարանը պարտավոր է բեկանել դատական ակտը և (1) ուղարկել համապատասխան դատարան՝ նոր քննության, եթե չկա այն փոփոխելու հնարավորություն, կամ (2) փոփոխել այն, եթե գործով հաստատված փաստերը հնարավորություն են տալիս առանց գործի նոր քննության կայացնելու նոր դատական ակտ:

(...) Այս համապետքստում Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ իրավասու դատարանի կողմից Եվրոպական դատարանի համապատասխան ակտի հիման վրա նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթի շրջանակներում դատական ակտի բեկանման արդյունքում կայացված նոր դատական ակտի եզրափակիչ մասն առնվազն դատավարական իրավունքի մասով կանխորոշված և ուղղորդված չէ. այս գործընթացի շրջանակներում է, որ դատական ակտի բովանդա-

կությունը, այդ թվում՝ եզրափակիչ մասը, անառարկելիորեն փոխկապակցված են խնդրո առարկա հանգամանքների իրավական բովանդակության հետ, և, հետևաբար, այսպես է, որ դատարանը պետք է գնահատի, թե որքանով են սույն հանգամանքներն ազդում կայացվելիք դատական ակտով նախանշվող գործի իրավական բովանդակության և ելքի վրա:

(...) Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոփոխելու հնարավորությունը վերաբերում է միայն դատական ակտը բեկանելուց հետո գործի նոր քննության արդյունքում կայացվող նոր դատական ակտին, իսկ վերջինիս եզրափակիչ մասի չփոփոխվելու հանգամանքը ծանրակշիռ փաստարկներով հիմնավորելու պարտադիր նորմատիվ պահանջը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք:

(...) Այսպիսով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է *ipso facto* (փաստի ուժով) հանգեցնի կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը՝ բացառելով դրա օրինական ուժի մեջ թողնելու որևէ հնարավորություն, հետևաբար՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ օրենսդրի կողմից սահմանված՝ նշված հանգամանքների՝ գործի ելքի վրա չազդելու հիմնավորմամբ դատական ակտը չբեկանելու իրավական հնարավորություն նախատեսող իրավակարգավորումը համահունչ չէ Սահմանադրությամբ ամրագրված՝ անձի դատական պաշտպանության, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու, այդ թվում՝ Եվրոպական դատարան, և արդար դատաքննության իրավունքների երաշխավորման անխախտ հունը սահմանող սահմանադրաիրավական կարգավորումներին:

(...)

(...) Օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով դատարանին լիազորություն է վերապահում Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

նախատեսված հիմքի առկայության դեպքում չբեկանել վերանայվող դատական ակտը՝ խնդրո առարկա հանգամանքներն ըստ էության գործի ելքի վրա ազդեցություն չունենալու հիմնավորմամբ, հակասում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասին, 61-րդ հոդվածին և 63-րդ հոդվածի 1-ին մասին»:

2020 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված 1 անհատական դիմումի հիման վրա 2025 թվականին Սահմանադրական դատարանը տվյալ գործով ընդունել է հետևյալ որոշումը.

«Արամայիս, Համասփյուռ, Արմինե, Արման, Արշակ, Լևոն, Մանուշակ Ալիսանյանների և այլոց դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1769** որոշմամբ 2025 թվականի փետրվարի 11-ին որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող դատարանում գործին չմասնակցած անձի կողմից, որը նույն դատարանի վճռի կամ որոշման կայացման պահին չի ունեցել այդ դատարան դիմելու իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն, Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող դատարանի կողմից խախտված ճանաչվելու դեպքում նոր հանգամանքով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սահմանափակումը ճանաչել Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

ՍԴՈ-1769 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը. «(...) Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում նոր հանգամանքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման ինստիտուտը, պայմանավորված դրա ներգործության սուբյեկտային կազմով, ունի առավելապես «ուղղահայաց», իսկ սահմանափակ դեպքերում նաև՝ «հորիզոնական» ազդեցություն: Նոր հանգամանքով վերջնական դատական ակտի վերանայման «ուղղահայաց» ազդեցությունը տարածվում է այն գործերի վրա, որոնցով նոր հանգամանք հանդիսացող Սահմանադրական դատարանի, Բարձրագույն դատական խորհրդի, դատարանի կամ միջազգային դատարանի որոշումը կամ դատական ակտը կամ վճիռը կայացվել է նոր հանգամանքով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնող անձի մասնակցությամբ վարույթի արդյունքով: Մինչդեռ նոր հանգամանքով վերջնական դատական ակտի վերանայման «հորիզոնական» ազդեցությունը վերաբերում է այն իրավիճակներին, երբ թեպետ նոր հանգամանքի հիմք հանդիսացող որոշմանը կամ դատական ակտին կամ վճռին հանգեցրած վարույթին անձը չի մասնակցել, այդուամենայնիվ, նոր հանգամանքով իր գործով կայացված դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունքից օգտվում է:

(...)

(...) Դիմողների գործերով կայացված դատական ակտերը վերադաս առյալաններում բողոքարկումը, այն դեպքում, երբ նրանք իրենց վիճարկված իրավունքի պաշտպանության հարցում հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար չունեն, ՄԻԵԴ-ի վճռի կամ որոշման հիմքով հիշյալ դատական ակտերի վերանայման համար որպես պարտադիր պայման առաջադրելը հանդիսանում է չափազանցված ձևապաշտություն: Սահմանադրական դատարանի այս մոտեցումն իր արձանագրումն ունի նաև ՄԻԵԴ-ի պրակտիկայում, երբ այն, բազմիցս առերեսվելով անհատական իրավունքների կամ ազատությունների խախտման համարեքստերին, վերահաստատելով ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառման հիմնարար կարևորությունը ՄԻԵԿ-ի համակարգի արդյունավետ գործունեության համար, այդուհանդերձ խիստ առանձնահատուկ

իրավիճակների մասով արձանագրել է, որ ներպետական իրավական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու պահանջը ձևական բնույթ չի կրում, և եթե նման պաշտպանության միջոցը հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար չի ընձեռում (ներառյալ ձևավորված պրակտիկայի պայմաններում ներկայացված բողոքների ելքերի կանխատեսելիությունը) դրա արդյունավետության իմաստով, ապա դրանց չսպառումը չի կարող խոչընդոտ հանդիսանալ ՄԻԵԴ-ի կողմից համապատասխան դիմումի ընդունելիության համար (...)»:

Սույն որոշմամբ Սահմանադրական դատարանը գտել է, որ «(...) հանրության գերակա շահի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման վերաբերյալ գործով գույքի իրավափոխոջ սահմանադրական հիմնական իրավունքի խախտումը վկայող միջազգային դատարանի ակտի հիման վրա միջազգային դատարան չդիմած այլ անձանց վերաբերող՝ նույն բնույթի գործերով օրինական ուժերի մեջ մտած դատական ակտերի վերանայման իրավահարաբերությունները չեն ընդգրկվում Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արդար դատաքնության իրավունքի բաղադրիչ հանդիսացող՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերջնականության (*res judicata*) սկզբունքի տիրույթում:

(...)

(...) վիճարկվող՝ Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը հաշվի չի առնում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման դիմաց «նախնական և համարժեք փոխհատուցում» ստանալու՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված երաշխիքի առանձնահատկությունները, և իր հիմքում ունենալով Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ սեփականության իրավունքի սահմանափակման ընդհանուր կանոնը, բոլոր տեսակի քաղաքացիական իրավահարաբերությունների համար սահմանել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման միևնույն նախապայմաններն ու վերապահումները: Այսինքն՝ Օրենսգրքի 419-րդ հոդվածի

1-ին մասի 2-րդ կետը չի արտացոլում Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված «նախնական և համարժեք փոխհատուցման» իրավունքի բացարձակ բնույթով պայմանավորված (տե՛ս նաև 2023 թվականի նոյեմբերի 7-ի ՍԴՈ-1699 որոշման 5.3-5.8-րդ կետերը)՝ դրա թե՛ նյութական, թե՛ ընթացակարգային (մասնավորապես՝ արդար դատաբնության իրավունքի համապատասխան կառուցակարգերի, ներառյալ՝ նոր հանգամանքով դատական ակտերի վերանայման, միջոցով պաշտպանության) բաղադրիչներին անմիջամերժության սահմանադրական երաշխիքը»:

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ «(...) դատական ակտերի վերջնականության սկզբունքը բոլոր այն գործերով, երբ խնդրո առարկա են Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված «նախնական» կամ «համարժեք» փոխհատուցման իրավունքի իրավական բովանդակությունը կազմող սկզբունքները, որոնց խախտումն արձանագրվել է նոր հանգամանք հանդիսացող միջազգային դատարանի դատական ակտով, չի կարող գերակշռել նույնաբովանդակ այլ հնարավոր խախտումների զոհերի իրավունքի վերականգնման՝ անհատական սահմանադրական «բացարձակ» իրավունքի ապահովման հրամայականի նկատմամբ, քանի որ վերը նշված վերլուծություններն ուղղակիորեն վկայում են այնպիսի էական և ծանրակշիռ հանգամանքների մասին, որոնք դատական ակտի վերջնականության սկզբունքի հաղթահարման համար բավարար հիմքեր են հանդիսանում:

(...) Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման դիմաց «նախնական և համարժեք փոխհատուցման» իրավունքի բացարձակ լինելու վերաբերյալ հայտնած իր դիրքորոշումները, ինչպես նաև սույն որոշմամբ ներկայացված՝ այդ իրավունքին առնչվող խնդրահարույց զարգացումների ողջ նախապայմանությունը, գտնում է, որ սկզբունքորեն անձանց համար պետք է բաց լինի «նախնական և համարժեք փոխհատուցման» իրավունքի պաշտպանություն ստանալու «իրավական հնարավորության պատուհանը»:

(...) Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր այն գործերով,

երբ խնդրո առարկա են Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված «նախնական» կամ «համարժեք» փոխհատուցման սահմանադրական երաշխիքների իրավական բովանդակությունը կազմող սկզբունքները, և նոր հանգամանք հանդիսացող դատական ակտով արձանագրվել է դրանցից որևէ մեկի խախտում, նույնաբովանդակ այլ հնարավոր խախտումների զոհերի վերաբերյալ կայացված դատական ակտերի՝ նոր հանգամանքով վերանայման և վերջիններիս իրավունքների վերականգնման հնարավորության սահմանափակումն անհամաչափ միջամտություն է անձի սեփականության և արդար դատաքննության հիմնական իրավունքներին՝ հակասելով համապատասխանաբար Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ և 63-րդ հոդվածի 1-ին մասերին:

(...)

(...) Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների և վիճարկվող դրույթով նախատեսված սահմանափակումների անվավերության եզրահանգման իրավական ազդեցությամբ՝ նոր հանգամանքով բողոք բերելու իրավունքը պետք է ապահովվի նաև այն անձանց համար, որոնք, մասնակցած չլինելով Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող դատարանում քննված գործին, նույն դատարանի կողմից վճռի կամ որոշման կայացման պահին չեն ունեցել այդ դատարան դիմելու իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն, սակայն միջազգային դատարանի ակտը վերաբերում է իրենց իրավունքների նույնաբովանդակ խախտմանը, այն է՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման դիմաց «նախնական և համարժեք փոխհատուցման» որևէ սկզբունքի խախտման: Միաժամանակ, Սահմանադրական դատարանի սույն դիրքորոշումը չի բացառում օրենսդրի հայեցողությունը՝ այս խմբի մեջ մտնող անձանց մասով նույնպես սահմանելու ժամկետային սահմանափակումներ՝ պայմանով, որ դրանք ողջամտորեն համահունչ կլինեն նրանց կողմից Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավունքի առանձնահատ-

կոլեկտիվներին (...):»:

Դատարանների դիմումների հիման վրա ընդունված՝ Սահմանադրական դատարանի որոշումները

Դատարանների կողմից 2025 թվականին Սահմանադրական դատարան է ներկայացվել 7 դիմում, որից 7-ի քննությունը մերժվել է: 2025 թվականին մերժվել է նաև 2024 թվականին Սահմանադրական դատարան մուտքագրված՝ 2 դիմումի քննությունը, այն է՝ «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 2 և 6-րդ մասերի դրույթների՝ Վճռաբեկ դատարանի 2024 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱԲԴ/0196/01/17 որոշմամբ տրված մեկնաբանությամբ դրանց բովանդակության, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» և «Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դիմումի հիման վրա՝ մինչև 06.04.2023 թ. գործող խմբագրությամբ «Դատախազության մասին» օրենքի 29-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերի քննությունը, իսկ 1 գործի վարույթը մասամբ կարճվել է, այն է՝ «Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ 2021 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի մասով:

Դատարանների կողմից նախորդ տարիներին ներկայացված դիմումների հիման վրա 2025 թվականի ընթացքում Սահմանադրական դատարանում քննության առնված 2 գործով Սահմանադրական դատարանը կայացրել է ներքոգրյալ որոշումները.

1. «ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասի՝

Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝ **ՍԴՈ-1766** որոշմամբ 2025 թվականի հունվարի 14-ին որոշել է.

1. Հայաստանի Հանրապետության ընդհանրական օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր այն մասով, որ որդեգրելու նախապայմանության իրավունք չունեցող անձի և որդեգրվողի միջև տարիքային առավելագույն տարբերությամբ պայմանավորված որդեգրման արգելք սահմանելով, այդ արգելքից որևէ բացառություն չի նախատեսում՝ իրավակիրառին զրկելով յուրաքանչյուր կոնկրետ գործի բոլոր հանգամանքները՝ երեխայի լավագույն շահերը հաշվի առնելու հնարավորությունից»:

ՍԴՈ-1766 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է. «(...) **պետությունը, Սահմանադրությամբ պարտավորվելով երաշխավորել երեխայի իրավունքները, պետք է համապատասխան նախադրյալներ ստեղծի երեխայի կայուն զարգացման համար՝ ապահովելով «երեխայի լավագույն շահերի» երաշխավորման սկզբունքի կիրառումը նրան վերաբերելի բոլոր գործողություններում և կայացվող որոշումներում, այդ թվում՝ որդեգրման իրավունքի իրացման գործընթացներում՝ կարևորելով առանց ծնողական խնամքի մնացած երեխայի՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքը, քանզի առողջ ընտանեկան միջավայրի առկայությունն առանցքային նշանակություն ունի երեխայի կյանքում՝ նրա ֆիզիկական, հուզական, սոցիալական և մտավոր համակողմանի զարգացման հարցում:**

Օրենսդիրը, արտահայտելով իր անվերապահ հավատարմությունը երեխայի իրավունքների գերակայությանը, Օրենսգրքում ամրագրել է նաև երեխաների որդեգրման վերաբերյալ իրավակարգավորումներ՝ որդեգրումը համարելով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման նախապատվելի ձև»:

Սահմանադրական դատարանը փաստել է, որ երեխայի լավագույն շահերը երաշխավորելու սկզբունքն առանցքային է որդեգրման գործընթացում, հետևաբար՝ որդե-

գրման հետ կապված ընթացակարգերը, որդեգրող ծնողների ընտրության հստակ չափորոշիչներն ու կարգը սահմանող իրավադրույթները պետք է նպատակ ունենան ապահովելու, որ որդեգրման գործընթացը ծառայի երեխայի լավագույն շահերին և ապահովի մշտական, լիարժեք, կայուն ընտանեկան միջավայր և կապեր, որոնք երեխային հնարավորություն կընձեռեն մեծանալ առողջ և ապահով միջավայրում ծնողավարման հմտություններ և կարողություններ ունեցող ծնողների հետ: Որդեգրման հետ կապված ցանկացած որոշման կայացման պարագայում թե՛ օրենսդրական, թե՛ իրավակիրառ հարթություններում առաջնահերթությունը տրվում է երեխայի լիարժեք ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացումն ապահովելու հնարավորությունների կենսագործմանը՝ հաշվի առնելով որդեգրման հնարավոր ազդեցությունը երեխայի ապագայի վրա:

Վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է նաև. «Վիճարկվող դրույթով, ըստ էության, սահմանված են **որդեգրողի և որդեգրվող երեխայի միջև տարիքային տարբերության նվազագույն և առավելագույն շեմերը: Տարիքային տարբերությունների առնչությամբ բացառություն է նախատեսված միայն երեխային որդեգրելու նախապատվության իրավունք ունեցող անձանց համար:**

Օրենսդրի կողմից որդեգրողի և որդեգրվողի միջև՝ սույն գործի քննարկման առարկա հանդիսացող առավելագույն տարիքային տարբերության սահմանումը նպատակ ունի հաստատելու և ամրապնդելու երեխայի և որդեգրման ցանկություն հայտնաձևածի միջև կապը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ **ակնհայտ առավելագույն տարիքային տարբերությունը իրապես կարող է խաթարել ծնող-երեխա հոգեհուզական կապի ձևավորումը:** Նման պայմաններում հիմք ընդունելով էթիկական նկատառումներն ու հասարակական արժեքները, ազգաբնակչության կենսամակարդակը, առողջությունը, մահացության ցուցանիշները, ինչպես նաև ուշ ծնողավարման հետևանքները և դրա հնարավոր ազդեցությունը երեխաների ֆիզիկական, հուզական և հոգեբանական զարգացման վրա՝ օրենսդրի կողմից որդեգրել ցանկացող անձանց համար

սահմանվել են տարիքային նվազագույն, ինչպես նաև սույն գործով քննության առարկա առավելագույն շեմերը»:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ երեխայի լավագույն շահերի տեսակետից մտահոգիչ է վիճարկվող դրույթով սահմանված տարիքային տարբերության առավելագույն շեմով պայմանավորված արգելքը, քանի որ դատարաններին զրկում է երեխայի լավագույն շահերի նկատմամբ նման որդեգրման նաև դրական ազդեցությունը գնահատելու, ինչպես նաև բացասական ազդեցության առթիվ մտահոգությունները գործի հանգամանքների համակողմանի վերլուծությամբ փարատելու հնարավորությունից՝ պետությանը զրկելով նաև Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքի ներքո իր բացասական (նեգատիվ) և դրական (պոզիտիվ) պարտավորություններն արդյունավետ իրացնելու հնարավորությունից: Այս համատեքստում Սահմանադրական դատարանը կարևոր է համարել անդրադառնալ այն հարցին, թե ինչպիսի չափանիշներ և ապացուցողական չափորոշիչներ պետք է կիրառվեն դատարանների կողմից իրավաչափ նպատակներից բխող՝ վիճարկվող դրույթով օրենսդրորեն սահմանված արգելքից՝ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասին անմիջական կիրառություն հաղորդելու միջոցով բացառություն անելու համար:

«Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարանի և համապատասխան միջազգային մասնագիտացված կառույցների վերոշարադրյալ դիրքորոշումներով ամրագրված են այն չափանիշներն ու չափորոշիչները, որոնց դատական պրակտիկայում կայուն և կանխատեսելի կիրառմամբ ողջամտորեն հնարավոր կլինի ապահովել, որ վիճարկվող դրույթով սահմանված արգելքից բացառություն անելու՝ երեխայի շահերով պայմանավորված հայեցողությունը չհանգեցնի իրավակիրառի կամայականության: Մասնավորապես՝ յուրաքանչյուր դեպքում պարտադիր կատարման ենթակա պահանջները հետևյալն են՝

ա) վիճարկվող դրույթով սահմանված արգելքը գիտականորեն հիմնավորված եզրակացություններից բխող կանխավարկած է առ այն, որ որպես կանոն, երեխայի լավագույն շահերը պահանջում են, որ որդեգրողի և որդեգրվողի տարիքային առա-

վելագույն տարբերությունը չգերազանցի 50 տարին: Սույն փաստից հետևում է, որ այս կանխավարկածը կարող է հերքվել՝ **1) բացառիկ դեպքերում**, 2) կոնկրետ գործի բոլոր հանգամանքները **լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտելու** արդյունքում կայացված և 3) տվյալ կոնկրետ գործի հանգամանքների բացառիկությունը հատուկ հիմնավորող, այսինքն՝ արգելքի հիմքում ընկած՝ օրենսդրի բոլոր ողջամիտ մտահոգությունները տվյալ կոնկրետ գործի հանգամանքներով փարատվածությունը **պատճառաբանող որոշմամբ**: Այլ խոսքով, եթե կանոնի (արգելքի) համար պահանջվում է պարզապես այդ կանոնի կիրառման փաստական հիմքի (50 տարվա տարբերության) առկայությունը, ապա կանոնից բացառություն անելու համար անհրաժեշտ է, որ դրանից արվող բացառությունը պատճառաբանվի հատուկ կերպով:

բ) նախորդ կետում ներկայացված երաշխիքներից բխող՝ դատական ակտում բոլոր մտահոգությունները փարատելու պարտականությունը ենթադրում է, որ դատարանը պետք է ապացուցված համարի, որ **բացակայում է այն բոլոր բացասական հետևանքների առաջ գալու վտանգը**, որն օրենսդիրը հիմք է համարել նշված արգելքը սահմանելու համար, **ինչպես նաև՝** որ բացառություն անելու արդյունքում, երեխայի լավագույն շահերի տեսակետից, և **միաժամանակ՝ առկա է դրական ազդեցության և/կամ հետևանքների առաջ գալու ողջամիտ հեռանկարը**:

գ) վերը նշված բացասական կամ դրական ազդեցության և/կամ հետևանքների ողջամիտ հեռանկարի, համապատասխանաբար՝ բացակայության կամ առկայության առթիվ արված՝ Դատարանի հետևությունները պետք է հաստատված լինեն միմյանց լրացնող և հակառակը **ողջամիտ կասկածից վեր բացառող** փաստերի համակցությամբ»:

2. «Արագածոտնի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ 2021 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի՝

Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանն իր՝ 2025 թվականի փետրվարի 5-ի **ՍԴՈ-1767** որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը: 2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մասը՝ նույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին հղում պարունակելու մասով, ճանաչել Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 66-րդ հոդվածին, 72 և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր՝ այնքանով, որքանով հնարավոր է համարում քրեական պատասխանատվության՝ օրենքով նախատեսված տարիքին չհասած անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը և այն շարունակելը, ինչպես նաև քրեական վարույթը՝ քրեական օրենքով սահմանված արգելքի խախտմամբ հարուցված քրեական հետապնդման պայմաններում մեղադրյալի դիրքորոշմամբ պայմանավորված՝ ընդհանուր կարգով շարունակելը և, ըստ դատաքննության արդյունքի՝ նրա նկատմամբ մեղադրական վերդիկտ կայացնելը»:

Վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը, այնուհետև այն՝ մեղադրյալի՝ զուտ քրեական պատասխանատվության տարիքը լրացած չլինելու ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու դեմ չառարկելու միջոցով արարքի կատարումն ընդունելու՝ այլևս ապացուցման ոչ ենթակա փաստը քրեական վարույթի շրջանակներում հաստատելու համար անհրաժեշտ և համաչափ միջոց չէ սահմանադրաչափ որևէ նպատակի հասնելու համար:

Մյուս հետևանքը, որը կարող է առաջանալ քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, այնուհետև՝ այն մեղադրյալի համաձայնությամբ զուտ քրեական պատասխանատվության տարիքը լրացած չլինելու ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու արդյունքում, **երեխային հաշվառման վերցնելն է**, որն անհրաժեշտ է դեվիանտ (շեղվող) վարքագիծ դրսևորող երեխա-

ներին պետության հատուկ հսկողության տակ վերցնելու և վերադաստիարակումն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանը նկատում է, սակայն, որ նշված հետևանքը կարող է առաջանալ քրեական վարույթից դուրս կայացվող որոշումների արդյունքում, և զուտ քրեական վարույթում կայացվող՝ տվյալ ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու մասին որոշումը՝ որպես հաշվառման վերցնելու հիմք, որևէ կերպ պարտադիր կամ այլ հիմքերի համեմատ առավել արդյունավետ կամ պիտանի միջոց համարվել չի կարող: Այլ կերպ՝ սույն սահմանադրաիրավական վեճին վերաբերելի հնարավոր նպատակներին կարելի է հասնել անձի իրավունքների նկատմամբ նվազ ծանր միջամտություն իրականացնելով, մասնավորապես՝ առանց 14 տարին չլրացած երեխայի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, իրականացնելու և նրա առարկության բացակայությամբ նշված հետապնդումը դադարեցնելու, կամ առարկության դեպքում՝ վարույթը ընդհանուր կարգով շարունակելու և մեղադրական վերդիկտ կայացնելու դեպքում՝ պատիժ չնշանակելու, ինչի հնարավորությունը նախատեսված է ՔԴՕ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությամբ»:

Սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ քրեական պատասխանատվության տարիքի չհասած երեխայի նկատմամբ քրեական հետապնդում սկսելն ու իրականացնելը պիտանի միջոց չեն սույն գործով իրավաչափորեն հնարավոր որևէ սահմանադրական նպատակի հասնելու համար, ինչպես նաև համաչափ չեն՝ երեխայի լավագույն շահերը հաշվի առնելու, մասնավորապես՝ առանց խիստ անհրաժեշտության երեխային քրեական արդարադատության ոլորտին ներգրավելու տեսանկյունից:

«Սահմանադրական դատարանն (...) գտնում է, որ 14 տարին չլրացած մեղադրյալի՝ իր դեմ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ ուղղված առարկությունը արդյունավետ հակակշռող երաշխիք չէ նրա անմեղության կանխավարկածը սահմանափակելու համար, քանի որ իրավունքից հրաժարվելը չի կարող կատարվել իմացաբար և գիտակցված՝ իր դատավարական գործողությունների բնույթը լիովին հասկանալու և դրանց հետևանքները կանխատեսելու ունակության բացակայության առումով, որպիսի

կանխավարկածն ամրագրված է Քաղաքացիական օրենսգրքի, Քրեական օրենսգրքի և Օրենսգրքի՝ վերը մեջբերված վերաբերելի դրույթներով, հատկապես՝ քրեական պատասխանատվության նվազագույն տարիքի հասած չլինելու փաստով: **Միայն օրենսդիրը կարող է հերքել այդ կանխավարկածը՝ քրեական պատասխանատվության ենթարկելու նվազագույն տարիքը նվազեցնելու միջոցով:**

Ինչ վերաբերում է նրան, թե արդյոք 14 տարին չլրացած երեխայի ունեցած սահմանադրական իրավունքից, այն է՝ անմեղության կանխավարկածի մաս կազմող՝ միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռով իր կողմից արարքի կատարումը հաստատվելու իրավունքից հրաժարվելը, կարող է համարվել գիտակցված, իմացաբար և կամովին արված, եթե այն կատարվում է նույն անձի կողմից՝ քրեական վարույթի ընթացքում քրեական պատասխանատվության տարիքին հասնելուց հետո, ապա Սահմանադրական դատարանը նկատում է, որ վիճարկվող դրույթի պարագայում սահմանափակելի իրավունքի նկատմամբ իրականացվող միջամտության պահին հանդիպակաց արդյունավետ երաշխիքի բացակայությունը չի կարող լրացվել հետագայում, այսինքն՝ քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի կողմից առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքի կատարման համար նրան նաև «հանցանքի» կատարման մեջ մեղադրելու լեգիտիմությունը չի կարող կախված լինել նույն անձի հետագա հասունացումից և, ըստ այդմ՝ ավելի գիտակցված դիրքորոշումներ արտահայտելու կարողությունից:

Ավելին՝ հակառակ մոտեցումը կարող է կամայականությունների պատճառ դառնալ այն առումով, որ քրեական վարույթը կարող է արհեստականորեն ձգձգվել թե՛ քրեական հետապնդման հարուցման և թե՛ հետագայում այն դադարեցնելու պահին՝ անչափահասի՝ քրեական պատասխանատվության տարիքին հասնելն ապահովելու և հետո միայն նրանից «գիտակցված, իմացաբար և կամովին արված» համաձայնություն ստանալու համար:

Նշվածի հիման վրա՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ անձի՝ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված հիմնական

սահմանադրական իրավունքը՝ երեխայի լավագույն շահերը հաշվի առնելն է, ինչը նշանակում է, որ որոշ դեպքերում երեխայի կարծիքը կարող է հակասել իր իսկ լավագույն շահերին: Այլ խոսքով, երեխայի կարծիքը, թեկուզ ազատորեն և աներկբա արտահայտված, չի կարող *a priori* համարվել նրա լավագույն շահի արտացոլումը:

Ողջ վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ փոքրահասակ երեխայի՝ իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկելն արդյունավետ երաշխիք չէ նրա՝ արդար դատաքննության իրավունքի, այդ թվում՝ անմեղության կանխավարկածի՝ միայն դատարանի մեղադրական դատավճռով նրա մեղքը հաստատված լինելու սկզբունքի սահմանափակման համար: Սրանից էլ ուղղակիորեն բխում է, որ Սահմանադրության 66-րդ հոդվածի ուժով՝ Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը չի կարող, հակառակ նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթի, համարվել քրեական հետապնդումը դադարեցնելու ոչ ռեաբիլիտացնող հիմք՝ դրա դեմ առարկելու հնարավորությունն անմեղության կանխավարկածի նշված սահմանափակման նկատմամբ ի սկզբանե համարժեք և արդյունավետ հակակշիռ չհանդիսանալու պատճառով»:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված դիմումների հիման ընդունված Սահմանադրական դատարանի որոշումները

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից 2025 թվականի ընթացքում Սահմանադրական դատարան է ներկայացվել 1 դիմում, որն ընդունվել է քննության, այսպես՝ «Երևանի քաղաքապետի դիմումի հիման վրա՝ «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 8-րդ կետի (տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության մասով), 7-րդ հոդվածի 3-րդ մասի (տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներում վերահսկողական գործառույթներ իրականացնելու մասով) և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ հոդվածի

6-րդ մասի (տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը՝ «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով իրականացնելու մասով)՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը փոխանցվել է 2026 թվական:

II. ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի կողմից ներկայացված դիմումների մասով

Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի կողմից ներկայացված դիմումների հիման վրա Սահմանադրական դատարանում քննության առնված 1 գործի վարույթ 2025 թվականի ընթացքում մասամբ կարճվել է, որի շրջանակներում, մասնավորապես, Սահմանադրական դատարանն արտահայտել է ներքոգրյալ իրավական դիրքորոշումը.

«Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի և 12.06.2024 թ. ընդունված՝ փաստաբանական ծառայություն մատուցողների հարկման ռեժիմի վերանայման մասով «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-285-Ն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին 2025 թվականի հունիսի 10-ի ՍԴԱՌ-94 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է. «Սահմանադրական օրենքի 4-րդ գլխով սահմանված են Սահմանադրական դատարան դիմելու ընդհանուր իրավակարգավորումները, որոնք

հավասարապես վերաբերելի են սահմանադրական վերահսկողության ձևերի շրջանակներում ներկայացվող բոլոր դիմումներին և պարտադիր՝ Սահմանադրական դատարան դիմող բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի համար:

Սահմանադրական դատարան դիմող բոլոր սուբյեկտները պարտավոր են ներկայացվող դիմումների շրջանակներում հիմնավորել բարձրացված հարցերի՝ Սահմանադրական դատարանում քննության ենթակա լինելու, այն է՝ սահմանադրաիրավական բովանդակություն ունեցող վեճ հանդիսանալու հանգամանքը»:

Սույն աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը գտել է, որ անձի իրավական վիճակը բարելավող վերոնշյալ օրենսդրական կարգավորումն ուժի մեջ է մտել Դիմողի կողմից վիճարկվող՝ անվճար իրավաբանական օգնության տրամադրումը ենթադրաբար սահմանափակող իրավակարգավորման՝ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի նոր խմբագրությամբ, ուժի մեջ մտնելու օրվանից՝ 2025 թվականի հունվարի 1-ից: Ուստի՝ 2025 թվականի մարտի 26-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-72-Ն օրենքով ամրագրված վերոնշյալ իրավակարգավորումների համատեքստում՝ Դիմողի կողմից բարձրացված առաջին հարցադրման (Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի ենթադրյալ հակասահմանադրականության մասով) առնչությամբ ենթադրյալ սահմանադրաիրավական բովանդակություն ունեցող վեճը, ըստ էության, սպառվել է:

Ավելին, Սահմանադրական դատարանը գտել է, որ փաստաբանական ծառայություններ մատուցողների կողմից մինչև 2025 թվականի հունվարի 1-ը կնքված պայմանագրերի մասով 2025 թվականի հունվարի 1-ից հետո մատուցվող փաստաբանական ծառայությունների հարկման համակարգի պայմաններում ծառայությունների մատուցման պահի հետ կապված հարցին պետք է լուծում տա իրավակիրառը (հարկային մարմինը/դատարանները):

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ Դիմողի կողմից բարձրացված երկրորդ հարցադրման (Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ենթադրյալ հակասահմանադրականության մասով) առնչությամբ Դիմողը չի դրսևորել պատշաճ ջանասիրություն՝ հիմնավորելու վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը, ինչը, ինքնին, բացառում է բարձրացված հարցի՝ սահմանադրաիրավական վեճի բովանդակություն ունենալը:

Դատարանների կողմից ներկայացված դիմումների մասով

Դատարանների կողմից ներկայացված դիմումների հիման վրա Սահմանադրական դատարանում քննության առնված 1 գործի վարույթ 2025 թվականի ընթացքում մասամբ կարճվել է, որի շրջանակներում, մասնավորապես, Սահմանադրական դատարանն արտահայտել է ներքոգրյալ իրավական դիրքորոշումը.

«Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ 2021 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի մասով, կարճելու մասին 2025 թվականի փետրվարի 5-ին ընդունված ՍԴԱՈ-14 որոշմամբ Սահմանադրական դատարանը վերահաստատել է, որ դատարանների դիմումների հիման վրա Սահմանադրական դատարանի կողմից կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում սահմանադրական արդարադատության իրականացման իմաստավորումը հանգում է դատարանի կողմից ենթադրյալ հակասահմանադրական նորմի հիման վրա կոնկրետ վեճի լուծումը կանխելուն, որպիսի պայմաններում հիմնարար նշանակություն է ձեռք բերում արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավասությամբ օժտված սույն սուբյեկտների կողմից ներկայացված դիմումների շրջանակներում, ի թիվս այլնի, վիճարկվող նորմի՝

Սահմանադրությանն անհամապատասխանությունը հիմնավորող այն բազմաբովանդակ պատճառաբանությունը ներկայացնելը, որը կբացահայտի դատարանի՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկած» ունենալու սահմանադրական պահանջը:

Անդրադառնալով սույն գործով բարձրացված հարցադրմանը՝ Սահմանադրական դատարանը փաստել է, որ դիմումի շրջանակներում Դիմողի պատճառաբանությունների ողջ շղթան առավելապես վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի ենթադրյալ հակասահմանադրականությանը, մինչդեռ նույն հոդվածի 2-րդ մասի ենթադրյալ հակասահմանադրականության մասով Դիմողը համապատասխան հիմնավորումներ չի ներկայացրել, հետևաբար՝ Դիմողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ ներքին համոզման հիման վրա ձևավորված պատճառաբանությունների ու հիմնավորումների բացակայությունը հանգեցնում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկածի» բացառմանը, ուստի՝ այս մասով սույն դիմումով առկա է գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմք:

Անհատական դիմումների հիման վրա գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշ դիրքորոշումներ

1. **«Լույսա Դանիելյանի** դիմումի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին 2025 թվականի փետրվարի 5-ի **ՍԴԱՌ-18** աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը.

«(...) կադարողական թերթը կադարման ներկայացնելու ժամկետային սահմանափակումը որոշիչ է արդար դադաքննության սահմանադրական իրավունքի ապա-

**հովման հարցում՝ երաշխավորելով արդարադատության արդյունավետ, կանխարե-
սելի հասանելիություն դատավարության բոլոր կողմերի համար:**

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքով սահմանված մեկամյա ժամկետը լրանալուց հետո Օրենքի գործող իրավակարգավորումները կողմերին հնարավորություն են տալիս կատարողական թերթ ստանալու նպատակով դիմում ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու համար: Օրենքի 24-րդ հոդվածով դատարանին վերապահված է իրավազորություն՝ վերականգնելու կատարողական թերթ ստանալու համար դիմում ներկայացնելու բաց թողնված ժամկետը: Նման խնդրանքի առկայության դեպքում դատարանը պահանջարկի ոչ ներկայացրած պարճառների հիմնավորվածության և դրանք հարգելի համարելու պարագայում բաց թողնված ժամկետը վերականգնում է (...):

(...)

Վերոգրյալի համապեքստում դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ **Դիմողն օգտվել է վերոնշյալ իրավական հնարավորությունից**, մասնավորապես՝ 2023 թվականի օգոստոսի 31-ին վերջինիս ներկայացուցիչը Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել միջնորդություն՝ «Թիվ 2-5171 քաղաքացիական գործով կատարողական թերթ պահանջելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու, վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ»: Դատարանը թիվ ԵԴ2/0011/15/23 քաղաքացիական գործով 2023 թվականի սեպտեմբերի 18-ին կայացրած որոշմամբ մերժել է նշված միջնորդությունը, որը Դիմողի (վերջինիս ներկայացուցչի) կողմից բողոքարկվել է վերաքննության կարգով: Այս կապակցությամբ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2023 թվականի դեկտեմբերի 18-ին կայացրած որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ անփոփոխ թողնելով թիվ ԵԴ2/0011/15/23 քաղաքացիական գործով Դատարանի համապատասխան որոշումը, իսկ Վճռաբեկ դատարանը 2024 թվականի ապրիլի 9-ին կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողը կարող է Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի և Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման իրավունքի իրացման նպատակով դիմել լիազոր մարմնին՝ դատական ակտից բխող իր իրավունքներն իրացնելու խնդրանքով: Սահմանադրական դատարանը փաստում է, որ դիմումի շրջանակներում Դիմողը որևէ կերպ նշված գործընթացը մեկնարկելու, այն որևէ խոչընդոտի բախվելու վերաբերյալ տվյալներ չի ներկայացրել, որոնք կարող էին վերջինիս մոտ սույն դատական ակտի հարկադիր կատարման անհրաժեշտություն տեսնելու մտավախություններ ձևավորել (...):»:

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ «(...) Դիմողը սույն անհատական դիմումի շրջանակներում **բավարար կերպով իրավաբանորեն չի հիմնավորել իր՝ Սահմանադրության 31, 60, 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ համապատասխանաբար մասնավոր և ընդանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, սեփականության, արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների խախտման փաստը, հետևաբար և՛ տվյալ հիմնական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը**»:

2. «Լիպարիտ Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին 2025 թվականի մայիսի 12-ի **ՍԴԱՈ-74** աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարել ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ «(...) Դիմողն իր սահմանադրական իրավունքի ենթադրյալ խախտումը պայմանավորում է քրեադատավարական միջոցներից զատ այլ՝ քաղաքացիադատավարական պաշտպանության միջոցներով իրավունքի պաշտպանման անհնարինությամբ՝ չնայած այն հանգամանքին, որ քրեական վարույթը կարճելու մասին խնդրո

առարկա որոշումը բողոքարկելիս դատարանները Դիմողին ուղղորդել են մասնավոր իրավունքի ոլորտ՝ վերջինիս պատճառված վնասի հատուցման իրավունքի իրացման համար (...):»:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը.

«Ընդհանուր իրավասության դատարանների (...) դիրքորոշումների առնչությամբ Դիմողի առարկությունները հանգում են նրան, որ հանցագործությամբ իրեն պատճառված վնասի հատուցումը քաղաքացիական դատավարության շրջանակներում, իր գնահատմամբ, արգելափակված է, քանի որ համապատասխան դատավճռի բացակայության պայմաններում Դիմողը դառնում է վնասի հատուցում ստանալու համար էական հանգամանքների ապացուցման չափազանց անհամաչափ բեռի կրող, ինչը, համապատասխանաբար, իր իրավունքների իրացումը մասնավոր ոլորտում դարձնում է անիրատեսական:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողի նման մտահանգումները բավարար չափով չեն հիմնավորում իր՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով ամրագրված սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտումները: Մասնավորապես՝ Դիմողի կողմից որևէ կերպ չի հիմնավորվում, որ մեղադրյալի մահվան հիմքով քրեական հետապնդման դադարեցման ու վարույթի շարունակման օրենսդրական հնարավորության բացակայության արդյունքում տուժողին պատճառված վնասի հատուցման իրավունքի իրացման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների ապացուցումը քաղաքացիական դատավարության շրջանակներում անհնար է:

(...)

Սահմանադրական դատարանի տեսանկյունից ակնհայտ է, որ Դիմողի եզրահանգումն առ այն, որ վիճարկվող դրույթով նախատեսված՝ անձի մահվան հիմքով վարույթի կարճման հնարավորությունը՝ առանց տուժողի իրավունքների հետագա պաշտպանության անհրաժեշտության և դրա հնարավորության հարցերի գնահատման, ինչպես նաև այն, որ հիշյալ հարցում տուժողի դիրքորոշման արտահայտման հնարավորության կառուցակարգերի բացակայությունը սույն գործով հանգեցրել է իր դատական պաշտ-

պանության իրավունքի խախտման, բավարար չափով հիմնավորված չեն: Մասնավորապես՝ Դիմողի նմանօրինակ եզրահանգումները հիմնված են ենթադրությունների և վերացական դատողությունների վրա, որպիսի հանգամանքի մասին է վկայում նաև այն, որ Դիմողը դեռևս չի հայցել իր իրավունքների պաշտպանությունը մասնավոր իրավունքի ոլորտում՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ դա ակնհայտորեն անիմաստ է»:

3. «Աշոտ Հայրապետյանի դիմումի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին 2025 թվականի հունիսի 10-ի **ՍԴԱՈ-93** աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է.

«(...) Դիմողը Սահմանադրական դատարանի առջև, ըստ էության, բարձրացնում է հայցային վաղեմության ժամկետը լրանալու հիմքով վճռի բեկանված լինելու պարագայում վճռի շրջադարձի, այն է՝ ի կատար ածված և բեկանված վճռով ստացած գույքը հայցվոր-պարտավորող կողմից պատասխանող պարտապանին կամ նրա կողմում հանդես եկող երրորդ անձին վերադարձնելը բացառելու հարց, որի համապետքստում իր համար առաջացած բացասական իրավական հետևանքները պայմանավորում է ի կատար ածված վճիռը՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով բեկանվելու և դրանով պայմանավորված՝ վճռի կատարման շրջադարձ կատարվելու հանգամանքով:

Մինչդեռ վերաբերելի դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ թիվ ԵՄԴ/3500/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում Դիմողի օգտին կայացված և ի կատար ածված դատական ակտը բեկանվել է այլ հիմքով (...):»:

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը.

«(...) Դիմողի համար բացասական իրավական հետևանքներն առաջացել են **ոչ թե հայցային վաղեմության ժամկետը, այլ պարտավորող կողմից իր պահանջը պարտապանի ժառանգին կամ ժառանգության բացման վայրի նույնպիսի ներկայացնելու համար օրենքով սահմանված վեցամսյա ժամկետը բաց թողնելու պարճառով:** Այլ

կերպ՝ Դիմողի համար առաջացած բացասական իրավական հետևանքները ոչ թե վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության, այլ հենց Դիմողի կողմից դրսևորված վարքագծի արդյունք են, այն է՝ **Դիմողն իր պահանջը պարտապանի ժառանգին կամ ժառանգության բացման վայրի նոտարին օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում չի ներկայացրել:**

(...)

(...) Հաշվի առնելով, որ ժառանգումը համարվում է ընդհանուր (ունիվերսալ) իրավահաջորդություն՝ պարտադրերի կողմից պահանջների ներկայացման ժամանակային սահմանափակում դնելը կոչված է երաշխավորելու ժառանգի կողմից ժառանգությունն ընդունելու իրավունքի իրացման համար բավարար որոշակիություն և հստակություն, որպեսզի սահմանված ժամկետի ընթացքում ժառանգն արդարացիորեն հնարավորություն ունենա լիարժեք իրացնել իր կամքը ժառանգությունն ընդունելու հարցում, կողմնորոշվել, թե արդյո՞ք ցանկանում է ընդունել ժառանգությունը՝ այդպիսով կրել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածով նախատեսված՝ ժառանգության հաշվին հատուցվող ծախսերը, թե՛ ոչ:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ ժառանգը պետք է հստակ պարկերացում ունենա ժառանգության զանգվածի մասին, քանզի ընդունելով ժառանգությունը՝ ժառանգը ոչ միայն ձեռք է բերում համապատասխան իրավունքներ, այլ նաև պարտավորություն է ստանձնում իրեն անցած գույքի արժեքի սահմաններում պարտասխանավորություն կրելու ժառանգատուի պարտավորությունների համար»:

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը փաստել է, որ «(...) Դիմողը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված վեցամսյա ժամկետը բաց թողնելով, զրկվել է պարտապան-ժառանգատուի ժառանգական զանգվածում ներառված և ժառանգին անցած գույքի արժեքի սահմաններում իր պահանջի բավարարում ստանալու հնարավորությունից (պարտադրերը փաստացի իր վարքագծով, մասնավորապես՝ դրսևորած անգործությամբ հրաժարվել է իր պահանջից), քանզի

նման պահանջ չներկայացնելով, այն, ըստ էության, չի փոխանցվել ժառանգին, հեղափոխությունը՝ վերջինս պարտավորում է առաջ չի «դիրքավորվել իբրև պարտապան»։ Այլ խոսքով՝ պարտավորում կողմից իր պահանջն օրենքով սահմանված ժամկետում և ընթացակարգով չներկայացվելը հանգեցրել է պարտավեր-պահանջ-պարտապան տրամաբանական շղթայի խզման, վերջնարդյունքում՝ պարտապանի ժառանգին տրվելով պահանջը ներկայացվելու անհնարինության, քանզի ժառանգը, ժառանգությունն ընդունելիս համապատասխան պահանջ ներկայացված չլինելու պայմաններում, չի ստանձնել նաև տրվելով պահանջը բավարարելու ժառանգատուի պարտավորությունը, այդպիսով՝ ձեռք չի բերել այդ պահանջի մասով քաղաքացիաիրավական իմաստով պարտապանի կարգավիճակ։

Վերոգրյալի համարեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողը, ձևականորեն բարձրացնելով Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի ենթադրյալ հակասահմանադրականության հարց, ըստ էության, բարձրացնում է իր նկատմամբ վերոնշյալ իրավական կարգավորման կիրառման իրավաչափության հարց՝ հեղափոխությունը իր վարքագծի արդյունքում առաջացած բացասական իրավական հետևանքները սահմանադրական արդարադատության շրջանակներում չեզոքացնելու նպատակով։

4. «Կոնստանտին Իլիոպոլի դիմումի հիման վրա՝ 01.07.1998 թ. ընդունված և 12.01.1999 թ. ուժի մեջ մտած՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին 2025 թվականի հուլիսի 8-ի **ՍԴԱՌ-109** աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը գտել է, որ «(...) **Դիմողը չի զրկվել, ինչպես ինքն է պնդում, Գլխավոր դատախազի՝ խնդրո առարկա որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելու իրավունքից ու հնարավորությունից՝ հաշվի առնելով այն փաստը, որ Վերաքննիչ դատարանի՝ թեկուզ և Գլխավոր դատախազի նշած որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումն առաջին անգամ անմիջապես Վերա-**

քննիչ դատարանի կողմից իրականացվելու պարագայում, վերջինիս՝ փաստի և իրավունքի հարցերով իբրև դատարան ունեցած լիազորվածության շրջանակն ապահովում է այն դատավարական իրավունքների արդյունավետ իրացման ողջամիտ հեռանկարը, որոնք կարող են սահմանափակվել Գլխավոր դատախազի որոշմամբ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից իր համապատասխան լիազորությունների իրացմամբ նշված հեռանկարը չապահովվելու մտահոգություններին, ապա դրանք լիովին կարող են փարատվել Վերաքննիչ դատարանի որոշումները բողոքարկելու և Վճռաբեկ դատարանի կողմից՝ դրանց օրինականության ստուգման ուղղությամբ սեփական լիազորությունների իրացման շրջանակներում:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ խնդրո առարկա՝ հանձնման հարցերով վարույթի՝ օրենսդրի կողմից՝ քրեական դատավարության այլ վարույթների համեմատ, հատուկ կարգավորումներ նախատեսելով, ամրագրվել են, ըստ էության, այդ ընդհանուր, այդ թվում՝ բողոքարկման կարգավորումներից շեղվող կարգավորումներ, որոնք կարելի է համարել որպես դատավարության մասնավոր մասնակիցների իրավունքների որոշակի սահմանափակում:

Այնուամենայնիվ, արձանագրելով սույն գործով խնդրո առարկա այն է՝ հանձնման հետ կապված հարցերի լուծման հրապապության և օպերատիվության կարևորությունը՝ իբրև նշված սահմանափակման լեգիտիմ (իրավագո) նպատակներ, Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դրանք հետապնդելու ուղղությամբ օրենսդրի կարգավորումները՝ հաշվի առնելով նաև Վերաքննիչ դատարանի լիազորությունների ծավալը և վերջինիս որոշումը Վճռաբեկ դատարանում հետագա դատական ստուգման ենթարկելու հնարավորությունը, եղել է համաչափ և անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»:

Տվյալ աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է հետևյալը.

«(...) կիրառման ենթակա օրենքների, մասնավորապես՝ Օրենսգրքի հնարավոր կոլիզիաների լուծումը, եթե դրանք չեն հասնում առերևույթ հակասահմանադրական

հակասության աստիճանի, ընդհանուր իրավասության դատարանների, իսկ վերջնարդյունքում՝ Վճռաբեկ դատարանի խնդիրն է, որը, Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմարիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև ընդգծել, որ չնայած այն հանգամանքին, որ դատական իշխանությունն իրացվում է արդարադատության թյուրիմաց բացի, նաև դատական վերահսկողության իրականացման միջոցով, որի արտահայտություններից է նաև վիճարկվող դրույթի կիրառումը դատական վերահսկողության՝ սույն գործով խնդրո առարկա յուրահատուկ ինստիտուտի կարգավորման փորձում, դատական վերահսկողական ձևերում ու ընթացակարգերում պարտադիր չէ, որ գործեն բուն արդարադատության համար սահմանված բոլոր պահանջներն ու պայմանները: Դրանց մեծ մասն օրենսդիր իշխանության հայեցողության փորձում գտնվող հարաբերություններ են և կարող են ունենալ խնդիրների լուծման օպերատիվությունն ապահովող՝ ընդհանուրից փարբերվող, սակայն սահմանադրականության խնդիր չառաջացնող իրավական լուծումներ:

(...)

Ամբողջ վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմումում վիճարկվող դրույթի և Դիմողի իրավունքների հնարավոր խախտման փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապը բացակայում է, ուստի՝ դիմումն ակնհայտ անհիմն է, ինչը սույն գործի վարույթը կարճելու հիմք է»:

5. ««ՁԵՅ ԷՖ ԹԻ» ՍՊԸ դիմումի հիման վրա՝ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի, այդ թվում նաև՝ 7-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» N 1528-Ն որոշման և 2022 թվականի նոյեմբերի 24-ի

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1528-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1785-Ն որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին 2025 թվականի դեկտեմբերի 9-ի **ՍԴԱՌ-183** աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ «(...) Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով՝ որպես սեփականության օտարման հիմք է ճանաչվում հանրության գերակա շահերի ապահովումը, իսկ օտարվող գույքի սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության սահմանադրորեն ապահովված երաշխիքն օտարվող գույքի դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման տրամադրումն է:

Հանրության շահի՝ մասնավորի նկատմամբ գերակա հանդիսանալու հանգամանքով է պայմանավորված՝ Սահմանադրությամբ պետությանը սեփականության իրավունքին նման ինտեսիվ միջամտություն ցուցաբերելու լիազորության վերապահումը, քանզի նման միջամտությունը սեփականության հարաբերություններին աջակցում է հանրային և մասնավոր շահերի միջև հավասարակշռության հաստատմանը պայմանով, որ նման միջամտության միջոցները պետք է համարժեք լինեն կանխորոշված նպատակին: Միևնույն ժամանակ, այդ համարժեքությունը պահպանվում է **բացառապես՝**

1) հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման ընթացակարգերն ամրագրող խնդրո առարկա Օրենքով նախատեսված հստակ և որոշակի կարգավորումների սահմանմամբ,

2) նախնական և համարժեք փոխհատուցման տրամադրմամբ:

Ընդ որում՝ նշյալ 1-ին պայմանն իր հիմքում ունի 2-րդ պայման-երաշխիքն այնքանով, որքանով օրենսդիրը Սահմանադրության ուժով պարտավոր է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման ընթացակարգային կարգավորումներ նախատեսելիս **մշտապես առաջնորդվել նախնական և համարժեք փոխհատուցման տրամադրման իրավունքի անքակտելիությամբ»:**

Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև հետևյալը.

«(...) Դիմողի կողմից որևէ կերպ չի հիմնավորվում «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի, այդ թվում նաև՝ 7-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» N 1528-Ն որոշման և 2022 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1528-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1785-Ն որոշման ենթադրյալ հակասահմանադրականությունը: Ավելին՝ Դիմողի փաստարկները կրում են **առավելապես վերացական բնույթ՝** չպարունակելով թվարկյալ իրավական ակտերի և, որ առանցքային է՝ դրանցով նախատեսված կոնկրետ իրավակարգավորումների և Դիմողի՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իրավունքների հնարավոր խախտման և/կամ սահմանափակման վերաբերյալ որևիցե անմիջական պատճառահետևանքային կապ՝ ըստ էության բարձրացնելով **վերացական վերահսկողության շրջանակներում գնահատման ենթակա հարցադրումներ:**

Ամբողջ վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմումում վիճարկվող դրույթի և Դիմողի իրավունքների հնարավոր խախտման փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապը բացակայում է, ուստի՝ դիմումն ակնհայտ անհիմն է, ինչը սույն գործի վարույթը կարճելու հիմք է»:

III. ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

**Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ
հինգերորդի կողմից ներկայացված դիմումների մասով**

Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի կողմից Սահմանադրական դատարան ներկայացված դիմումներով 2025 թվականի ընթացքում 1 դիմումով գործի քննությունը մերժվել է, այսպես՝ Սահմանադրական դատարանը **2025 թվականի հուլիսի 3-ի ՍԴԱՈ-107** աշխատակարգային որոշմամբ **մերժել է** «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 276-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը:

Սույն աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) Դիմողի՝ վիճարկվող դրույթի մասով օրենսդրական բացի հակասահմանադրականության վերաբերյալ առաջ քաշած փաստարկները մեծապես հենվում են դատարանների կողմից՝ վիճարկվող նորմի կիրառման դեպքում՝ Օրենսգրքով սահմանված այլ երաշխիքներն ապահովելուց հրաժարվելու կամ դրանք ոչ արդյունավետ կերպով տրամադրելու մտավախության վրա: Մասնավորապես՝ Դիմողը նշում է. «(...) [շարունակում է առկա լինել Օրենսգրքի մեկնաբանման ճանապարհով չլուծվող օրենսդրական բաց, որի պայմաններում **մեղադրյալի իրավունքների պաշտպանության կառուցակարգերի, երաշխիքների բացակայության արդյունքում Օրենսգրքի 276-րդ հոդվածի 3-րդ մասը թույլ է տալիս եզրակացնելու**, որ Օրենսգիրքը հանրային մեղադրողին քրեական գործը Դատարանի վարույթում լինելու պայմաններում՝ **մեքենաբար մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը փոխելու իրավասությամբ է օժտել**», ապա նաև՝ «(...) առկա է սահմանադրականության դեֆիցիտի **հիմնավոր կասկած** Օրենսգրքի 276-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորման տեսանկյունից՝ դրա կիրառման կառուցակարգերի և ընթացակարգային երաշխիքների բացակայության, հանրային մեղադրողի հայեցողության սահմանափակումների և զսպումների բացակայության՝ արդար դատաքննության երաշխիքների հակասության տեսանկյունից, մեղադրյալի սահմանադրական նորմով մեղադրանքից պաշտպանվելու իրավունքների երաշխավորման տեսանկյունից»:

Այս հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արձանագրել, որ՝ 1) ինքնին մեղադրանքի, այդ թվում՝ նոր մեղադրանքի **առաջադրման փաստով** մեղադրյալի դատավարական իրավունքների սահմանափակում տեղի չի ունենում, և 2) նման սահմանափակում կարող է տեղի ունենալ բացառապես այն դեպքերում, երբ մեղադրյալի համար չեն ապահովվում նոր մեղադրանքից պաշտպանվելու բավարար ժամանակ և պայմաններ»:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ վիճարկող դրույթի, այն է՝ Օրենսգրքի 276-րդ հոդվածի 3-րդ մասում Սահմանադրությանը հակասող օրենսդրական բացի առկայության մասին պնդումների հիմքում ընկած մտահոգությունները՝ որպես իրականության ոչ ցանկալի զարգացման հեռանկարի վրա հիմնված կանխատեսական բնույթի դատողություններ, առնվազն վերացական սահմանադրական վերահսկողության մակարդակում փարատված են՝ Դիմողի կողմից վկայակոչված հիմնական սահմանադրական իրավունքների իրացման ողջամիտ հեռանկար տրամադրող՝ Օրենսգրքի այլ կարգավորումներով:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Դիմողը չի ներկայացրել վիճարկվող դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավոր փաստարկներ, իսկ վերջինիս մտահոգությունները՝ կապված իրավակիրառ պրակտիկայում դրանց հնարավոր հակասահմանադրական մեկնաբանության և կիրառման հետ, կարող են սահմանադրական վերահսկողության առարկա դառնալ այն պարագայում, երբ իրավակիրառ պրակտիկան իրապես զարգանա Դիմողի կողմից վկայակոչված հակասահմանադրական հունով:

Դատարանների կողմից ներկայացված դիմումների մասով

Դատարանների կողմից Սահմանադրական դատարան ներկայացված դիմումներով 2025 թվականի ընթացքում մերժվել է **9** դիմումի քննություն: Ընդունված աշխատա-

կարգային որոշումների շրջանակներում Սահմանադրական դատարանն արտահայտել է ներքոգրյալ իրավական դիրքորոշումները, մասնավորապես՝

1. «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 2 և 6-րդ մասերի դրույթների՝ Վճռաբեկ դատարանի 2024 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՔԴ/0196/01/17 որոշմամբ տրված մեկնաբանությամբ դրանց բովանդակության, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին **2025 թվականի հունվարի 21-ի ՍԴԱՈ-6** որոշմամբ Սահմանադրական դատարանն արժևորել է իրավական նորմերի կիրառման առաջնագծում կանգնած դատարանների՝ սահմանադրական արդարադատության միջոցով ենթադրյալ հակասահմանադրական նորմերի հիման վրա կոնկրետ վեճի լուծումը կանխելուն միտված նախաձեռնողականությունն ու, ի թիվս այլնի, նաև այդ գործիքակազմով սահմանադրականության ամրապնդումը: Սահմանադրական դատարանը նշել է, որ Սահմանադրի այս կամքն է ամփոփված դատարաններին սահմանադրական արդարադատություն հայցելու իրավասությամբ օժտելու հիմքում: Այս համատեքստում հիմնաքարային նշանակություն ունի հիշյալ սուբյեկտների կողմից ներկայացված դիմումների շրջանակներում, ի թիվս այլնի, ներկայացնել վիճարկվող նորմերի՝ Սահմանադրությանն անհամապատասխանությունը հիմնավորող այն բովանդակ պատճառաբանությունը, որը կբացահայտի դատարանի՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկած» ունենալու սահմանադրական պահանջը:

Անդրադառնալով ներկայացված դիմումին՝ Սահմանադրական դատարանը փաստել է, որ դիմումը չի պարունակում դատարանի՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ համապատասխան հիմնավորումներ, որոնք բավարար կլինեն Սահմանադրական դատարանին եզրահանգելու, որ դիմումը հաղթահարում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկած» ունենալու սահմանադրաիրավական պահանջը: Այս համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ Բարձր դատարան ներկայացված դիմումի շրջանակներում ներկայացված

հիմնավորումներն առավելապես խարսխված են Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՔԴ/0196/01/17 որոշմամբ վիճարկվող նորմերին տրված մեկնաբանության հետ անհամաձայնությանը, որպիսի հանգամանքն ինքնին չի կարող դիտարկվել իբրև Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ «հիմնավոր կասկած» ունենալու սահմանադրաիրավական պահանջի հաղթահարում:

2. «Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դիմումի հիման վրա՝ մինչև 06.04.2023 թ. գործող խմբագրությամբ «Դատախազության մասին» օրենքի 29-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին **2025 թվականի հունվարի 21-ի ՍԴԱՌ-7** աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ դատարանների՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ կատարված ցանկացած դատողություն չէ, որ ընդգրկվում է Սահմանադրի կողմից Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասում ամփոփված «հիմնավոր կասկած» ունենալու սահմանադրական պահանջի բովանդակային սահմաններում, այլ այն պատճառաբանված դիրքորոշումները, որոնք հանգեցրել են նման դատողության. սա է Սահմանադրի անբեկանելի կամքը, որը սահմանադրականության հաստատման, սույն պարագայում՝ կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի ենթադրյալ հակասահմանադրական դրույթի կիրառման արգելակման գրավականն է: Հակառակ պարագայում ստացվում է, որ դատարանը չի հիմնավորում Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկած» ունենալու սահմանադրաիրավական պատվիրանի կատարումը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ Դիմողի՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ ներքին համոզման հիման վրա ձևավորված պատճառաբանությունների ու հիմնավորումների բացակայությունը հանգեցնում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի

իմաստով «հիմնավոր կասկածի» բացառմանը, ուստի՝ սույն դիմումով առկա է գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմք:

3. «ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին **2025 թվականի փետրվարի 5-ի ՍԴԱՌ-17** աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է. «Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատարանների՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ կատարված ցանկացած դատողություն չէ, որ ընդգրկվում է Սահմանադրի կողմից Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասում ամփոփված «հիմնավոր կասկած» ունենալու սահմանադրական պահանջի բովանդակային սահմաններում, այլ այն պատճառաբանված դիրքորոշումները, այդ թվում՝ մեկնաբանման ողջ մեթոդոլոգիական համալիրի կիրառմամբ, որոնք հանգեցրել են նման դատողությանը. սա է Սահմանադրի անբեկանելի կամքը, որը սահմանադրականության հաստատման, սույն պարագայում՝ կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի ենթադրյալ հակասահմանադրական դրույթի կիրառման արգելակման նախապայման է:

Սույն մոտեցումից տարբերվող գործելակերպը ենթադրում է, որ դատարանը չի հիմնավորում Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկած» ունենալու սահմանադրաիրավական պատվիրանի կատարումը»:

Սահմանադրական դատարանը փաստել է, որ Դիմողը չի ներկայացրել վիճարկվող նորմի մեկնաբանման ողջ մեթոդոլոգիական գործիքակազմի կիրառմամբ Սահմանադրությանը համահունչ մեկնաբանելու անհնարինությունը հիմնավորող իր դատողությունների շղթան, որը պետք է հստակ արտացոլվի սահմանադրական արդարադատություն հայցելու վերաբերյալ դիմումի (որոշման) շրջանակներում: Սահմանադրական

դատարանը վերահաստատում է, որ Բարձր դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների դիմումներին ներկայացվող նման պահանջն ինքնանպատակ չէ: Կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկածի մասին կարող է խոսվել այն պարագայում, երբ դատարանը համոզվի, որ դատական մեկնաբանմամբ անհնար է հաղթահարել կիրառման ենթակա նորմի՝ Սահմանադրությանը հակասության վերաբերյալ հիմնավոր կասկածը:

4. «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին 2025 թվականի փետրվարի 21-ի ՍԴԱՌ-25 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է. «(...) վիճարկվող կարգավորման ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ Դիմողի՝ ներքին համոզման հիման վրա ձևավորված դատողություններն ու հիմնավորումները Բարձր դատարան ներկայացված դիմումով չեն ներկայացրել: Այս առումով Դիմողը սահմանափակվել է սոսկ ՄԻԵԴ-ի՝ հիշյալ գործով դիրքորոշումների վկայակոչմամբ՝ առանց հստակ հիմնավորելու այդ դիրքորոշումների համատեքստում վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը»:

Վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ Դիմողի՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ ներքին համոզման հիման վրա ձևավորված պատճառաբանությունների ու հիմնավորումների բացակայությունը հանգեցնում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկածի» բացառմանը, ուստի՝ սույն դիմումով առկա է գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմք:

5. «Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 8-րդ հոդվածի, դրա հետ

փոխկապակցված 20-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին **2025 թվականի սեպտեմբերի 5-ի ՍԴԱՌ-135** աշխատակարգային որոշմամբ ուսումնասիրելով դիմումը՝ Սահմանադրական դատարանը փաստել է, որ դիմումի շրջանակներում օրենքի ենթադրյալ բացի հարցը բարձրացվում է Սահմանադրական դատարանի առջև առանց այլ վերաբերելի իրավակարգավորումների մեկնաբանման և կիրառման միջոցով նշված ենթադրյալ բացը հաղթահարելու դատարանի փորձի և առանց հիմնավորման, որ դատական մեկնաբանման որևէ մեթոդի կիրառմամբ անհնար է այդ բացի հաղթահարումը՝ առավել ևս այն պայմաններում, երբ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը, իրեն վերապահված սահմանադրական առաքելության շրջանակներում քննելով Հակակոռուպցիոն դատարանի՝ թիվ ՀԿԴ/0067/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով 29.01.2025 թ. վճռի դեմ բերված բողոքը, իրավասու է, իր գնահատմամբ, վիճարկվող դրույթներին Սահմանադրությանը համահունչ մեկնաբանություն հաղորդել: Ավելին, իրավամեկնաբանողական գործիքակազմի կիրառմամբ խնդրո առարկա հարցը կարող է նաև քննության առարկա դառնալ Վճռաբեկ դատարանում՝ իր սահմանադրական առաքելության կենսագործման շրջանակներում:

Ավելին, Սահմանադրական դատարանը փաստել է, որ Դիմողն առանձին դեպքում բարձրացնում է վերացական սահմանադրական վերահսկողության հարցեր, ի շարս այլնի, նաև հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու դեպքում ժամկետի վերականգնման, ընդհատման կամ կասեցման հնարավորությունների բացակայության վերաբերյալ՝ դիմումում առանց բավարար հստակության շարադրելու դրանց՝ սույն գործով կիրառելու անհրաժեշտությունը:

6. «Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին **2025 թվականի սեպտեմբերի 5-ի ՍԴԱՌ-136** աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական

դատարանն անհրաժեշտ է համարել դատարանների ուշադրությունը հրավիրել սկզբունքային նշանակություն ունեցող հարցին առ այն, որ Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Սահմանադիրը դատարաններին վերապահել է բացառապես Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան արդարադատություն իրականացնելու սահմանադրաիրավական գործառույթ, իսկ այն դեպքում, երբ վերջիններս հիմնավոր կասկած ունեն կոնկրետ գործով արդարադատության իրականացման հանգուցալուծումը պայմանավորող նորմերի ենթադրյալ հակասահմանադրականության առնչությամբ, հայցել սահմանադրական արդարադատություն: Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադրությանը համապատասխան արդարադատության իրականացումը, ի թիվս այլնի, ենթադրում է դատարանների կողմից իրավանորմերին Սահմանադրությանը համահունչ մեկնաբանության հաղորդում. Սահմանադրական դատարանն անթույլատրելի է համարել Սահմանադրի կողմից դատարաններին վերապահված դատական մեկնաբանման հիմնարար գործիքակազմի այնպիսի գործադրումը, որը հանգեցնելու է արհեստածին իրավական անորոշության և ենթադրյալ օրենսդրական բացերի առաջացման՝ խաթարելով իրավական անվտանգությունն ու իրավակիրառ պրակտիկայի միասնականությունը:

Ավելին, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասում ամփոփված Սահմանադրի կամքին ուղղակի հակասում է նաև դատարանների՝ վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության հարց Բարձր դատարանի առջև բարձրացնելը. սույն մոտեցումը խաթարում է եռաստիճան դատական համակարգի և Սահմանադրական դատարանի լիազորությունների ներդաշնակ սահմանազատումը՝ հաշվի առնելով դատական մեկնաբանման գործիքակազմով եռաստիճան դատական համակարգի օժտված լինելու հանգամանքը, առավել ևս այն պայմաններում, երբ դատարանները, և մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, ունի անհրաժեշտության պարագայում սեփական պրակտիկան զարգացնելու/փոփոխելու իրավական հնարավորություն:

7. «Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին **2025 թվականի հոկտեմբերի 3-ի ՍԴԱՈ-143** աշխատակարգային որոշմամբ դիմումի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանը գտել է, որ դիմումը չի պարունակում դատարանի՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրության հակասելու վերաբերյալ համապատասխան հիմնավորումներ, որոնք բավարար կլինեն Սահմանադրական դատարանին եզրահանգելու, որ դիմումը հաղթահարում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկած» ունենալու սահմանադրական պահանջը:

«Այս համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ Բարձր դատարան ներկայացված դիմումով Դիմողը սահմանափակվել է թիվ ՇԴ/0764/02/25 քաղաքացիական գործի դատավարական նախապատմության շարադրմամբ, վերաբերելի կարգավորումների և Սահմանադրական դատարանի դիրքորոշումների մատնանշմամբ՝ միաժամանակ ներկայացնելով վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ իրարամերժ դիրքորոշումներ, մասնավորապես՝ **մի կողմից՝** փաստելով, որ՝ «Դատարանի գնահատմամբ հետախուզման փաստի բացահայտման դեպքում անձին անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմումով հարուցված գործի վարույթը կարճելը նախ հետապնդում է հանցավորության բացահայտմանը խոչընդոտելու գործողությունները, ներառյալ՝ թաքնվող անձանց իրավունքի չարաշահումը և հանցավորությամբ ձեռքբերված գույքի շրջանառությունը կանխելու նպատակ: Երկրորդ՝ կարող է հետապնդել պետական ռեսուրսների խնայողության և իրավական որոշակիության ապահովման նպատակ, որտեղ օրենսդիրը կարող էր նկատի ունենալ, թե հետախուզմամբ արդեն իսկ փաստված է, որ անձը ոչ թե անհայտ բացակայում է, այլ թաքնվում է, իսկ այդ պայմաններում դատական քննության անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմի ընդունմամբ օրենսդիրն այլ իրավաչափ նպատակ չէր կարող հետապնդել՝ պայմանավորված քննարկվող իրավահարաբերության բնույթով, իսկ շրջագծված նպատակները իրավաչափ են»,

մյուս կողմից՝ պնդելով, որ՝ «(...) որևէ օրենքով (թեկուզ որևէ իրավական ակտով) նախատեսված չէ անձին անհայտ բացակայող ճանաչելու վճռով պայմանավորված հետախուզման գործողությունը դադարեցնելու հիմք կամ հնարավորություն, ավելին՝ այդպիսի վճիռը չի կարող որևէ ազդեցություն ունենալ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ գործի հանգամանքների պարզման, այդ թվում արարքի որակման տեսանկյունից: Այս պայմաններում Դատարանը գալիս է այն հետևության, որ անձին անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմումով հարուցված գործի քննությունը, թեկուզ և դիմումի բավարարումը, չի կարող որևէ եղանակով խոչընդոտել հանցավորության բացահայտման, ներառյալ՝ դրա որակի վրա: Դատարանը նաև անհրաժեշտ է համարում արձանագրել, որ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված է գույքի արգելադրման ինստիտուտ, ինչը, Դատարանի գնահատմամբ, հանցագործությանմբ (այդ թվում՝ հնարավոր հանցագործությանմբ) ձեռք բերած գույքի շրջանառությունը կանխելու համար բավարար միջոց է, այդ պայմաններում Դատարանը գտնում է, որ չի կարող գոյություն ունենալ իրական մտավախություն այն մասին, թե անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ վճռի առկայությունը կարող է որևէ եղանակով խոչընդոտել հանցավորության բացահայտմանը, հատկապես այն պայմաններում, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ կետով օրենսդիրն արդեն իսկ սահմանել է, որ անձին անհայտ բացակայող ճանաչելու հետևանքները սահմանվում են միայն օրենքով, իսկ ապօրինի ձեռքբերված գույքի շրջանառությունը կանխելու համար, փաստորեն, առկա է այլ գործիքակազմ, որը բավարար և պիտանի միջոց է վիճարկվող նորմի ընդունման նպատակով շրջագծված նպատակին հասնելու համար»:

Վերոգրյալի և դիմումի շրջանակներում վիճարկվող նորմի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ Դիմողի այլ դիրքորոշումների լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ Դիմողի՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակա-

սահմանադրականության վերաբերյալ ներքին համոզման հիման վրա ձևավորված պատճառաբանությունների ու հիմնավորումների բացակայությունը հանգեցնում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկածի» բացառմանը, ուստի՝ սույն դիմումով առկա է գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմք:

8. «Վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի «ա» ենթակետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին 2025 թվականի հոկտեմբերի 3-ի ՍԴԱՈ-144 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է, որ «(...) դատարանների՝ Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը չի ենթադրում Սահմանադրական դատարանի կողմից իրավամեկնաբանողական լայն գործիքակազմով օժտված դատարանների համար վերհանել օրենսդրի կամքը. սույն հարցադրումն առավելապես եռաստիճան դատական համակարգի տիրույթում է:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ դատարանների կողմից Սահմանադրությանը համապատասխան արդարադատության իրականացումը վերջիններիս աննահանջ առաքելությունն ու սահմանադրական պարտքն է, որը, ի թիվս այլնի, ենթադրում է նաև դատարանների կողմից իրավանորմերին՝ Սահմանադրությանը համահունչ մեկնաբանություն հաղորդելու աներկբա պահանջ:

Հիշատակված սահմանադրաիրավական կարգավորումները միտված են բացառապես դատարանների՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի՝ սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկածներ ունենալու կապակցությամբ Սահմանադրական դատարան դիմելու իրավասության իրացման ապահովմանը»:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ Դիմողի՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ ներքին համոզման հիման վրա ձևավորված պատճառաբանությունների ու հիմնավորումների բացակայությունը հանգեցնում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկածի» բացառմանը, ուստի՝ սույն դիմումով առկա է գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմք:

9. «Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 157¹³-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին **2025 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴԱՈ-182** աշխատակարգային որոշմամբ վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարել շեշտել սահմանադրական իրավունքների պաշտպանության երաշխավորման և իրավական անվտանգության ապահովման հարցում դատարանների ունեցած առանձնահատուկ առաքելությունը, քանզի անառարկելի իրողություն է, որ իրավական անորոշության հաղթահարման հարցում դատական իշխանությունն օժտված է առանցքային կարևորություն ունեցող իրավանորմերի դատական մեկնաբանության լծակով, որի՝ Սահմանադրությանը համահունչ կիրառումը սահմանադրականության հաստատման և սահմանադրական իրավակարգի ապահովման գրավականներից է:

«Այս համատեքստում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դատարանների ուշադրությունը հրավիրել սկզբունքային նշանակություն ունեցող այն հարցին, որ Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Սահմանադիրը դատարաններին վերապահել է բացառապես **Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան արդարադատություն իրականացնելու սահմանադրաիրավական գործառույթ**, իսկ այն դեպքում, երբ վերջիններս հիմնավոր կասկած ունեն կոնկրետ գործով **արդարադատության իրականացման հանգուցալուծումը պայմանավորող**

նորմերի ենթադրյալ հակասահմանադրականության առնչությամբ, հայցել սահմանադրական արդարադատություն: Միննույն ժամանակ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադրությանը համապատասխան արդարադատության իրականացումը, ի թիվս այլնի, ենթադրում է դատարանների կողմից իրավանորմերին Սահմանադրությանը համահունչ մեկնաբանության հաղորդում. Սահմանադրական դատարանն անթույլատրելի է համարում Սահմանադրի կողմից դատարաններին վերապահված դատական մեկնաբանման հիմնարար գործիքակազմի այնպիսի գործադրումը, որը հանգեցնելու է արհեստածին իրավական անորոշության և ենթադրյալ օրենսդրական բացերի առաջացման՝ խաթարելով իրավական անվտանգությունն ու իրավակիրառ պրակտիկայի միասնականությունը: Ավելին, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասում ամփոփված Սահմանադրի կամքին ուղղակի հակասում է նաև դատարանների՝ վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության հարց Բարձր դատարանի առջև բարձրացնելը. սույն մոտեցումը խաթարում է եռաստիճան դատական համակարգի և Սահմանադրական դատարանի լիազորությունների ներդաշնակ սահմանազատումը՝ հաշվի առնելով դատական մեկնաբանման գործիքակազմով եռաստիճան դատական համակարգի օժտված լինելու հանգամանքն առավել ևս այն պայմաններում, երբ դատարանները, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, ունեն անհրաժեշտության պարագայում սեփական պրակտիկան զարգացնելու/փոփոխելու իրավական հնարավորություն:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ վերոշարադրյալը հիմք է տալիս պնդելու, որ սույն դիմումը չի բավարարում դրա ընդունելիության չափանիշները»:

Անհատական դիմումների մասով գործի քննությունը մերժելու վերաբերյալ մի քանի դիրքորոշումներ

1. «**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ** դիմումի հիման վրա՝ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին 2025 թվականի փետրվարի 25-ի **ՍԴԱՈ-30** աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը.

«(...) վիճարկվող դրույթի համադրությամբ, գնումների գործընթացի մասնակիցները տվյալ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում կարող են ընդգրկվել միայն այդ դրույթով նախատեսված երկու վավերապայմանների միաժամանակյա առկայության պարագայում՝ 1) պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և 2) հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը մասնակցի կողմից **չվճարելը:**

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ «Գնումների մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը **հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում:** Միաժամանակ, Կառավարության վերոնշյալ՝ թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 9-րդ ենթակետից բխում է, որ **գնման գործընթացի մասնակիցների կողմից հայտի ապահովում ներկայացնելու անհրաժեշտությունը պայմանավորված է գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գնի (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գնի)՝ գնումների բազային միավորի քսանհինգապատիկը գերազանցելու կամ չգերազանցելու հանգամանքով:** Ամրագրված սահմանաչափը, սույն պարագայում՝ 25.000.000 ՀՀ դրամը, գերազանցելու կամ չգերազանցելու դեպքերի համար սահմանված են հստակ և տարբերակված իրավակարգավորումներ, այդ թվում՝ վրա հասնող իրավական հետևանքներ:

Մասնավորապես՝ այն դեպքերում, երբ գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը **չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ինչպես սույն պարագայում է, հայտի ապահովում ներկայացնելու իրավական պահանջը բացակայում է, հետևաբար՝ գնման նման գործընթացում, անգամ վիճարկվող դրույթով ամրագրված առաջին վավերապայմանի առկայության պարագայում, միևնույն է, չի կարող առկա լինել վիճարկվող դրույթով ամրագրված երկրորդ վավերապայմանը, և համապատասխան մասնակիցը որևէ կերպ չի կարող ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:** Գնումների բազային միավորի քսանհինգապատիկը գերազանցելու դեպքերի առնչությամբ, տվյալ պարագայում գնման գործընթացի մասնակցի կողմից հայտի ապահովում ներկայացնելը հստակ ամրագրված իրավական պահանջ է, որի հիման վրա, համապատասխան հիմքերի առկայության դեպքում, հրավերով սահմանված ժամկետում հայտի ապահովման գումարը չվճարելու պարագայում մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողը սույն անհատական դիմումի շրջանակներում **բավարար հիմնավորումներ չի ներկայացրել իր՝ Սահմանադրության 59 և 60-րդ հոդվածներով երաշխավորված հիմնական իրավունքի/ազատության խախտման, հետևաբար՝ դրանց ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության, դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) միջև անմիջական պարզառահեղանքային կապի առկայության վերաբերյալ»:**

2. «Արտակ հաշատրյանի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը

մերժելու մասին 2025 թվականի ապրիլի 29-ի **ՍԴԱՌ-69** աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը.

«(...) Դիմողի կողմից բարձրացվել է Սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) սահմանադրականության հարց, **որի իրավասությունը վերջինս չունի:**

Քննարկվող համալսարանում Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ սույն գործի շրջանակներում Դիմողի կողմից վիճարկվող դրույթը վերջինիս նկատմամբ կիրառվել է Սահմանադրական դատարանի 2024 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴԱՌ-192 աշխատակարգային որոշմամբ, որը, ինչպես արձանագրվել է Սահմանադրական դատարանի (...) ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ, **վերանայման ենթակա չէ:** Ընդ որում՝ Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշման վերանայման ենթակա չլինելու պահանջը բխում է նաև Սահմանադրության և Սահմանադրական օրենքի ընդհանուր տրամաբանությունից: Կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում կարևորվում են սահմանադրական, օրենսդրական այն պահանջները, որոնք որոշակիացնում են անհատական դիմումի թույլատրելի շրջանակները: Դրանց նախատեսումն ինքնանպատակ չէ և միտված է ապահովելու կոնկրետ վերահսկողության առաջ ծառացած խնդիրների լուծումը: Նույնաբնույթ իրավական դիրքորոշում Սահմանադրական դատարանն արտահայտել է նաև 2020 թվականի նոյեմբերի 23-ի ՍԴԱՌ-215 աշխատակարգային որոշմամբ:

Սույն անհատական դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ Դիմողի կողմից վիճարկվող դրույթը չի կիրառվել նրա նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանների կողմից, վիճարկվող դրույթի հետ կապված՝ Դիմողը չի հանդիսացել ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից, վիճարկվող դրույթի կիրառման հետ կապված՝ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում կոնկրետ գործ առկա չէ: Այլ կերպ ասած՝ **Դիմողը չի պահպանել անհատական դիմում ներկայացնելու համար Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջները:**

Վերոշարադրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Դիմողը դուրս է եկել Սահմանադրությամբ և Սահմանադրական օրենքով իրեն վերապահված՝ կոնկրետ գործով իր նկատմամբ կիրառված իրավադրույթի (սույն պարագայում՝ նաև դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) սահմանադրականությունը պարզելու նպատակով Սահմանադրական դատարան դիմելու իրավունքի իրացման թույլատրելի սահմաններից: Մասնավորապես՝ տվյալ պարագայում **բացակայում են Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված համապատասխան պայմանները:**

Հետևաբար՝ **Դիմողն այս առումով Սահմանադրական դատարան դիմելու իրավասու սուբյեկտ չէ:**

Ուստի՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից **ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ Դիմողի՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավասու սուբյեկտ չլինելու հիմքով»:**

3. «Գառնիկ Ստեփանյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 165-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին 2025 թվականի հուլիսի 8-ի **ՍԴԱՈ-115** աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը.

«(...) Դիմողը սույն անհատական դիմումի շրջանակներում վիճարկում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 165-րդ հոդվածի՝ Սահմանադրության 29, 66, 78 և 79-րդ հոդվածներին համապատասխանությունը, որի կապակցությամբ հարկ է արձանագրել հետևյալը.

սույն անհատական դիմումի շրջանակներում Դիմողը վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունն առավելապես քննարկել և դիտարկել է Սահմանադրական

դատարանի 2020 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1507 որոշման լույսի ներքո: Մասնավորապես՝ Դիմողն իր դիրքորոշումները և հիմնավորումներն առավելապես բխեցրել է խնդրո առարկա իրավական վեճի և Սահմանադրական դատարանի վերը նշված որոշման հիմքում ընկած իրավական վեճի, ինչպես նաև այդ կապակցությամբ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների համեմատական վերլուծությունից:

Այնուամենայնիվ, այս համատեքստում Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արձանագրել, որ Սահմանադրական դատարանի՝ խնդրո առարկա 2020 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1507 որոշման ուսումնասիրությունը վկայում է, որ **տվյալ որոշման հիմքում ընկած իրավական վեճը, ինչպես նաև գործի փաստական հանգամանքները լիովին չեն նույնանում սույն անհատական դիմումի հիմքում ընկած իրավական վեճի և գործի փաստական հանգամանքների հետ:**

(...)

(...) Սահմանադրական դատարանի 2020 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1507 որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանը խնդրահարույց է ճանաչել այն իրավիճակը, երբ ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելիս նրա լիազորությունների ժամանակավոր կասեցման հետ մեկտեղ վերջինիս աշխատավարձը վճարվում էր մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում էր գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում, ինչպես նաև մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը վերջինս իրավունք չուներ նշանակվել նոր պաշտոնի կամ իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից: Այսինքն՝ **Սահմանադրական դատարանը տվյալ որոշման շրջանակներում հակասահմանադրական է ճանաչել վիճարկվող դրույթներով սահմանված՝ ոստիկանության ծառայողի նկատմամբ վերը նշված սահմանափակումների կիրառումը:**

Մինչդեռ, սույն անհատական դիմումի շրջանակներում վիճարկվող դրույթով համապատասխան՝ միևնույն համատեքստում սահմանափակումներ առկա չեն: Մասնավորապես՝ վիճարկվող դրույթով առկա չեն քրեական հետապնդում հարու-

ցելու փաստի հիմքով լիազորությունները կասեցված դատավորի վարձատրությանը վերաբերող սահմանափակումներ, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ պաշտոնից ազատվելու վերաբերյալ որևէ արգելք: Հակառակը՝ վիճարկվող՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 165-րդ հոդվածի 2-րդ մասով հստակ ամրագրված է, որ դատավորի լիազորությունները կասեցնելու ընթացքում դատավորն ստանում է հատուցում՝ որպես ոչ աշխատողի մեղքով պարապուրդում գտնվող:

(...)

(...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողը վկայակոչել է վիճարկվող դրույթի հակասությունը Սահմանադրության 66-րդ հոդվածով երաշխավորված՝ անմեղության կանխավարկածին (որպես արդար դատաքննության հիմնական իրավունքի տարր հանդիսացող «սկզբունք-իրավունք»), սակայն բավարար կերպով իրավաբանորեն չի հիմնավորել իր՝ տվյալ հոդվածով երաշխավորված հիմնական իրավունքի խախտման փաստը, հեղուկաբար՝ վիճարկվող դրույթի և համապատասխան հիմնական իրավունքի ենթադրյալ խախտման փաստի միջև պարզառահեղանքային կապի անմիջական առկայությունը:

Անդրադառնալով Դիմողի կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 29, 78 և 79-րդ հոդվածներին՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ տվյալ հոդվածների բովանդակությունից բխում է, որ կոնկրետ վերահսկողության պարագայում դրանք ինքնին չեն կարող դառնալ առանձին քննարկման առարկա, այլ կարող են դիտարկվել միայն որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության սահմանափակման լույսի ներքո:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումով չի հիմնավորվում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 165-րդ հոդվածի հակասությունը Սահմանադրության 66-րդ հոդվածով երաշխավորված հիմնական իրավունքին, հեղուկաբար՝ Սահմանադրության 29, 78 և 79-րդ հոդվածներին:

Այսինքն՝ սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, ինչը գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից մերժելու հիմք է»:

4. «Ա ՏՈՐԱԿԿՈ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործի քննությունը մերժելու մասին 2025 թվականի նոյեմբերի 21-ի **ՍԴԱՈ-165** աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը.

«(...) Դիմողի կողմից բարձրացված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) սահմանադրականության հարցի կապակցությամբ արդեն իսկ առկա է Սահմանադրական դատարանի՝ (...) ՍԴՈ-1783 որոշումը, որով Սահմանադրական դատարանը տվյալ հարցի առնչությամբ արտահայտել է իր իրավական դիրքորոշումները: Նշվածը գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից մերժելու հիմք է:

Միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանվում է, որ նույն հոդվածում նշված գործերով՝ նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, այդ դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, **դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:** Իսկ նույն հոդվածի 11-րդ մասով սահմանվում է, որ նույն հոդվածի 10-րդ մասը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք Սահմանադրական դատարանում դիմումը մուտքագրվելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով

Սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել Սահմանադրական դատարան:

(...)

Վերոգրյալի համադրեքստում հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանի 2025 թվականի մայիսի 20-ի ՍԴՈ-1783 որոշման հիմքում ընկած է այլ անձի՝ Նունե Աթոյանի դիմումը, որը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի դեկտեմբերի 4-ին: Սույն անհատական դիմումի շրջանակներում Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը Վճռաբեկ դատարանի՝ «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշումն է, որը կայացվել է 2025 թվականի ապրիլի 16-ին: Այսինքն՝ այն կայացվել է վերը նշված՝ ՍԴՈ-1783 որոշման հիմքում ընկած՝ Նունե Աթոյանի դիմումը Սահմանադրական դատարան մուտքագրվելուց հետո: Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1783 որոշումը, ինչպես արդեն վերը նշվել է, կայացվել է 2025 թվականի մայիսի 20-ին, իսկ հրապարակվել՝ մայիսի 23-ին, այսինքն՝ սույն անհատական դիմումով Դիմողի կողմից դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելուց շուրջ 1 ամիս հետո: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հրապարակման օրվա դրությամբ Դիմողն ուներ Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու իրավունք, և լրացած չէր վերջինիս կողմից Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու համար սահմանված վեցամսյա ժամկետը: Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողը, Սահմանադրական դատարանի 2025 թվականի մայիսի 20-ի ՍԴՈ-1783 որոշման հիման վրա, ուներ իր նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի՝ նոր հանգամանքի հիմքով վերանայման իրավունք:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա՝ **դիմումում**

առաջադրված հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշում առկա լինելու հիմքով»:

5. «Սպարտակ Սաֆարյանի և Աիդա Սաֆարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին 2025 թվականի դեկտեմբերի 9-ի **ՍԴԱՌ-189** աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը.

*«(...) սույն անհատական դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ **Դիմողները չեն իրացրել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու սահմանադրական պահանջը:***

(...)

(...) սույն գործի փաստերից ակնհայտ է դառնում, որ Դիմողները, ունենալով Վճռաբեկ դատարանի կողմից նշված թերությունները շտկելու իրական հնարավորություն, ձեռնամուխ չեն եղել իրենց իրավունքների պաշտպանությանը և հնգօրյա ժամկետում չեն ուղղել Վճռաբեկ դատարանի կողմից նշված թերությունները: Վերոնշյալի արդյունքում Դիմողների կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության:

Վերոնշյալ հանգամանքի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողները պատշաճ կերպով չեն իրացրել իրենց ենթադրյալ խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման համար օրենսդրությամբ նախատեսված բոլոր հնարավորություններն սպառելու պահանջը, քանի որ Վճռաբեկ դատարանի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 10-ի «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշման կայացման հիմքում ընկած է հենց Դիմողների կողմից իրենց իրավունքների իրացման նպատակով անհրաժեշտ օրենսդրական պահանջները չպահպանելը:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Դիմողները չեն սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ժամանակագրական տեսանկյունից Դիմողների նկատմամբ կայացված վերջին դատական ակտը թիվ ՇԴ/0222/02/25 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2025 թվականի սեպտեմբերի 10-ի որոշումն է, որի բովանդակությունից, մասնավորապես՝ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմքից բխում է, որ այն չի կարող համարվել Դիմողների կողմից բարձրացված հարցի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված՝ ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառում:


Վերոշարադրյալի լույսի ներքո, հաշվի առնելով նաև Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **Դիմողները չեն սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները**, հետևաբար՝ տվյալ պարագայում բացակայում է Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված համապատասխան պայմանը: Ուստի՝ **Դիմողները Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտներ չեն»:**

Հավելված 2

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի ՍԴԱՌ-18

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՄԲ



ԱՂՅՈՒՍԱԿ ՍԴ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍԴ որոշման ընդունման ամսաթիվ և համար	Օրենսդրություն	Հոդված/դրույթ	ՍԴ որոշում և փոփոխության անհրաժեշտություն	Օրենսդրական փոփոխություններ (եթե առկա են)
23 սեպտեմբերի 2025 թվականի ՍԴՌ-1797	Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք	427-րդ հոդվածի 2-րդ մաս	1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասին, 61-րդ հոդվածին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր: 2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ	«ARLIS» իրավական տեղեկատվական հարթակում առկա է ՍԴ որոշման վերաբերյալ համապատասխան նշում, ակտում հավելյալ բովանդակային փոփոխություններ չեն կատարվել:

			կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:	
16 սեպտեմբերի 2025 թվականի ՍԴՈ-1796	2019 թվականի մայիսի 30-ի «Դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզի- կական արատների և հիվանդությունների բացակայության մասին տրամադրվող տեղեկանքի ձևը, դատավորի պաշտոնում նշանակմանը	Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետեր	Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի մայիսի 30-ի «Դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզի- կական արատների և հիվանդությունների բացակայության մասին տրամադրվող տեղեկանքի ձևը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանք տրամադրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի N 1184-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 685-Ն որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերն այնքանով, որքանով	«ARLIS» իրավական տեղեկատվական հարթակում առկա է ՍԴ որոշման վերաբերյալ համապատասխան նշում, ակտում հավելյալ բովանդակային փոփոխություններ չեն կատարվել:

	խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանք տրամադրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի N 1184-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 685-Ն որոշման Հավելված N 1-ի		դրանցով սահմանվում է երկու ականջի կայուն լրիվ խլությամբ կամ խուլիամրությամբ ու երկու աչքերի (բինոկուլյար) կուրությամբ տառապող անձանց համար դատավորի պաշտոնում նշանակվելու բացարձակ արգելք՝ ճանաչել Սահմանադրության 49 և 75-րդ հոդվածներին հակասող և անվավեր:	
1 հուլիսի 2025 թվականի ՍԴՈ-1790	«Պետական սեփականություն հանդիսացող և պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը	թիվ 3 հավելվածով սահմանված՝ «Պետական կառավարման համակարգի մարմինների տիրապետմանը և օգտագործմանը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Պետական սեփականություն հանդիսացող և պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող գույքի օտարման (վաճառքի),	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 11.12.2025թ. թիվ 1822-Ն

	հանդիսացող գույքի օտարման (վաճառքի), օտարման (վաճառքի) մրցույթի և աճուրդի կազմակերպման ու անցկացման կարգերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 882-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 587-Ն որոշում (ընդունվել է 2021 թվականի ապրիլի 15-ին)	հանձնված (ամրացված), պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին, հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող և պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող գույքի օտարման (վաճառքի) մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգի 29-րդ կետ	օտարման (վաճառքի) մրցույթի և աճուրդի կազմակերպման ու անցկացման կարգերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 882-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 587-Ն որոշման թիվ 3 հավելվածով սահմանված՝ «Պետական կառավարման համակարգի մարմինների տիրապետմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված), պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին, հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող և պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող գույքի օտարման (վաճառքի) մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգի 29-րդ կետն այնքանով, որքանով բացառում է	որոշման 1-ին մասի 19-րդ կետին համապատասխան՝ Որոշման N 3 հավելվածի 29-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «29. Եթե հայտերի գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ մրցույթի համար սահմանված պայմանների նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անհամապատասխանությունները վերաբերում են գնային առաջարկին կամ գործարար (ներդրումային) ծրագրով առաջարկվող թվային ցուցանիշներին, որոնք համընկնում են գնային առաջարկում կամ գործարար (ներդրումային) ծրագրում տառերով նշված թվային ցուցանիշներին, ապա հանձնաժողովը 1 աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ
--	---	---	---	--

			պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման (վաճառքի) մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած անձի կողմից գնային առաջարկի մասով թույլ տրված ձևական անհամապատասխանությունը (վրիպակը) շտկելու հնարավորությունը, ճանաչել Սահմանադրության 59 և 75-րդ հոդվածներին հակասող և անվավեր:	հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները: Եթե մասնակիցը սահմանված ժամկետում չտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: Ընդ որում, հանձնաժողովի համար հիմք են ընդունվում թվային ցուցանիշները».
22 ապրիլի 2025	«ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ	94-րդ հոդվածի 6-րդ մաս	1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք»	Օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին

թվականի ՍԴՈ-1780	սահմանադրական օրենք (ընդունվել է 07.02.2018 թ.		սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունը՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս նրա լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումների ընդունման համար այնպիսի կարգավորում նախատեսելու մասով, որի պայմաններում որոշումը կարող է ընդունվել Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի, այսինքն՝ հինգ կողմ ձայներով, ճանաչել Սահմանադրության 49-րդ հոդվածին՝ 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ, 164-րդ հոդվածի 1-ին մասին, 174-րդ հոդվածի 1-3-րդ մասերին, 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և 2-րդ մասին հակասող: 2. Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սահմանադրական	նախադասության՝ 22.04.25 <u>ՍԴՈ-1780</u> որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթը համապատասխանեցվել է Սահմանադրությանը 24.10.25 <u>ՀՕ-335-Ն</u> օրենքի 1-ին հոդվածով. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, իր լիազորությունների իրականացման
-----------------------------	---	--	---	---

			դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետին, 19-րդ մասին և 69-րդ հոդվածի 13-րդ մասին համապատասխան՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ Սահմանադրական դատարանի սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով՝ դրանում նշված օրենսդրական կարգավորման մասով, Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթի իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2025 թվականի հուլիսի 1-ը՝ հնարավորություն ընձեռելով Ազգային ժողովին այն համապատասխանեցնելու սույն որոշմանը:	կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Եթե քվեարկության արդյունքով որևէ որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով Բարձրագույն դատական խորհուրդը որոշում չի ընդունում, ապա համապատասխան միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված, իսկ որոշումը կազմում և
--	--	--	---	---

				ստորագրում են Բարձրագույն դատական խորհրդի այն անդամները, որոնք քվեարկել են միջնորդությունը մերժելու օգտին»:
1 ապրիլի 2025 թվականի ՍԴՈ-1775	«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 11.12.2002 թ.)	12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր	«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը՝ մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի իրացման տարիքային սահմանափակում նախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:	Օրենքի 12-րդ հոդվածի 01.04.25 ՍԴՈ-1775 որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթը համապատասխանեցվել է Սահմանադրությանը 04.12.25 ՀՕ-404-Ն օրենքի 1-ին հոդվածով. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում՝ 1) 1-ին կետից հանել «, եթե ամուսիններից մեկը մինչև 55 տարեկան է (հղիությունը կրելու դեպքում կնոջ տարիքային շեմը սահմանվում է մինչև 53 տարեկան)» բառերը.

				2) 2-րդ կետից հանել «մինչև 55 տարեկան» և «(հղիությունը կրելու դեպքում կնոջ տարիքային շեմը սահմանվում է մինչև 53 տարեկան)» բառերը:
11 փետրվարի 2025 թվականի ՍԴՈ-1769	ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 09.02.2018թ.)	419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող դատարանում գործին չմասնակցած անձի կողմից, որը նույն դատարանի վճռի կամ որոշման կայացման պահին չի ունեցել այդ դատարան դիմելու իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն, Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի՝ Հայաստանի Հանրապետության	«ARLIS» իրավական տեղեկատվական հարթակում առկա է ՍԴ որոշման վերաբերյալ համապատասխան նշում ¹ , ակտում հավելյալ բովանդակային փոփոխություններ չեն կատարվել:

¹ Տե՛ս <https://www.arlis.am/hy/acts/209975>

			վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող դատարանի կողմից խախտված ճանաչվելու դեպքում նոր հանգամանքով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սահմանափակումը ճանաչել Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:	
5 փետրվարի 2025 թվականի ՍԴՈ-1767	ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 30.06.2021 թ.)	12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ ՀԱՓ 12-րդ հոդվածի 4-րդ մաս	Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մասը՝ նույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին հղում պարունակելու մասով, ճանաչել Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 66-րդ հոդվածին, 72 և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր՝ այնքանով, որքանով հնարավոր է համարում քրեական պատասխանատվության՝ օրենքով նախատեսված տարիքին չհասած անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը և այն	«Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 20.01.2026 թ. օրենքի 1-ին հոդվածով Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը «1-9-րդ» բառերից հետո լրացվել է «և 11-րդ» բառերով, իսկ 4-րդ մասում «11» թիվը փոխարինվել է «12» թվով:

			շարունակելը, ինչպես նաև քրեական վարույթը՝ քրեական օրենքով սահմանված արգելքի խախտմամբ հարուցված քրեական հետապնդման պայմաններում մեղադրյալի դիրքորոշմամբ պայմանավորված՝ ընդհանուր կարգով շարունակելը և, ըստ դատաքննության արդյունքի՝ նրա նկատմամբ մեղադրական վերդիկտ կայացնելը:	
14 հունվարի 2025 թվականի ՍԴՈ-1766	ՀՀ ընտանեկան օրենսգրք (ընդունվել է 09.11.2004 թ.)	117-րդ հոդվածի 1-ին մաս	Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր այն մասով, որ որդեգրելու նախապատվության իրավունք չունեցող անձի և որդեգրվողի միջև տարիքային առավելագույն տարբերությամբ պայմանավորված որդեգրման արգելք սահմանելով, այդ արգելքից որևէ բացառություն չի նախատեսում՝ իրավակիրառին զրկելով յուրաքանչյուր կոնկրետ գործի բոլոր հանգամանքները՝ երեխայի լավագույն շահերը հաշվի առնելու հնարավորությունից:	«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 22.10.2025թ. օրենքի 42-րդ հոդվածին համապատասխան՝ «Օրենսգրքի 117-րդ հոդվածում՝ 1) վերնագրի և 1-ին մասի «Որդեգրողի» բառը փոխարինել «Որդեգրել ցանկացող անձի» բառերով. 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին և 1.2-րդ մասերով. «1.1. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տարիքային տարբերության վերին շեմը

				կիրառելի է որդեգրել ցանկացող ամուսիններից միայն մեկի նկատմամբ՝ ըստ ամուսինների ցանկության: 1.2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տարիքային տարբերության վերին շեմը կիրառելի չէ այն դեպքերում, երբ որդեգրումը թխում է երեխայի լավագույն շահերից, և որդեգրել ցանկացող անձը ներկայացրել է բավարար ապացույցներ երեխայի խնամքը և դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու հնարավորության վերաբերյալ:». 3) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:»:
--	--	--	--	--

